



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 88/к  
Часовенски Сърфинг-  
клуб 1906.

891.99  
n-35

# ՂԱՐԱԲԱԼԻ ԸՍՏԱԳԻԵՏԸ

ԿԱՄ

ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ


1752 ԹԻՒԱԿԱՆԻՆ

Պ Ա Ֆ Մ Ա Վ Ա Շ Վ Ե Պ

Պ Լ Ա Ց Օ Ն Զ Ո Ւ Բ Ո Վ Ի



Վ Ա Ֆ Պ Մ Ա Վ Ա Շ Վ Ե Պ Վ Ա Փ Ֆ Վ



Ե Ր Կ Ո Ո Ր Դ Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն



Գ Ի Ե Ն Ա  
Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն  
1906.

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ի Ց

Թարգմանելով ռուսաց լեզուից Պլատոն Զուբովի  
“Ղարաբաղի Աստղագէտը” (Կարածական Աստրոլոգъ)  
անունով վէպը, մէր նպատակն է եղել ծանօթացնել հայ  
հասարակութիւնը այդ գեղեցիկ աշխատութեան հետ, որի  
նիւթը առնուած լինելով Ղարաբաղի մելիքների կեան-  
քից, հարկաւ, մեղ, հայերիս համար, պէտք է շատ հե-  
տաքրիր լինի:

“Ղարաբաղի Աստղագէտը” տպուեցաւ Մոսկուայում  
1834 թուականում, կը նշանակէ, մեզանից 48 տարի  
առաջ: Բայց չնայելով, որ այդ զրքի լոյս տեսնելուց  
անցել է մի ամբողջ կէս դար, այսուամենայնիւ, մենք,  
հայերս, մինչեւ այսօր ոչ միայն նրա բովանդակութեան  
հայերս, մինչեւ չենք, այլ նրա գոյութեան մասին անգամ  
հետ ծանօթ չենք, այլ նրա գոյութեան մասին անգամ  
տեղեկութիւն չունենք: Մենք չգիտենք, որ ռուսաց  
գրականութեան մէջ կայ մի գիրք, որը ամբողջապէս  
նուիրուած է Ղարաբաղում կատարուած տիսուր անցքե-  
րին . . . :

Այժմ ներկայացնելով “Ղարաբաղի Աստղագէտը”  
մէր ընթերցող հասարակութեանը, մեր ցանկութիւնն է՝  
ոչ միայն ծանօթացնել նրան մի գեղեցիկ վիպական ստեղ-  
ծագործութեան հետ, որի մէջ արեւելեան կեանքը նկա-  
ռուած է իր պարզ, նահապետական գոյներով, — այլ  
առաւել թանգարին է մեղ համար այդ գիրքը այն կող-  
մից, որ իբրեւ մի պատմական արձան առ գլուխ ու

Հօն. ցեն Տիֆլիս, 19-го Ноября 1882 г.

թիւն, բաւական ճիշտ կերպով պատկերացնում է մեզ այն աղետալի հանդամանքները, որոնք Ղարաբաղի հայկական իշխանութիւնների քայլայման եւ անկման պատճառը դարձան։ Եւ ինքը, յարգելի հեղինակը, այդ նպատակով է գրել իր վէպը, եւ դրա համար էլ կոչում է նրան «Անգրկով կասեան պատմական վէպ» (Исторический Закавказский роман):

Երեսունական թուականների ռուս գրողներից միայն Զուբօվի նման մէկը կարող էր տալ մեզ մի այսպիսի աշխատութիւն, որ պահանջում է բաւական ծանօթ լինել երկրի հետ, ուր կատարուել են վէպի մէջ նկարագրուած անցքերը, — պահանջում է խորին ուսումնասիրութիւն տեղային ժողովրդների կենցաղավարութեան, բնաւորութիւնների եւ նրանց միմեանց հետ ունեցած պատմական յարաբերութիւնների։ Զուբօվը իր տեղում բաւական ուսումնասիրած էր այդ բոլորը։ Դեռ Պօղոս կայսրի թագաւորութեան վերջերում նա եկաւ Անդրկովկաս եւ մնաց այստեղ մինչեւ Նիկոլայի ժամանակները, եւ նրա աւելի քան երեսուն տարի կեցութիւնը Անդրկովկասում առիթ տուեց այդ հարցասէր զրողին ոչ միայն ծանօթանալ երկրի եւ տեղային աղքարնակութիւնների հետ, այլ գրեց իր օրերում կատարուած ռուսաց արշաւանքների եւ նշանաւոր անցքերի պատմութիւնը, թէ պարսիկների, թէ Վրաստանի եւ թէ կովկասեան լեռնակների վերաբերութեամբ։ Նա թողեց բազմաթիւ աշխատութիւններ, իբրեւ հարուստ նիւթ Անդրկովկասի պատմութեան համար<sup>1</sup>։ Իր աշխատութիւնների մէջ, որ-

տեղ հայերի եւ հայոց երկրի վրայ խօսք է լինում, նա միշտ համակրութեամբ է խօսում։

Կարդալով «Ղարաբաղի Աստղագէտը», ընթերցողը կը նկատէ այն ջերմ համակրութիւնը, որ արտայայտվում է հեղինակի իւրաքանչիւր տողեց հայոց ժողովրդի եւ մելքների վերաբերութեամբ։ Իր վէպի մէջ Զուբօվը շօշափում է այն զբաղի վերքերը, որոնք մեր ազգի պատմական կեանքում շատ անդամ եղել են հայկական իշխանութիւնների անկման եւ մահացութեան պատճառները։ Այդ վերքերն են՝ անմիաբանութիւնը եւ ներքին երկպառակութիւնը։ Յոյց տալ զրանց վեսասակար հետեւանքները, — կացուցանում է «Ղարաբաղի Աստղագէտի» գլւանոր նպատակը։

Ահա ինչ է ասում հեղինակը Վարանդայի իշխան Մելք-Շահնազարեանի բերանով։ «Երկպառակութիւնը, եւ ներքին կոիւնները ոչնչացրին հայոց թագաւորութիւնը, որ մի ժամանակ ծաղկած էր եւ կանգնած էր խիստ նշանաւոր աստիճանի վրայ հին թագաւորութիւնների շարքում։ Մենք, միայն Ղարաբաղի լեռնական մելքներս, պահպանեցինք մեր անկախութիւնը։ Մեր նախնեաց քաղաքործութիւնները յարդուած էին մինչեւ անդամ ՇահԱբաս մեծից . . .։ Բայց ի՞նչով մեր նախնիքը կարողացան պահպանութեամբ պատերազմել այդ մեծ թագաւայնպէս յաջողութեամբ պատերազմել այդ մեծ թագաւայնութիւնով, որ նամայի բոլոր հինգ ինքնութիւնների գանձակցութեամբ։ Նրանց յաջորդները հետեւցին նախորդների օրինակին, եւ մեր հայրենիքի անկախութիւնը պահպանուեցաւ»։ (Եր. 13):

Опыт справочного систематического каталога печатных сочинений о Осетии, справочного систематического каталога печатных сочинений о Кавказе, Закавказье и племенахъ, эти края населяющихъ. Составилъ М. Мян-Кавказъ, Закавказье и племенахъ, эти края населяющихъ. Составилъ М. Мян-Саровъ. Томъ I. С. Петербургъ 1874—1876:

<sup>1</sup> Պատմոն Զուբօվի աշխատութիւնների ցուցակը կարելի է գտնել Մ. Միան-Կավկազի բիբլիոգրաֆիայի հետեւեալ երեսութեամբ 362, 678, 736, 745, 756. „Bibliographia Caucasica et Transcaucasica“.

Նոյն գառն բողոքը յայտնում է հեղինակը եւ Թալիշի մելքի բերանով, երբ Փանահ-խանը արդէն բաւականաչափ բոնացել էր Ղարաբաղի վրայ. «Այդ բողոքի պատճառը մեր ներքին երկպառակութիւններն են: Եթէ մենք միշտ միմեանց հետ կապուած լինէինք, ինչպէս մեր նախնիքը հին ժամանակներում կամ Շահ-Արասի օրերում, այն ժամանակ այդ ջուանշիրցին (Փանահ-խանը) մտածել անգամ չէր համարձակուի լինել Ղարաբաղի իշխողը: Բայց մենք բոլորս, Խամայի հինգ փոքրիկ իշխանութիւններս, — որոնք հայոց հռչակաւոր թագաւորութեան վերջին մնացորդն են, — սկսեցինք անդադար միմեանց հետ վիճել, միմեանց հետ կոռւել, եւ ամեն մի յիմար բանի վրայ, ամեն մի չնչին հարցի պատճառով սկսեցինք միմեանց հետ պատերազմել: Եւ ի՞նչ եղաւ մեր ներքին կորիւների արդիւնքը, — այն, որ շահեցինք մեզ վրայ մի օտար հրամայող...» (Երես 206):

Թէ որքան կորսաաբեր հետեւանքներ է ունենում մի ազգի համար անմիաբանութիւնը եւ ներքին երկպառակութիւնը, — այդ մահացու ախտը շօշափելի կերպով երեւան է հանում յարգելի հեղինակը, ոչ թէ հիմնուելով բանաստեղծական շինձու ասպացոյցների վրայ, այլ ցոյց տալով մի պատմական փաստ, մի կատարուած աղետալի իրողութիւն հայոց կեանքում: Այդ հիմնական միտքը կազմում է Զուբօվի վեպի ամբողջ հիւսուածքը:

Իբրեւ նիւթ իր հետաքրքիր վեպոսանութեան, հեղինակը վեր է առել 1750 թուականներում Ղարաբաղի մէջ կատարուած անցքերը: Այդ ժամանակ Ղարաբաղի նահանգում կային հինգ հայկական իշխանութիւններ, որոնք զետեղուած էին հինգ առանձին գաւառներում եւ բոլորը միասին կոչվում էին Խամայի մելիքութեան:

Թիւնն եր: Պատսպարուած իրանց անմատչելի լեռների մէջ, այդ հինգ գաւառների մելքները (իշխանները) պահպանում էին կատարեալ անկախութիւն: Քանի որ նրանք հաշտ էին, միաբան էին եւ վտանգի ժամանակ օգնում էին միմեանց, այնքան ժամանակ կազմում էին մի ամբողջ միացեալ զօրութիւն, որ սարսափի մէջ էր պահում թշնամիներին, եւ Ղարաբաղը պահպանվում էր որպէս մի բախտաւոր, հզօր իշխանութիւն: Իսկ երբ սկսվում է ներքին երկպառակութիւնը մելքների մէջ, երբ անմիաբանութիւնը ջլատում է նրանց ուժերը, այդ ժամանակ նրանց զօրութիւնը այն աստիճան թուլանում է, որ Փանահ-խանի նման մի հասարակ խաչնարած, մի թափառական ջուանշիրցի, որը մի ժամանակ Սաղիր-Շահի մօտ մունետիկի պաշտօն էր կատարում, իսկ յետոյ մի յանցանքի համար փախաւ եւ Զրաբերդի մելքի մօտ ծառայութեան մէջ մտաւ, — մի այսպիսի բախտախնդիր, օգուտ քաղելով հայոց մելքների անմիաբանութիւնից, այնքան բարձրացաւ, որ մոտածեց նրանց վրայ իշխել: Բայց Փանահ-խանը բանաստեղծական մարդ է, նա պատմական անձնաւորութիւն է:

Զուբօվը ներկայացնում է մեզ մեր պատմութեան տիսուր ստուերազիրը: Գուցէ նա մեր պատմութիւնը ամբողջապէս չէր ուսումնասիրած, գուցէ նա չգիտէր, թէ ինչեր են կատարուել Հայաստանի մէջ աւելի հին դարեւ լում, — բայց այդ մի եւ նոյն է, բաւական է, որ նա ուսումնասիրել էր իրան խիստ մօտ ժամանակների անցքերը:

Պատմական անցքերը նոյնպէս կրկնվում են մի ազգի կեանքում, որպէս կրկնվում են նրանք մի անհատի կեանքում: Զուբօվը վեր է առել միայն 1750 թուականների

Ղարաբաղում կատարուած անցքերը: Բայց այդ մի փոքրիկ կառի մէջ նա ցոյց է տալիս այն բոլոր գժբախտութիւնները, որ կրել է Հայաստանը աւելի հին դարերում: Ո՞վ չգիտէ, որ ամեն անգամ, երբ հայրենիքը վտանգի մէջ է գտնուել, երբ թշնամին կամեցել է բանանալ մեր երկրի վրայ, երբ օտարը մտածել է ոչնչացնել հայկական գահն ու կաղիսնը, — այդ միջոցներում միշտ գտնուել է մի հայ, մի վատ դաւաձան, որը թշնամու ձեռքում դրծիք է դարձել, որը առաջնորդել է նրան եւ իր հայրենիքը մասնել է օտարի ձեռքը:

Մելիք-Շահնազարեանի տիպի մէջ հեղինակը ցոյց է տալիս մեզ մի այսպիսի մարդ:

Մելիք-Շահնազարեանը Վասակի, Մեհրուժանի կամ Վեստ-Սպահանի նման տիպ չէ: Նա բարի մարդ է, նա սիրում է իր հայլենիքը. բայց այնքան կամքի զօրութիւն եւ բնաւ որու իւեան ուժ չունի, որ հայրենիքի ընդհանուր շահերը գերազատէ իր անհնական նեղ կրթերից: Նա միանում է Փանահ խանի հետ, օգնում է նրան, զօրացնում է, բարձրացնում է, միայն թէ կարողանայ նրա ձեռքով ոչնչացնել Ղարաբաղի մնացած հայ մելիքներին:

Քանի քանի անգամ այդ տիսուր երեւոյթը կրկնուել է հայոց պատմական կեանքում, քանի անգամ հայոց իշխանները միացել են օտարների հետ եւ սկսել են իրանց հայրենիքի շահերին հակառակ դորձել, սկսել են ոչնչացնել իրանց նման հայ իշխաններին: Բայց պատմութիւնը միշտ պատճում է այսպիսիններին: Նրանք ոչնչացնելով որիշերին, ոչնչանում են եւ իրանք: Նրանք իրանց նմաններին օտարի Ծի տակ դնելով, իրանք նոյնպէս օտարի ստրուկ են դառնում: Նոյնը պատահեց եւ Մելիք-Շահնազարեանի հետ: Նա սկզբում նազաստեց Փանահ-խանին:

Իշխել Ղարաբաղի անկախ մելիքների վրայ, վերջը ինքն եւս նոյն խանի հպատակը դարձաւ, կողցրեց իր անկախութիւնը: (Երես 228:)

Իր գրքի վիպական մասնում հեղինակը նկարում է հայ ընտանիքի այն գլխաւոր գծերը, որ արտայայտում են նրա թէ առտնին եւ թէ հասարակական բնաւորութիւնը: Ընտանիքի պետը, մեծ հայրը, իշխում է ոչ միայն ընտանիքը կազմող անդամների անձնաւորութեան վրայ, այլ եւ նրանց պրտերի եւ հոգու վրայ: Նա կամենում է իրան հպատակացնել եւ սէրը, որ իւրաքանչիւր անհատի անբռնաբարելի զգացմունքն է: Դեռ ձումշուդը երեխայ էր, երբ հօրեղբայրը (որը երեխայի վրայ հոգաբարձութեան պաշտօն ունէր) նշանադրում է նրա համար իրրեւ ապագայ հարսնացու Թալիշի մելիքի աղջկան, որը դեռ օրօրոցի մէջ կերակրվում էր մօր ստինքով: Ձումշուդը չափահաս դառնալով, բողոք է յայտնում այդ ընտանեկան բնութեան դէմ, եւ սիրելով գեղեցիկ Սալիհին, մերժում է Թալիշի մելիքի դստեր ձեռքը: Այստեղից ծագում է բոլոր ինտրիգան, որ մելիքների երկպառակութեան պատճառն է դառնում: Յոյները կռուում են արօացիների հետ յափշտակուած հեղինէի համար, խակ Ղարաբաղի մելիքները կռուում են միմեանց հետ, այն անպատուութեան համար, որ նշանադրուած աղջիկը մերժուեցաւ:

Ձումշուդի եւ Սալիհայի սիրոյ մէջ հեղինակը կամենում է արտայայտել այն միտքը, թէ ամուսնական երջանկութիւնը կայանում է ոչ թէ նրա մէջ, որ մի իշխանազն երիտասարդ ընտրում է իր կենակից մի օրիորդին նոյնպէս իշխանական ծագումից, — այլ ամուսնութիւնը կարող է բախտաւոր լինել եւ այն ժամանակ, երբ

օրիորդը ընտրվում է ստոր ծագումից, միայն թէ ամուսնացու զցզը կապուած լինէր Շշմարիտ սիրով։ Սալիհան հասարակ հովուի աղջիկ է, բայց հազիւ թէ կարելի է երեւակայել մի այնպիսի անկեղծ, բոցավառ սէր, որ անապատների այդ անմեղ գուստը ունէր դէպի ջումշուդը։

Ընտրելով իր հերոսի, ջումշուդի, համար ամուսին Սալիհային, որը ծագումով թուրք էր եւ կրօնով մահմեդական, հեղինակը, կարծես, այդ օրինակով ցանկանում է խրատ տալ հայերին, թէ ոչ միայն պէտք չէ խորշել այլադաւաններից կամ այլազգիններից, — այլ ընդհակառակն, աննպատակ չէր լինի ամուսնանալ այլասեռ եւ այլակրօն հարեւան ցեղերի աղջիկների հետ, եւ նրանց քրիստոնէութիւն ընդունել տարով, հայացնել։ Սալիհան նոյնպէս քրիստոնէութիւն ընդունեց եւ հայացաւ։

Աւելի խորին խորհուրդ թագնուած է ջումշուդի դաստիարակութեան մէջ։

Ջուրօվի հերոսի, ջումշուդի, հայրենիքը շոջապատուած է մի կիսավայրենի ցեղով, որպէս էին ջուանշիրցինները։ Այդ ժողովուրդը հովուական պարզ կեանք է վարում, ապրում է իր անասուններով եւ աւազակութեամբ։ Նա քաջ է, պատերազմասէր է, զիտէ կոռուելու արհեստը եւ վտանգ է սպառնում ջումշուդի հայրենիքին։ Նրանց հետ միցելու, նրանց յարձակումներից, ասպատակութիւններից անվտանգ պահպանուելու համար, պէտք է ունենալ նոյն լու յատկութիւնները, որ նրանց առաւելութիւններն են կազմում։ այսինքն՝ լինել նրանց նման քաջ, ճարպիկ եւ վարժ կոռուի գործի մէջ։ Հէնց այդ դիտաւորութեամբ Վարանդայի իշխան Մելք-Շահնազարեանը իր եղբօրորդի ջումշուդին չորս տարուայ ժամանակով ուղարկում է ջուանշիրցինների մօտ, ուսումնասի-

քելու նրանց կենցաղավարութեան պայմանները, առվորելու նրանց ճարպիկութիւնները ձիավարութեան եւ զինաշրջութեան մէջ։

Ղարաբաղի հայոց մելիքները ներկայանում են ջուռօվի վէպի մէջ իրեւ քաջ, խստաբարոյ եւ չափազանց վեհանձն մարդիկ, բայց մի եւ նոյն ժամանակ, սաստիկ անքաղաքագէտ եւ զիւրախար մարդիկ։ Որոնց ընդհակառակն, նրանց թշնամին, ջուանշիրցի Փանահ-խանը, ներկայանում է որպէս մեղմ, փափուկ, բայց չափազանց նենդաւոր մարդ։ Դա քաջութեան հետ միացրել է եւ խորամանկութիւնը, այդ պատճառով էլ յաղթող է հանդիսանում։ Քաջութիւնը առանց գիւղօմատիայի կորցնում է իր գորութեան նշանաւոր մասը։

Փանահ-խանի գործիքը, աստղագէտ չասանը, որ պտղաեցնում է իր փորձուած ձեռքում Ղարաբաղի Ճակատագրական աստղը, — այդ մեծ խարեբան ներկայացնում է պարսկական մարմնացած խորամանկութեան կատարելատիպը։

Մի կողմում՝ քաջութիւն եւ պարզամտութիւն, միւս կողմում՝ քաջութիւն նենդաւորութեան հետ միացած, — այդ երկու հակառակ բնաւորութիւնների ընդհարումների մէջ “Ղարաբաղի Աստղագէտի”, յարգելի հեղինակը, կարծես, կամեցել է նկարել այն տիտուր պատկերը, որ մեր ազգի պատմական կեանքում միշտ նրա դժբախտութեան պատճառն է եղել։

Ամեն մի հայ, առանձին վեր առած, խելացի է, գուցէ բաւական խորամանկ է իր մանր հաշիւների մէջ, բայց ազգովին վեր առած, չէ կարելի ասել, թէ խելացի է, այլ ընդ հակառակն, չափազանց զիւրախար եւ միամիտ ժողովուրդ է։

Հայկական բնաւորութեան այդ թցլ կողմերը աւելի  
որոշ գծերով երեւում են “Ղարաբաղի Աստղագէտի”  
մէջ, իսկ մանրամասները կարելի է տեսնել մեր “Ղամա-  
սայի Մելքոնթիւնները”, կոչուած զրքում, որ բովանդա-  
կում է իր մէջ Ղարաբաղի վերջին տարիների պատմու-  
թիւնը:

Այդ երկու աշխատութիւնները անմիջական կատ-  
ունին միմեանց հետ եւ լրացնում են մինը միւսի թերու-  
թիւնները, մէկը, որպէս վէպ, միւսը, որպէս պատմու-  
թիւն: Եւ այդ մոքով էլ մենք թարգմանեցինք “Ղա-  
րաբաղի Աստղագէտը”, համարելով նրան իրբեւ մի օժան-  
դակ կամ լրացուցիչ աղբիւր “Ղամասայի Մելքոնթիւն-  
ները”, կոչուած պատմութեան համար:

Մեր թարգմանութեան մէջ ոչինչ փոփոխութիւններ  
չենք արել, ամենայն հարազատութեամբ հետեւել ենք  
բնագրին: Հեղինակի ծանօթութիւնների հետ աւելացրինք  
եւ մեր ծանօթութիւնները, զրքի մթութիւնները լուսա-  
բանելու համար: Մի քանի աեղերում ուղղեցինք այն  
սխալները, որ հեղինակը անում է թէ զրքի եւ թէ իր  
ծանօթութիւնների մէջ:

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՐԱՓՓԻ



I.

Աստղագէտ:<sup>1</sup>



արանդայի<sup>2</sup> տիրապետող Մելիք-Շահ-նազարեանը<sup>3</sup> մեծ քայլերով  
անցուդարձ էր անում իր հոյակապ ամրոցի սենեալիներից  
մէկի մէջ, որ գտնվում էր Զանախչի<sup>4</sup> բերդում: Երբեմն  
իր հայեացքը դարձնում էր նա զէպի լուսամուտը, որ-  
տեղից երեւում էին Ղարա-  
բաղի անտառապատ լեռները, նայում էր սքանչելի հովտի  
վրայ, որով շրջապատուած էր Զանախչն, նայում էր

<sup>1</sup> Աստղագէտը պարսիկների մէջ համարվում է իսկապէս մի կարեւոր անձնաւորութիւն, որի ցուցմնանքների համեմատ իբր թէ շատ բաներ են կատարվում: Ամեն մի տգէտ, որը ծանօթ էր աստղագէտութեան առաջին կանոնների հետ - միայն, համարում է իրան աստղաբաշխ, անահաւատներին խարելու համար: Ծանօթ. հեղ.

<sup>2</sup> Ղարաբաղի մելիքները, հետեւելով պարսից աւագների սովորութիւններին, իրանց դրանիկների թուռում անհրաժեշտ էին համարում պահել, բացի տան բժշկից, եւ մի աստղագէտ: Վարանդայի իշխան Մելիք-Շահ-նազար Բ-ը ունէր եւ իր դռան ծաղրածուն, որը յայտնի էր անունով

այն հազարաւոր, դպինզգզյն, գեղեցիկ ծաղիկների վրայ, այն շքեղ, գալար բուսականութեան վրայ, որ զարդարում էին այդ հիանալի հովիտը: Դէպի աջ կողմը հոսում էր մի գետ, շըջապատած ձեռատունկ ծառերով, որոնց ճիւ-

**Պըլի - Պօղի (գիծ Պօղոս):** Պըլի - Պօղին Ղարաբաղի Բալակիրեւն է. նրա ասածները, արածները մինչեւ այսօր չեն մնացուել ժողովրդի մէջ: Պարսն Գ. Շերմազանեանցի անեկդոտների հաւաքածուի մէջ կարելի է գտնել բաւական առակներ Պըլի - Պօղի ասածներից: Ծանօթ. թարգ.:

<sup>2</sup> Վարան գ ան գ ա կոչվում է մէկը Ղարաբաղի հինգ վիճակներից, որ կաղմում են խամսային մելիքութիւնները: Վարանդան Մելիք - Ծահնազարեանների ափրապետութեան երկիրն է: Ծանօթ. թարգ.:

<sup>3</sup> Հեղինակը, Խօսելով Վարանդայի իշխանի մասին, չէ յիշում նրա անունը, այլ գործ է ածում նրա տոհմանունը միայն այդ խօսքերով „Վլադիկ Վարանդանի Մեծի Ռազմական Ազգայի ափրապետող Մելիք - Ծահնազարով”, բայց թէ ո՞ր Մելիք - Ծահնազարով — այդ մասին լուսում է: Պատմութիւնից յայտնի է, որ Փանահ - խանի ժամանակակիցը, նրա հետ բարեկամական կապեր հաստատող եւ խամսայի միւս մելիքների հակառակ գործող Վարանդայի ափրապետող Մելիք - Ծահնազար Բ. Ն. էր: Դա հիմնեց Փանահ - խանի համար Ծուշի բերդը, եւ բարձրացնելով նրան մինչեւ ամբողջ Ղարաբաղի իշխողի աստիճանը, հայոց մելիքութիւնների քայլայման պատճառը գարձաւ: (Տես մեր “Խամսայի Մելիքութիւնները” նիւթեր հայոց նոր պատմութեան համար) գրքի Տիրու եւ հետեւեալ գլուխները: Ծան. թարգ.:

<sup>4</sup> Զան ախչի բերգ, հայոց գիւղ է, որը առաջ Վարանդայի տիւրապետողի աթոռանիստն էր, գտնվում է 12 վերստ հեռաւորութեան վրայ Ծուշի բերդից, որը Ղարաբաղի նահանգի այժմեան զլսաւոր տեղն է: Ծան. հեղ.:

Զան ախչի կոչում են այդ բերդին թուրքերը, որ նշանակում է անօթներ շնող. այդ անունը առնուած է բնակիչների արհեստից: Բերդը անտառի մէջ գտնուելով, բնակիչների արհեստն է եղել կերտել իրանց անտառների փայտերից զանազան տեսակ ամաններ եւ անօթներ: Իսկ հայերը կոչում են այդ բերդը Աւետարար անոց: Մինչեւ այսօր պահպանուել է ժիշտութիւնը, իբր թէ Աղուանից Վաշական թագաւորը, քրիստոնէութիւն ընդունելով եւ սուրբ Աւետարանը գիրկն առած, եկաւ, առանձնացաւ այդ բերդում ապաշխարելու համար, եւ այն օրից այդ բերդը կոչուեցաւ Աւետարանոց: Եւ այսօր կարելի է տեսնել այնուղ Մելիք - Ծահնազարեանների ամրոցների աւերակները եւ բերդի աշտարակներն ու ահագին պարիսպները, շատ տեղերում ամբողջութեամբ մասացած: Ծան. թարգ.:

Վերը ցուլանում էին նրա սրբնիթաց ալիքների մէջ: Իսկ գետի միւս կողմում գարձեալ ձգվում էին լեռնային շարքերը, եւ հետզետէ հեռանալով, միախառնվում էին հօրիզոնի հետ: Արեգակը իր փայլուն ճառագայթներով լուսաւորում էր այդ բազմանկար պատկերները: Բայց նրանք չունեին ոչինչ հրապուրանք Մելիք - Ծահնազարեանի համար, որի մռայլուած դէմքը արտայայտում էր հոգեկան սաստիկ անհանգստութիւն:

Երբեմն նա յարդարում էր իր մօրուքն ու բեխերը, եւ անհամբերութեամբ, որ տհաճութեան էր հասնում, նայում էր դէպի մի կարմրաքիթ, կարծահասակ եւ այլսնդակ թուրք, որը ծալապատիկ նստած էր գորգի վրայ, եւ ինչ որ գծագրում էր քարի յատակի վրայ: Այդ վերջինը երբեմն մատը տանում էր դէպի ճակատը, կարծես թէ, մի բանի վրայ մտածում էր: Յետոյ նա վեր էր առնում իր արեւելեան ձեւով թանաքամանը, որ կոչվում էր դըվիթ - զալամ,<sup>1</sup> թաթախում էր նրա մէջ եղեգնեայ գրիչը եւ նրանով ինչ որ գրում էր կոկած թղթի վրայ, որ զրած էր նրա մօտ: Յետոյ կրկին խորասուղվում էր մտածութիւնների մէջ, կամ լուսամնատից նայում էր արեգակին: Երեւում էր, որ նա չէր նկատում մելիքի ոչ անհամբերութիւնը եւ ոչ տհաճութիւնը, եւ մինչեւ անգամ ամենեւին ու շաղրութիւն չէր դարձնում այն բոլորի վրայ, ինչ որ շըջապատում էր նրան:

Մելիքը, վերջապէս յոգնելով սենեակի մէջ մանգալուց, կանգնեց մտայոյգ թուրքի մօտ, նայում էր նրա գալուց, եւ զանազան նկարներով, որի մէջ պահպան կարաբելով, եւ եղեգնեայ գրիչներ եւ կրում են գոտիից քարը տուած: Ծան. հեղ.:

<sup>1</sup> Պըլիթ - զալամ, երկայնաձեւ արկղիկ, որը պատած է ձնարկով եւ զանազան նկարներով, որի մէջ պահպան կարաբելով, եւ եղեգնեայ գրիչներ եւ կրում են գոտիից քարը տուած: Ծան. հեղ.:

աւելի եւ աւելի սաստկացած էր: Վերջը իր համբերութիւնը բոլորովին կորցնելով, նա խեց թուրքի գլխից գտան մորթուց կարած երկայն գտակը, եւ ձգելով յատակի վրայ, բարկութեամբ գոչեց:

— Ո՞վ դու հանաֆի եւ Մալիքի<sup>1</sup> զաւակ, Արուբարի եւ Օմարի<sup>2</sup> ժառանգ, մինչեւ երբ պիտի սպասել տաս քո թուահաշեներին: Երեւի, դու այսօր քեզ նպատակ ես դրեւ բոլորովին գժուացնել ինձ: Ասա, երբ պիտի վերջանան քո յիմարութիւնները:

Այդ յանկարծակի յարձակման միջոցին, սափրած գլխով թուրքը, սարսափելով վեր թռաւ ոտքի վրայ, եւ աչքերը լայն բացած, նայում էր մելիքի վրայ, չը խօսելով ոչ մի բառ: Այդ զրութեան մէջ ունէր նա զարմանալի նմանութիւն կազիի հետ, որը նայում է իր

<sup>1</sup> Հանի Փա էր առաջինը տասն եւ երկու սուրբ իմամներից, որ ապրում էր հիջրէթի առաջին դարում, նոյնպէս եւ Մալիքը:

Այդ երկուսին եւս ատում են Ալիի հետեւողները: Ծանօթ. հեղ.<sup>3</sup> Հանի Փա 12 իմամներից չէ. նա կոչվում է եւ Արու-Հանիփա, իսկական անունը է Նէյման, Սարիթի որդին, բնիկ քիւֆէցի: Դա էր սիւնինինի չորս նշանաւոր աղանդներից մէկի հեղինակը, որի հետեւողները նրա անունով կոչվում են Հանափի: Ապրում էր հիջրէթի առաջին դարում: Ծանօթ. թարգ.: Ծանօթ. թարգ.

Մալիք էր Անասի որդին, մեդինացի. հիմնող սիւնինինի մի այլ աղանդի, որի հետեւողները լարդապեափ անունով կոչվում են մալիքի: Ապրում էր հիջրէթի առաջին դարում: Մալիքը նոյնպէս 12 իմամներից չէ եղել: Ծանօթ. թարգ.:

<sup>2</sup> Աբու-Բաքր եւ Օմար, թէ առաջինը եւ թէ երկրորդը իսլամի խափաններ (Մուհամմէդի փոխանորդներ) էին. որոնց նզովում են Ալիի հետեւողները (չիաները) նրա համար, իբր թէ դրանք բռնութեամբ յափշտակեցին Մուհամմէդի աթոռը, որը իրաւունքով պատկանում էր Ալին: Աբու-Բաքրն էր Աբ-Ղաչափայի որդին, Մուհամմէդից յետոյ առաջին խալիֆան եղաւ. նրա դուստրը, Ալիշան, մարդարէի ամուսինն էր: Իսկ Օմարը էր խաթթարի որդին, Մուհամմէդից յետոյ երկրորդ խալիֆան դարձաւ: Դրա Հափսա անունով աղջիկը նոյնպէս մարդարէի կին էր: Ծան. թարգ.:

աիրոջ վրայ, սպասելով նրա հրամաններին, թէ ե՞րբ պէտք է սկսէ իր խաղերը, հանդիսականներին զուարձացնելու համար: Նրա կերպարանքը այն աստիճան ծաղրաշարժ էր, որ մելիքի բոլոր բարկութիւնը անցաւ, եւ նա սկսեց սաստիկ ծիծաղել:

— Երդվում եմ իմ մօրուքով,<sup>1</sup> գոչեց նա, ձեռքերով փորը բռնելով, — որ մի ամենակորստաբեր աստղ, երեւի, հալածում էր քո մօրը, սիրելի իմ աստղ, պիտի կազմակացել, թէ ի՞նչպէս ձեւակերծեաւ, դժուար է երեւակացել, զուարձում էր մօր արգանգումը, մինչեւ քո ծնունդը: Որովցար քո մօր արգանգումը, մինչեւ քո ծնունդը: Որովցիւ կամակացները է երեւակացել, թէ ի՞նչպէս ձեւակերծեաւ, դժուար է յալանդակ մասնիկները, որ բաղկացնում են քո մարմինը:

— Բայց, մելիք, ես շատ եւ շատ շնորհակալ եմ ձեզանից:

— Ի՞նձանից, ի՞նչու համար:

— Եթէ դուք չլինեիք, ես բոլորովին կորած էի: Թողլ փառք լինի Ալիին եւ սուրբ Յուսէինին:<sup>2</sup> Ես զրանից

<sup>1</sup> Մօրուքով երգուելը հայոց սովորութիւն չէ, այլ միայն համեղականների սովորութիւն է, որոնց մօր մօրուք կրելը առանձին հոգեւոր վարձատրութիւն ունի, բացի գրանից, համարվում է պատուի եւ հասունութեան նշան: Պարակերէն ու իշտափի եւ թուրբերէն աղջիկան նշանակութիւնն է սպիտակ-մօռան աւլու բառերը (որոնց իսկական նշանակութիւնն է սպիտական ածղաղուները, որ արվում են ժողովրդի բուքաւոր) գործ են ածղում որպէս տիտղոսներ, որ արվում են ժողովրդի աւագներին միայն: Պարակից կառափարութեան ամենաանարգական պատիճաւակներից նշան: Աբուկերէն մեկը այն է, երբ կրել է տալիս յանցաւորի ոչ ձեռքը, քիթը, ներից մեկը այն է, երբ կրել է տալիս յանցաւորի ոչ ձեռքը, քիթը, ականջը, այլ նրա մօրուքը: Այդ նշանակում է զրկել նրան պատուից եւ ամեն իրաւունքներից: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Ալին էր Աբու-Թալիքի որդին եւ Մուհամմէդի սիրելին: Մարգարէկ փաթիման անունով գուստարը Ալիի կինն էր: (Ծան. թարգ. .) Իսկ Գուստարը իսլամ առաջին պատուակուեցաւ Ալիի որդին, որը մեռաւ նաև Յուսէինը էր Մուհամմէդի փեսայ Ալիի որդին, որը մեռաւ նաև հատակութեամբ: Ծան. հեղ.:

Յուսէինը նաև հատակուեցաւ Քարբալյում, Բաղդադի քաղաքի մօտ, եազիդի հրամանով. Շիմը կատարեց գահձի պաշտօնը: Այդ դէպքը

յետոց կը մնամ ողջ եւ անվնաս : Վառանդը անցաւ . ես այդ չէի սպասում : Արտասանելով այդ խօսքերը, նա խիստ սառնասրտութեամբ վեր առեց իր գտակը եւ զրեց զլիխն :

— Հսիր, աստղագէտ, բոլոր ցնդած դէրվիշներից<sup>1</sup> ամենախելազարն անգամ պէտք է հազարապատիկ խելացի համարել քեզանից : Դու կամ զառանցութեան մէջ եւ գտնվում, կամ բոլորովին գժուած ես : Ես քեզ խնդրեցի նախագուշակութիւններ անել քո աստղներով, քո երկնային շրջաններով, եւ Աստուած զիաէ, ինչ սատանայական առեղծուածներով, որոնք ինձ բնաւ հասկանալի չեն : Խնդրեցի քեզ՝ յայտնել ինձ, արդեօք հիմայ բարեարման ժամանակ է խօսելու իմ խելազար եղջորորդու հետ, որը իր յիմարութիւններով շատ նման է քեզ : Դու քո գանդաղկոտութեամբ զրդուեցիր իմ տհաճութիւնը : Ես բարկացայ եւ քո գդակը մի կողմ ձգեցի, եւ աշխատեցի հայցուել քեզ այն ընտիր անուններով, որոնց դուք, Ալի հետեւողներդ,<sup>2</sup> շատ չէք սիրում : Իսկ դու

առիթ տուեց ո իւննին երի եւ շիան երի մէջ մշտական ատելութեան, որը շարունակվում է մինչեւ այսօր : Ծան. թարգ. :

<sup>1</sup> Դէր վիշ, այսպէս կոչվում են թուրքաց յայտնի արեղաները, որ ապրում են մուրացկանութեամբ, որոնք զանազան ծամածութիւններ են գործում ողորմութիւն ստանալու համար : Ծան. հեղ. :

Դէր վիշն եր ունեն բոլոր մահմեդական ցեղերը, դրանք մի տեսակ ճզնաւորներ են, որոնք իրանց անձը ենթարկում են ամենախիստ փորձութիւնների . աարբերվում են իրանց սովորութիւններով եւ վարդապետութիւններով : Սեպհականութիւն չունեն, թափառական կեանք են վարում . ոմանք կատարում են հրապարակախօս քարոզիչների պաշտօն, ոմանք երգում են փողոցներում : Առհասարակ գէրփիշներ մարդիկ են . դրանցից են ծագում զանազան աղանդներ, վարդապետութիւններ փիլիսոփայութիւններ արեւելքում . ապրում են մուրացկանութեամբ : Ծան. թարգ. :

<sup>2</sup> Ալի հետեւողներ կոչվում են շիան երը, որոնք լուսաւում են Օմարին, Աբուրաքրին եւ միւս խալիքաներին : (Տես էջ 378 ծան. 2 եւ էջ 379, ծան. 2 : ) Ծան. թարգ. :

այդ բոլորի փոխարէն դեռ եւս շնորհակալութիւն եւ յայտնում ինձ :

— Ի հարկէ շնորհակալ կը լինեմ, պատասխանեց աստղագէտը :

— Եթէ դուք, մելիք, փոքր ի շատէ գիտութիւն ունենայիք երկնային լուսատուների մասին, շատ հաւանական է, որ ինքներդ կը սարսափէիք այն կորստարեր համաստեէ, որ ինքներդ կը սարսափէիք այն կորստարեր համաստեէ, որը վասնդ էր սպառնում ինձ, հէնց մի եւ զութիւնից, որը վասնդ էր սպառնում ինձ, հէնց մի եւ նոյն բոպէում, երբ դուք լուեցիք իմ զլիսարկը : Ես բոլորովին մեռածի նման էի երկիւղից : Բայց ինչով վերջացաւ նա, մեռածի նման էի երկիւղից :

— Շատ հասարակ բանով : Ի՞նչպէս շնորհակալ չլինել ձեզնից : Եթէ դուք իմ գտակը չլինեք, ես, կարելի է, հէնց մի եւ նոյն բոպէում սարսափէիք կերպով հոգիս կը տայի :

— Ծիծաղելի է, շատ ծիծաղելի, ասաց մելիքը, — որ ես կարող լինէի փոխել ճակատագրի վճիռը : Նա պատրաստել էր քեզ համար մահ, իսկ ես քո գտակը վեր առնելով, դու ապատուեցար մահից :

— Ի հարկէ, պատասխանեց աստղագէտը, հանգիստ կերպով տեղաւորուելով գորգի վրայ, եւ ուրախանարով, որ առիթ գտաւ իր իմաստութիւնների վրայ խօսելու : — Լիւցէք, մելիք, մենք, գիտնականներս, հետեւողներ ենք լիւցէք, մելիք, մենք, գիտնականներս, հանգիստ մի մեծ աստղագէտի (որին թող Ալլահը հանգիստ պարգեւէ) եւ կարող ենք ամեն ժամանակ երկնային համաստեղութիւնների շնորհիւ նախագուշակել մարդիկ՝ համաստեղութիւնների շնորհիւ նախագուշակել մարդիկ՝ ների դժբախտութիւնները : Մենք իմանում ենք այդ մոլորակների եւ մեծ աստղների միաւորուելուց կամ նրանց միմեանց հակառակ կանգնելուց : Դրանցից ամեն մէկը ունի առանձին ազգեցութիւն մարդու վեճակի վրայ եւ գտնվում է զանազան յարաբերութիւնների մէջ նրա սեպհական

աստղի հետ։<sup>1</sup> Բայց ի՞նչումն է խսկապէս կայանում աստղների սպառնացող վտանգը, — այդ խիստ հաղիւ անգամ կարելի է ճշութեամբ հասկանալ։ Թէեւ ումանք խարերաներից (թող Ալահը ուղարկէ նրանց վրայ իր նզովքը) կոչելով իրանց աստղագէտներ, որոշ կերպով բայցատրութիւններ են տալիս այդ մասին։ Բայց դա ստութիւն է։ Դժբախտութիւնը, թէ մեծ լինէր նա եւ թէ փոքր, դարձեալ դժբախտութիւն է։ Ես տեսնում էի, որ ինձ սպառնում էր մի դժբախտութիւն, եւ այդ պատճառով խորասուզուած էի մի համատեղութեան դիտողութեան մէջ։ Այդ կատարվում էր խսկ եւ խսկ նցն բոպէում, երբ ձեր բարկութիւնը բորբոքուեցաւ ինձ վրայ։ Եւ հէնց ձեր բարկութիւնն էր չար աստղի ինձ սպառնացող դժբախտութիւնը։ Յետոյ . . .

Յետոյ, տհաճութեամբ կրինեց մելքը, — յետոյ վերջ կը դրուի՝ քո այդ անտանելի շատախօսութիւններին։ Ի՞նչ են գուշակում այդ քո քանոններն ու դժագութիւնները։ Կարող եմ ես այժմ խօսակցել իմ եղօրորդու հետ։ Ասա, կամ այս, կամ ոչ։

— Շնորհ արէք, մելք, մի տաքացէք։ Պէտք է քննել այդ հանգամանքը մանրամասն կերպով։ Շտապելով կարելի է բոլորը փչացնել։ Ես կը սկսեմ . . .

— Եւ ի՞նչ պիտի սկսես, ապա ի՞նչ էիր շինում, երբ դժեր էիր խաղում յատակի վրայ։

— Ես չորրորդ անգամ պատրաստվում էի դիտողութիւններ անել, որպէս զի վերաստուգէի իմ նկատողու-

<sup>1</sup> Մահմեդականները հաւատում են, որ իւրաքանչիւր մարդ ունի իր առանձին աստղը երկնքում, կամ ծնուած է այս եւ այն համատեղութեան ազդեցութեան ներքոյ։ որոնցից կախուած է նրա թէ բախտաւորութիւնը եւ թէ դժբախտութիւնը։ Ծան. թարգ.։

թիւնները։ Այդ միջոցին յանկարծ յայտնուեցաւ հէնց այն չար աստղը, որը խսկապէս իմ անձին էր վտանգ սպառնում։ Ես այնքան վախեցայ, որ թողեցի իմ գուշակութիւնները։

— Շնորհակալ եմ։ Դէ հիմայ նորից սկսիր քո գուշակութիւնները, միայն աշխատիր շուտով վերջացնել։ Եթէ քո աչքերին կրկին անգամ կը յայտնուի այն չար աստղը, խսկոյն ասաւ ինձ, ես կը խլեմ քո գտակը, եւ ամեն ինչ կը փարատուի։

Աստղագէտը մինչեւ անգամ չժպտաց մելքի այդ կատակի վրայ, այլ հանգիստ կերպով նստեց գորգի վրայ, կրկին շարունակելով իր դիտողութիւնները։

Մելքը կրկին սկսեց անցուգարձ անել սենեակի մէջ, կծելով իր ջրթունքները, եւ ինքն իրան մրմթալով։ «Անք եւս խելագարներ ենք, որ հաւատում ենք այդ աստղագէտներին։ Քրիստոնեայ լինելով հանգերձ, հաւատում ենք նախասահմանութեան։ Ահա ինչ է նշանակում պարսիկների ազգեցութիւնը, որ խիստ զգալի է դարձել Հարաբաղի վրայ։ Այժմ մենք մեծ չափով մահմեգական նախապաշարմունքներ ենք ընդունել եւ համարեա կէսմահմեգականներ ենք դարձել։ Դրանով պարսիկները եւ թուրքերը հայոց ամբողջ թագաւորութիւնը կարողացան բաժանել իրանց մէջ։ Մենք, հայոց մելքներս, միայն մնացել ենք անկախ մեր լեռների մէջ։ Այդ խիստ ցաւալի բան է։ Միշտ կորստաբեր է լինում այն թուլութիւնը, երբ մի ժողովուրդ ընդունում է սովորութիւններ օտարներից։ Ես գիտեմ, որ յիմարութիւններ են այդ բոլոր նախագուշակութիւնները, այդ բոլոր աստղաբաշխական համարումները, այսու ամենայնիւ, չեմ վստահանում առանց նրանց վճռել մի որ եւ իցէ գործ, թէեւ շատ հասարակ լինէր նա։ Ինչպէս չեմ վստահանում խօսակցել իմ եղօրորդու հետ, որից կախուած է պատերազմ կամ

Խաղաղութիւն իմ եւ Թալիշ<sup>1</sup> իշխանի մէջ։ Իսկ ի՞նչից  
է առաջ գալիս այդ, — այն մնահաւատութիւնից, թէ  
կարելի է որ լինի փոքր ինչ ճշմարտութիւն աստղա-  
բաշխական ցնորաբանութիւնների մէջ ...

Այդ միջոցին մելքի խորհրդածութիւնները ընդ-  
հատեց աստղագէտը, որը, գժի նման վեր թռչելով,  
բացականչեց.

— Շատապեցէք, շտապեցէք, մելքի, հրամայեցէք  
շուտով կանչել ձեր եղբօրդորդուն։ Եթէ մի քանի րոպէներ  
եւս անցնելու լինեն, շատ ուշ կը լինի։ Միթէ չէք նկա-  
տում, թէ որպիսի չար աստղներ են մօտենում ձեր  
բախտաւոր համաստեղութեանը։

Նա ժամանակ չառեց մելքին խորհրդու եւ իր  
աղաղակով կանչեց բոլոր նօքարներին։<sup>2</sup> Այդ վերջինները  
զարմացած խմբուեցան աստղագէտի շուրջը, որը հազար  
անգամ կրկնեց ջումշուդի<sup>3</sup> անունը։

<sup>1</sup> Թալիշի գաւառը Ղարաբաղի հինգ գաւառներից մէկն է. այս-  
պէս կոչվում է նա Թալիշ կամ Թարիջ բերդի անունով, որը գտնվում է  
Հոռիկի (Երեւի Հռիփոմիկի) վանքի մոտ։ Թալիշի գաւառը կոչվում է  
Եւ Գիւլիստանի գաւառ Գիւլստան բերդի անունով։ Այդ գաւառը  
Մելք-Բեղարեանների տիրապետութեան երկիրն էր։ Ծան. թարգ.։

Թալիշի իշխան կոչում է հեղինակը վերսիշեալ գաւառի տիրա-  
պետողն որը վէպի գլխաւոր գործող անձինքներից մէկն է, բայց ամրող  
վէպի ընթացքում չէ յիշում նրա անունը։ Պատմութիւնից յայտնի է,  
որ Մելք-Ծահնաղար Բ-ի հետ թշնամական յարաբերութիւն ունեցող թա-  
լիշի այդ ժամանակների իշխողը Մելք-Բեղարեան Մելք-Յովսէփին էր,  
որին թուրքերը Մելք-Խւսուր էին կոչում։ (Տես մեր “Խամսայի Մելքու-  
թիւնները” գրքի I, XI, XII եւ հետեւեալ գլուխները։) Ծան. թարգ.։

<sup>2</sup> Կ օքար նշ. ծառայ կամ սպասաւոր։ Ծան. հեղ.։

<sup>3</sup> Զ ու մշուդ գլ Մելք-Ծահնաղար Բ-ի որդին էր։ Եթէ ընդու-  
նենք, որպէս ցոյց տուեցինք 376 էջի Յոդ ծանօթութեան մէջ, որ հեղինակի  
յիշած Մելք-Ծահնաղարեանը Մելք-Ծահնաղար Բ-ն էր, այն ժամանակ  
ջումշուդը կը լինի նրա հարազատ որդին եւ ոչ թէ եղար որդին։ Բայց  
թէ Փանահ-խանի հետ բարեկամական յարաբերութիւններ ունեցող վա-

— Կանչեցէք իմ եղօրորդուն, հրամայեց մելքը, —  
յայտնեցէք, որ այս բոպէիս ես պահանջում եմ նրան  
իմ մօտ։

Նօքարները վազեցին կատարելու հրամանը։  
Մելքը, դառնալով դէպի աստղագէտը, աւե-  
լացրեց։

— Հա՛, ճշմարիտ, դու խենթ ես եղել, աստղագէտ,  
եւ քո աստղներն ել նոյնպէս...

Թուրքը չը պատասխանեց եւ նստեց դարձեալ գուշա-  
կութիւններ անելու համար։

## II.

### Ջումշուդ :

Շուտով բացուեցաւ գուոը, յայտնուեցաւ մի երի-  
տասարդ հրապուրիչ դէմքով, որի հայեցքը արտայայ-  
տում էր հոգեկան սաստիկ տիրութիւն։ Նա պատկա-  
ռանքով ողջունեց իր հօրեղքորը, որը լուութեամբ տեղ-  
ցոյց տուեց նրան գորգի վըայ, իսկ ինքը նստեց նրանից  
փոքր ինչ հեռու։

— Ասա ինձ, ջումշուդ, վերջապէս խելքի եկա՞ գու,  
այժմ զգում ես քո վարմունքի բոլոր անտեղիութիւնը։

— Ես շատ յանցաւոր եմ ձեր առջեւ, հօրեղքայր,  
եւ ինձ չեմ արդարացնում։ Բայց այդ չէր կարող ուրիշ  
կերպ լինել...։

— Իօնչպէս չէր կարող ուրիշ կերպ լինել, յան-  
դուգն պատանի, բարկութեամբ գուեց մելքը։ — Մաի-

րանդայի իշխանը Մելք-Ծահնաղար Բ-ն էր — դրանում տարակոյս չկայ։  
Հեղինակը, ընտրելով այդ իսկ Մելք-Ծահնաղարեանին իր վէպի գլխաւոր  
գործող անձինքներից մէկը, ջումշուդին կոչում է նրա եղբօր որդի։ Դրա-  
նում պատմութեան գէմ մեղանցում է։ (Տես մեր “Խամսայի Մելքու-  
թիւնները” գրքի XXVI, XXVII եւ հետեւեալ գլուխները։) Ծան. թարգ.։

պել ինձ երդմնագանց լինել, յաւիտեան կոռուացնել ինձ  
յամանայի բոլոր մելիքների՝ հետ — այդ բոլոր քո աշ-  
քում ոչինչ բան է երեւում:

— Դուք խօսք եւ երդում տուեցիք առանց իմ  
համաձայնութեան, երբ ես դեռ երեխայ էի, պատասխա-  
նեց ջումշուդը սառնութեամբ: — Իսկ այժմ ես երի-  
տասարդ եմ, բան եմ հասկանում, եւ չեմ ցանկանում  
համաձայնուել: Եւ զրա մէջ ես մի պատճառ չեմ տես-  
նում, որ առիթ տար ձեզ բարկանալու, իսկ թալիշի  
մելիքին ձեզ ստիպելու, որ կատարէք ձեր խոստմննքը:

— Այդ լաւ է: Բայց դու դեռ շատ ջահիլ ես, որ  
կարողանաս մեզ բան սովորացնել: Մի խօսքով, ես այդ  
կամենում եմ, ես պահանջում եմ, եւ որպէս քո տէրը,  
հրամայում եմ քեզ, եթէ ոչ, երդվում եմ իմ նախ-  
նեաց ստուերներով, որ այդ խէնջարը իմ ձեռքով կը  
ցցեմ քո կուրծքի մէջ, որոտաց մելիքը:

<sup>1</sup> Խամսինայի Մելիքներ (Խամսին Մելիք): Դեռ հայոց  
թագաւորութեան գոյութիւն ունեցած ժամանակներում՝ Ղարաբաղը կազ-  
մում էր Արցախի նահանգը: Իսկ երբ Հայաստանը ընկաւ, հայոց հինգ  
տիրապետող իշխաններ, ամրանալով Ղարաբաղի լեռների մէջ, պահպանե-  
ցին իրանց անկախութիւնը, այդ պատճառով կոչուեցան իւամսաւեն եր  
(խամսին): Իսկ “մելիքը” տիտղոսը, որ արարերէն նշանակում է թա-  
գաւոր, տրուած է նրանց Շահ-Աբաս մեծից: Ծան. հեղ.:

Հեղինակի “խամսայի մելիքներ”, բառերի բացատրութիւնը  
պէտք է փոքր ինչ պարզել: Խամսա արարերէն նշանակում է հինգ: Ղարաբաղը որպէս այժմ, նոյնպէս եւ առաջ բաղկացած էր հինգ փոքրիկ  
գաւառներից, որոնք կոչվում էին՝ Գիւլիստան կամ Թալիշ, Զրաբերդ,  
Խաչէն, Վարանդա, Տիղական: Խարաբանչեր գաւառ ուներ  
մի-մի տիրապետող հայ իշխան, որ կում էր “մելիք”, տիտղոսը: Մելիք-  
ների իշխանութիւնը ժառանգական էր, անցնում էր սերունդից սերունդ:  
Եւ որովհետեւ այդ հինգ գաւառների հինգ մելիքները պահպանում էին  
իրանց մէջ մի տեսակ դաշնակցական միութիւն, այդ պատճառով կոչվում  
էին հնգեկան կամ իւամսայի (խամսին) մելիքները: (Տես մեր “Խամ-  
սայի Մելիքութիւնները”, գլուխ 1 եւ Արդ գլուխները: Ծան. թարգ.:

Ջումշուդը փոխանակ պատասխանի, բաց արեց իր կուրծ-  
քը եւ սկսեց սառնապրտութեամբ նայել հօրեղքոր վրայ:

Երիտասարդի այդ հերոսական վարմանքը զինաթափ  
արեց մելիքին: Նա տեսաւ, որ Ջումշուդի հաստատա-  
մատութիւնը ոչնչացնում է իր բոլոր նպատակները: Եւ յու-  
սալով, որ մեղմանթեամբ կարող է համոզել նրան, մօ-  
տեցաւ, բռնեց եղօրորդու ձեռքը, ասելով.

— Ես մեծ բաւականութեամբ եմ տեսնում, սի-  
րելի Ջումշուդ, որ հերոսների արիւնը վազում է քո  
երակների մէջ: Տեսնում եմ քո հաստատամտութիւնը  
եւ նրա վրայ ուրախութեամբ զարմանում եմ: Բայց  
լսիր. իւրաքանչիւր մարդ պէտք է յարմարուի հանգա-  
մանքների հետ: Երկարակութիւնը եւ ներքին կուները  
ոչնչացրին հայոց թագաւորութիւնը, որ մի ժամանակ  
ծաղկած էր եւ կանգնած էր խիստ նշանաւոր աստիճանի  
վրայ հին թագաւորութիւնների շարքում: Մենք, միայն  
Ղարաբաղի լեռնական մելիքներս, պահպանեցինք մեր ան-  
կախութիւնը: Մեր նախնեաց քաջագործութիւնները յար-  
գուած էին մինչեւ անգամ Շահ-Աբաս<sup>1</sup> մեծից: Նա  
Ղարանդայի, Գիւլիստանի<sup>2</sup>, Թալիշի եւ Խամսայի մնացած  
մելիքներին աւելի գերազաեց, քան այդ ժամանակ Հայաս-  
տանը կառավարող հայոց միւս իշխանական տոհմերի ներ-  
կայացուցիչները: Նա թոյլ տուեց մեզ մնալ անմատչելի,  
եւ շնորհեց “մելիք”<sup>3</sup> նշանաւոր կոչումը, որը մենք

<sup>1</sup> Շահ-Աբաս մեծը պարսից թագաւոր էր, ապրում էր Ժամանակակից գարու վերջում եւ Ժամանակակից գարու սկզբում: Ծան. հեղ.:

<sup>2</sup> Հեղինակը այստեղ մի աշխարհագրական սխալ է անում, կարծե-  
լով, թէ Գիւլիստանը եւ Թալիշը առանձին առանձին գաւառներ են: (Տես  
էջ 384, ծան. 1): Ծան. թարգ.:

<sup>3</sup> Մելիք կամ մալիք թէ պարսկերէն եւ թէ արաբերէն նշանա-  
կում է իշխան, տիրապետող, այլ եւ արքայ: Մելիք տիտղոսը կրում էին

այժմ կրում ենք: Բայց ի՞նչով մեր նախնիքը կարողացան այնպէս յաջողութեամբ պատերազմել այդ մեծ թագաւորի դէմ: — Միայն նրանով, որ Խամայի բոլոր հինգ մելքները միացած էին բարեկամութեան եւ արեան ամուր դաշնակցութեամբ: Նրանց յաջորդները հետեւցին նախորդների օրինակին, եւ մեր հայրենիքի անկախութիւնը պահպանուեցաւ:

— Քո հօր մահից յետոյ, յառաջ տարաւ մելքը — երբ դու դեռ երեխայ էիր, ես վեր առնելով քեզ իմ խնամակալութեան ներքյ, մի եւ նոյն ժամանակ մտածեցի տնօրինել քո ապագայ բախտաւորութիւնը: Այդ էր պատճառը, որ քեզ համար նշանագրեցի որպէս հարսնացու թալիչ մելքի աղջիկը, որը այն ժամանակ գտնվում էր դեռ օրօրոցի մէջ<sup>1</sup>: Եւ այդ խնամութեան վրայ մենք դրած էինք մեր յօյսը, որ բարեկամութիւնը մեր աների մէջ աւելի ամրապնդուած կը լինի: Ես խօսք տուեցի թալիչ մելքին եւ այդ խօսքը հաստատուած էլ սոսկաթ երգումով: Երբ որ դու չափահաս դարձար, ես հարկաւոր համարեցի առժամանակ ուղարկել քեզ ջուան-շերցիների<sup>2</sup> մօտ: Այդ այն նպատակով էր, որպէս զե դու հայոց իշխանները Շահ-Աբաս մեծից էլ առաջ, միայն այդ թագաւորուականիքների իրաւունքները: (Տես մեր “Խամայի Մելքութիւնները” գրքի I գլուխ): Ծան. թարգ: :

<sup>1</sup> Օրորոցի մէջ նշանագրութիւն: Մինչեւ այսօր եւս մնացել է հայոց մէջ հին սովորութիւնը, որ ծնողները շատ անգամ նշանագրում են ապագայ ամուսնացուներին այն հասակում, երբ նրանք դեռ գտնվում են օրօրոցի մէջ, կերակրվում են մօր ստիճովով եւ բնաւ գաղափար անգամ ունենալ չեն կարող ամուսնութեան վրայ: Այդ գեռ եւս փառ հասկանալի է: Բայց երբեմն նշանագրվում են, երբ ամուսնացող զոյզը դեռ լցու աշխարհ չէ տեսած, ապրում է մօր արգանդում: Ծնողները ուխտ են գնում: Եթէ մէկի ծնունդը տղայ կը լինի, իսկ միւսինը աղջիկ, նրանք պէտք է ամուսնանան միմանց հետ: Ծան. թարգ: :

<sup>2</sup> Զուանշիրցին եր, տես էջ 401, ծան. 1:

կարողանայիր սովորել այդ անվեհեր, լեռնական ձիավար-ներից նրանց պատերազմական ճարպկութիւնները, նրանց զէնք եւ նիզակ գործածելու ձեւերը: Դու արդարացրիր իմ յոյսերը: Բայց այնտեղոց վերադառնալուց յետոյ, ես քեզ տեսնում էի միշտ տխուր, միշտ խորասուզուած լուսով քո վերադարձը, գեսպանութիւն ուղարկեց մեզ լսելով քո վերադարձը, գեսպանութիւն ուղարկեց մեզ մօտ, հրաւիրելով մեզ իր բերդը՝ Զէյվայ<sup>1</sup>, քո եւ նրա գուակի մտատանջութիւնների մէջ: Թալիշի մելիքը, մոտած համար կատարելու համար: Այդ պատճառեր պսակի խորհուրդը կատարելու համար: Այդ պատճառով ես առաջարկեցի քեզ մեր գնալու մասին, եւ մի ճառով ես առաջարկեցի իմ մէջ մեր գնալու մասին, եւ մի իմ նոյն ժամանակ բացատրեցի իմ նպատակները: Իսկ եւ նոյն ժամանակ բացատրեցի յամարկութիւնը, գուանակ յայտնելու ինձ քո հնազանդութիւնը, որ ես տուել եմ դրանից տասն եւ չորս տարի խօսքը, որ ես տուել եմ դրանից տասն եւ չորս տարի խօսքը, որ ես դաւաճանեմ իմ առաջ: Դու կամենում ես, որ ես դաւաճանեմ իմ առաջ: Դու կամենում ես երդմանը: Խօսիր, ի՞նչը կարող է արդարացնել քո այդ վարմունքը:

— Դուք իրաւունք ունեք, հօրեղբայր, պատասխանեց ֆումշուրդը — ես չեմ կարող արդարացնել ինձ: Բայց ի նկատի ունեցեք, որ մարդու կեանքում երբեմն բայց ի նկատի ունեցեք, որ մարդու կեանքում երբեմն բայց ի նկատի դէպքեր են պատահում, որոնց ժամանակ անպայմանի դէպքեր են պատահում հետեւել խոհականութեան մինչեւ անգամ ամենախիստ ձայնին...:

— Ես չեմ կամենում մոնել քո պատճառաբանութիւնների մէջ, քանի որ դու ինքդ չես կամենում յայտնել ինձ այդ պատճառաբանութիւնների գաղտնիքը: — Բայց ի՞նչ պատասխանեմ ես մելքի դեսպանին:

<sup>1</sup> Զէյվայ մի աւան է նոյն անունով գետի մօտ, Գանձակի խառնութեան սահմանի վրայ: Այժմ թալիշի մահալի գլխաւոր տեղն է, իսկ առաջ թալիշի մելքի բնակութեան տեղն էր: Ծան. հեղ..:

— Ի՞նչ որ դուք կամենում էք:

— Այդ հեշտ է ասել, բայց դժուար է կատարել քումշուդ, դու չես խընդում, որ քո վարմունքով պիաի աղմկես Ղարաբաղի խաղաղութիւնը: Ես ճանաչում եմ Թալիշի մելիքին. նա պատուալահութեան պայմանների մէջ չափազանց խիստ է: Մեր բոլոր պատճառառաբանութիւնները նա կ'ընդունէ որպէս վերաւորանք, եւ պատերազմը այնուհետեւ կը բորբոքուի նրա եւ մեր մէջ: Մնացած մելիքները ստիպուած կը լինեն բռնել՝ ոմանք մեր, ոմանք նրա կողմը, եւ Ղարաբաղը կը դառնայ նելքին արիւնհեղութեան ամօթալի մի հանգիստարան:

— Եթէ Թալիշի մելիքը խելացի մարդ է, նա պէտք է բաւականանայ, երբ իրանից ներողութիւն կը խնդրեն: Խսկ եթէ ոչ, թող շնորհ բերէ մեղ մօտ. մենք նրա ստրուկները չենք. մենք աղատ մարդիկ ենք. եւ զենքը կը վճռէ գործը...

— Ի հարկէ, այդպէս է: Բայց մենք հազիւ թէ կարող ենք յոյս դնել յաղթութեան վրայ, երբ ինքներս ենք պատճառ տալիս պատերազմի: Քումշուդ, լաւ մտածիր, թող երիտասարդական աշխայժը չըրապուրէ քեզ. գործը վերաբերում է ամբողջ Ղարաբաղի խաղաղութեանը:

— Ես հասկանում եմ ձեր բոլոր ապացոյցների կարեւորութիւնը, այսու ամենայնիւ, չեմ կարող ամուսնանալ Թալիշի մելիքի դստեր հետ, որովհետեւ չեմ կամենում անբախտացնել նրան...

— Ի՞նչ ես խօսում դու:

— Բոլորովին ուղիղ է իմ ասածը: Պասկուելով ինձ համար վաղուց նշանադրուած հարսնացուի հետ, ես կարող եմ միայն ատել նրան, ցանկալ նրան՝ մահ եւ կորուստ...

— Ի՞նչ սոսկալի խորհուրդ է թագնուած այդ խօսքերի մէջ, գոչեց մելիքը տեղից վեր թռչելով: — Դու պէտք է այդ գաղտնիքը յայտնես ինձ:

— Այդ ես չեմ կարող, սառնասրտութեամբ պատասխանեց քումշուդը:

— Հա, դու չես յայտնի, որոտաց մելիքը աւելի կատաղութեամբ: — Ի՞նչ յիմար եմ եղել ես, որ իզուր խօսքեր եմ վատնում մի համբակի հետ, երբ կան ուրիշ շատ միջոցներ ստիպելու նրան որ հնազանդուի:

— Մտարերեցէք, մելիք, որ ես մահից երկիւղ չունեմ, ասաց քումշուդը, իր նստած տեղից կանգնելով:

— Դու երկիւղ չունես մահից, գոչեց մելիքը բարկութեամբ: — Լաւ, լաւ: Բայց դու այնպէս շուտ չես մեռնի, որքան էլ ցանկանալու լինէիր: Ես կը ծանօթացնեմ քեզ այնպիսի մահուայ հետ, որը հաղարապատիկ տաժանական է, քան թէ իսկական մահը...

— Բոնեցէք դրան, հրամայեց նա նօքարներին, — կաշկանդեցէք շղթաներով եւ բանտարկեցէք աշտարակի ստորերկրեայ նկուղի մէջ, որ գանվում է գետի մօտ: Տուեցէք դրան միայն ցամաք հաց եւ ջուր, թող սովորի, թէ ի՞նչ է նշանակում հայրենիքի խաղաղութիւնը վրդովելը իր գարտակ յամառութեամբ:

Սօքարները տարան քումշուդին, որը սենեակից դուրս գալու միջոցին, խիստ սառն կերպով ասաց իր հօրեղքօրը.

— Դուք դրանով ոչինչ չեք շահուի...

Մելիքը բարկութիւնից սաստիկ յուզուած, նստեց գորգի վրայ: Մի քանի ըսպէ մնաց լրութեան մէջ: Այդ միջոցին աստղագէտը հանգիստ կերպով նայում էր նրա

վրայ, կարծես, աշխատում էր գուշակել, թէ ինչ է կատարվում նրա սրտի մէջ: Վերջը մելիքը դառնալով նրան, սաստիկ տհաճութեամբ ասաց.

— Դէ, պարոն ստախօս, ուր մնացին քո այն բարեյաջող աստղները, որոնցով հրապուրում էիր ինձ:

— Նրանք կային, բայց անցան, մելիք: Միթէ ես չասացի՞ ձեզ, որ նրանց ետեւից կը գան վաս աստղեր: Ով խորհուրդ տուեց ձեզ՝ շարունակել ձեր խօսակցութիւնը: Ես միայն չցանկացայ խանգարել ձեր երկար ճառախօսութիւնը, թէ չէ, արդէն պարզ տեսնում էի վնասակար աստղների մօտենալը: Եւ ես չեմ զարմանում, որ ջումշուդը այսպէս յամառ գտնուեցաւ:

— Ուրեմն քո կարգադրութեան համեմատ ես քանի րոպէ պիտի խօսէի ջումշուդի հետ, որ լաւ լիներ: Այս, խաբեբաներ, այդ է ձեր նշանաւոր դիտութիւնը: Եւ ես, անխելքս, հաւատացի քեզ: Կարելի է, գու յիմարութեամբ քո բոլոր թուանշանները շփոթեցիր միմեանց հետ: Եւ ես քո տիմար գուշակութիւնների համեմատ, փոխանակ լաւ րոպէին, ընտրեցի վատ րոպէն իմ եղբօրորդու հետ խօսակցելու համար: Եւ այդ պատճառով նրա հետ կռուեցայ, նրա հետ, որին ես սիրում եմ աւելի քան մի հարազատ որդի: Դու ես պատճառը այդ բոլոր երկպառակութեան: — Խօսիր, անպիտան, շարունակեց մելիքը, կատաղութեամբ բռնելով աստղագետի մօրուքից, — Հիմայ ինչ են նախագուշակում քո համատեղութիւնները քեզ համար:

— Նրանք նախագուշակում են իմ ազատուելը կորուստից, ասաց աստղագետը դողդողարով:

— Նրանք խաբում են քեզ, պատասխանեց մելիքը, եւ դառնալով դէպի նօքարները, հրամայեց.

— Վեր սուեցէք այդ ցնորուածին, ձգեցէք դրան մի եւ նոյն ստորերկրեայ ներքնատան մէջ, որտեղ այժմ նստած է իմ եղբօրորդին: Թող երկու խելագալներ մինը միւսին հեքաթներ պատմեն...

Աստղագետին տարան:

Մելիքը կրկն նստեց գորդի վրայ, հրամայեց իրան տալ զէյլան եւ սկսեց լութեամբ ծխել: Նրա աչքերը արտայայտում էին սաստիկ յուսահատութիւն եւ ոչ ոք տանեցիներից չէր համարձակվում մօտենալ նրան:

### III.

Ջումշուդի յամառութեան պատճառը:

Նեղ, մթին, ստորերկրեայ բանտում, շղթայակապ որպէս մի յանցաւոր, նստած էր ջումշուդը: Բանտի խոնաւ պատերը երեկ չէին զգացել Հարաբաղի բոցավառ արեգակի բարերար ազդեցութիւնը: Այդ մշտական տիրութեան նկուղը ծառայում էր միայն որպէս բնակարան կարիքների, մամուկների (փալանգ) եւ հազար այլ տեսակ զգուելի սողունների համար: Վախենալով մարդու ներկայութիւնից, նրանք սողացին պատերի վրայով եւ թագնուեցան ձեղքերի մէջ, որոնք գցացել էին խոնաւութիւնից եւ ժամանակի հնութիւնից: Լեռնային գետակի աղմուկը, որը վազում էր ուղեղ նկուղի մօտով, աւելի եւս բազմապատկում էր այդ խաւար բանտի զարհութանքը: Բայց ջումշուդը, երեւի, չէր զգում իր գլութեան բոլոր տաժանութիւնը, չէր զգում շղթաների ծանրութիւնը, որոնցով կաշկանդուած էր ինքը: Նրա զէմքը արտայայտում էր խորին ցնծութիւն, կարծէս թէ, ձեռքերը մեկնած, մէկին ողջունում էր նա, այսպէս բացականչելով.

— « Սալիշա, սքանչելի, անզուգական, անդին Սալիշա, ով աստուածային կոյս, ես քեզ եմ պատկանում, քեզ միայն, մինչեւ յաւիտեան։ Ոչ ոք, ոչ ճակատագիրը, ոչ մարդիկ մեզ բաժանել չեն կարող։ Ես կը կուռեմ բոլոր անախորժութիւնների դէմ, եւ աւելի բարւոք կը համարեմ ոչնչանալ, քան թէ դաւաձանել այն երդմանը, որ տուել եմ քեզ։ Բայց ի՞նչպէս . . .

Նրա խօսքը ընդհատեց մի աղմաւկ. որ լսելի եղաւ բանտի մօտից։ Դոները բացուեցան, նօքալները ներս հրեցին աստղագէտին, կրկնն կողպեցին դռները եւ շեռացան։

Զումշուգը սկզբից չկարողացաւ ճանաչել, թէ այդ ինչ նոր ընկեր էր, որ բերեցին իր համար։ Բայց լսելով նրա գանգատները, որով մըսմթում էր նա, ճանաչեց, որ դա պէտք է լինէր մի եւ նոյն աստղագէտը, որին իր հօրեղբայրը հաւատում էր։ Նա մտածեց, որ դա պէտք է մի տեսակ խորամանկութիւն լինէր, որ գործ էր դրուած, այդ խարեբայի միջոցով համոզելու իրան, ընդունել հօրեղբօր առաջարկութիւնը։ Այդ պատճառով երիտասարդը լուռ կացաւ, ուշադրութիւն չդարձնելով իր նոր զրացու վրայ։

— Ո՞չ էք դուք, մելիք-Զումշուգ, վերջապէս հարցրեց աստղագէտը երկչոտ ձայնով։

— Կարծեմ դուք ոչ մի հարկաւորութիւն չունէք ինձ, պատասխանեց նա։

— Ի՞նչպէս չունեմ, միթէ դուք կարծում էք, որ ես չեմ ցաւում ձեր դրութեան վրայ։

— Խորհուրդ եմ տալիս ցաւել ձեր մասին։

— Ծշմարիտ, մելիք, ձեր հօրեղբայրը սաստիկ դիւրագրիու մարդ է, քան բոլոր մարդիկը պէտք է, բայց այդ խիստ մասին չեմ ուշադրուել։ Ես չեմ հականում, թէ ինչպէս կարող էիք դուք այդպէս մտածել . . .

չում եմ այս աշխարհում։ Մէկը հարցնելիս լինի, թէ ի՞նչու համար նա նետեց մեզ այդ ստորերկրեայ վերապի մէջ, ուր շատ հեշտութեամբ կարելի է կարիքների կերակուր դառնալ։

— Ի՞նչ պատճառով քեզ նետեցին այստեղ, ես չը գիտեմ։ Իսկ ես, իմ վերաբերութեամբ, վաղուց այդ սպասում էի։ Միայն դու ինձ շատ պարտաւորած կը լինես, եթէ կը լուես. ինձ մի մեծ զուարձութիւն չէ պատճառում քեզ հետ մասլահաթներ անել։

— Ի՞նչու էք այդպէս խօսում, մելիք, ի սէր Աստուծոյ, ի՞նչ կը նշանակէ լուռ ու մունջ նստել։ Այստեղ այնպէս սարսափելի է, այնպէս մութն է, որ մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում։ Ով Սուրբ Յուսէին, այդ ի՞նչ պատիժ է։ Ինձ այնպէս է թուում, որ կարիքները սողում են մարմնիս վրայ։ Ի սէր օրհնեալ Ալի, ազատեցեք ինձ, ես կորած եմ։ Եւ ողորմելի աստղագէտը սկսեց բարձր ձայնով լսց լինել։

— Լսիր, աստղագէտ, հարցրեց Զումշուգը, — ո՞ր գէրվիշներից սովորեցար դու այդ խորամանկութիւնները։

— Ո՞ր գէրվիշներից, կրկնեց նա լսլագին ձայնով։ միթէ դուք կարծում էք, որ իմ սրտի տրամութիւնը կեղծ է։ Արդեօք մի այսպիսի անիծեալ տեղում ընկնելուց յետոյ, կարելի՞ է ուրախ լինել։ Ես չեմ հականում, թէ ինչպէս կարող էիք դուք այդպէս մտածել . . .

— Թողլ տուր այդ կեղծաւորութիւնները, խնդրում եմ։ — Ես գիտեմ, որ դու ուղարկուած ես իմ հօրեղբօր կողմից, որ համոզես ինձ ընդունելու նրա առաջարկութիւնը։ Բայց այդ խիստ զուր աշխատանք կը լինէր քեզ համար։ Դու կարող ես կեղծել, որքան քեզ պէտք է, բայց դա ամենեւին չի օգնի քեզ։

— Ի սէր Ալլահի, ի սէր օրհնեալ մարգարէի եւ տասն երկու սուրբ խմամների՝ այդ ի՞նչ ասելու բան է, մելք, իրը թէ ես ուղարկուած եմ ձեր հօրեղքօր կողմից, կամ ես կեղծաւորութիւն եմ անում։ Երգվում եմ ձեզ զրախտի այն ծառով<sup>2</sup>, որ բուսնում է Մահմեդի բնակարանի մէջ, որ ձեր կարծիքը իմ վերաբերութեամբ ուղեղ չէ։ Ես ձեր հօրեղքօր կատաղութեան մի նոյնպիսի ողորմելի զոհն եմ, որպէս դուք, մելք։

<sup>1</sup> Տաս եւ երկու սուրբ Խմամներ կոչվում են այն առ տուածաբանները, որ ապրում էին հիջրէթի առաջին դարում, որոնց մուսուլմանները սրբի տեղ են ընդունում։ Ծան. հեղ։

Տաս երկու Խմամներ կոչվում են Ալիի ժառանգները, որոնք հիմք գրեցին շիան երի աղանդին։ Դրանցից մէկը՝ Մէկ հտի սահարա զամանը (ժամանակների տէր Մէկհտին) շիաների կարծիքով մասց անմահ եւ աներեւութապէս հսկում է ուղղափառ մուսուլմանների վրայ։ Կա մի օր կը յայտնուի իր փառքով, եւ նրա միւսանգամ գալստեանը շիաները սպասում են նոյն ակնկալութիւններով, որպէս հրէաները Մէկսիայի գալստեանը։ Ծան. թարգ։

<sup>2</sup> Մարգարէի տան դրախտի ծառը կոչվում է Թոռութակամ ծառ բախտաւորութեան։ Այդ ծառը մուսուլմանների աւանդութեան համեմատ գտնվում է Մուհամմէդի բնակարանի մէջ։ Նրա ճիւղերը, զարդարած նոներով եւ զանազան տեսակ գեղեցիկ պտուղներով, հանում են մինչեւ ամեն մի ուղղափառ մահմեդականի բնակարանը։ Այդ ծառի ստուերը տարածվում է այնքան հեռու, որ ամենասրնթաց ձին եւս երբէք չէ կարող համել մինչեւ նրա վերջը։ Նրա արմատներից բղնում են կաթի, գինու եւ մեղի վտակներ։ Ծան. հեղ։

Թոռութակամ մի առասպելական ծառ է Մուհամմէդի զրախտի մէջ, որի լայնատարած ստուերի ներքոյ զուարձանում են իսլամի արդարները։ Նրա ճիւղերից կարելի է ստանալ ամեն տեսակ պտուղներ, արմաւ, նուռ, նաւրինջ, անանաս, թուզ եւայն։ Բաւական է ցանկանալ միայն, եւ ահա ծառը խոնարհեցնում է իր բարձր ճիւղերը, եւ ցանկացողը կարող է քաղել իր խնդրած պտուղը։ Իսկ Մուհամմէդի բնակարանի ծառը մի հասարակ ծերացած արմաւենի է, որը իբր թէ մնացել է մարգարէի ժամանակներից, եւ որի պտուղներով կերակրուել է մարգարէն, եւ այդ պատճառով նու իբական է գարձել։ Մէքբայի ուխտաւորները այցելում են այդ ծառին, իբրեւ մի յիշատակ այն սրբութիւնների թւում, որ մնացել են իսլամի մարգարէից։ Ծան. թարգ։

Աստղագէտի խօսքերի արտասանութեան մէջ կային այնքան շատ համոզիչ ձայներ, որ ֆումշուգը պարզ կերպով նկատեց, թէ սխալուած է իր կարծիքի մէջ, եւ ասաց նրան աւելի մեղմ կերպով։

— Երբ որ այգակէս է, ես բոլոր սրտով ցաւում եմ քեզ վրայ, անբախտ ասաղագէտ։ Բայց զարմանում եմ, թէ ի՞նչպէս դու քու ամբողջ գիտութեամբը ըստ կարողացր այդ զժբախտութիւնը հեռացնել քեզո՞ից, կամ գոնէ նախատեսել, թէ ի՞նչ էր պատահելու քեզ։

— Չեր հօրեղքայրը մի առանձին ընդունակութիւն ունի իր բարկութեամբը խառնաշխոթելու իմ բոլոր նախագուշակութիւնները։ Բայց հաւատացէք, մելք, որ ես տիսնելով ձեր անբախտութիւնը, մոռանում եմ իմը։ Դուք, ձեր այդ մատաղ հասակում, այսպէս գեղեցիկ, այսպէս քաջ մի երիտասարդ, պէտք է մաշուեք այդ օդից զուրկ բանտի մէջ։ Եւ ի՞նչի համար։ Ահա այսպիսի զէպէերում մենք, մուսուլմաններս, աւելի երջանիկ ենք ձեզանից։ Կարող ենք ամուսնանալ չորս կիսկուների հետ։ Հիմայ ձեր հօրեղքայրը ձեր վզին կապում է մէկին մի այն, եւ դուք վախենում էք, որովհետեւ յետոյ մի ուրիշ աւելի լաւի հետ անկարելի կը լինի ամուսնանալ…

Կա խօսքը փոխեց, շարունակելով։

— Լսեցէք, մելք, մենք երկուքս էլ այժմ գտնվում ենք վանդակի մէջ, պէտք է աշխատել աղատուելու այս տեղից։ Հաւատարմութիւն ունեցէք դէպի ձեր ծառան, պատմեցէք, թէ իսկապէս ի՞նչ պատճառներ սախում են ձեզ՝ այսպիսի վճռականութեամբ ընդդիմանալ ձեր հօրեղքօր ցանկութիւններին։ Եւ ես կաշխատեմ հնարել մի որ եւ իցէ միջոց ձեր աղատութեան համար։

— Այդ չեմ կարող յայտնել. դա մի գաղտնիք է, պատասխանեց ջումշուղը:

— Միթէ մոռանում էք դուք, մելիք, որ ես տեղեկութիւններ ունեմ երկնային լուսատուների ընթացքի մասին, կարող եմ նախագուշակել բախտաւորութիւնը եւ անբախտութիւնը, կարող եմ որոշել բարեյաջող ըուպէները մարդերի գործողութիւնների համար: Ես կարող եմ շատ օգտաւէտ լինել ձեզ, եթէ դուք միայն կ'արժանացնէք ինձ ընդունել ձեզ մօտ որպէս ծառայ: Երդվում եմ իմ մօրուքով, որ դուք չէք գտնի ինձանից աւելի հաւատարիմ եւ ջերմեռանդ մի սպասաւոր: Ինձ բոլորովին ձանձրացրել է ձեր հօրեղոր խիստ բնաւորութիւնը: Ժառայերով նրա մօտ, ամեն րոպէ պէտք է մահը աչքի առաջ ունենալ: Ի սէր Աստուծոյ, համաձայնութեցէք ընդունել ինձ ձեզ մօտ. դուք չափազանց կը բախտաւորացնէք ինձ, եւ ես կաշխատեմ արժանաւոր կերպով երախտամատոյց լինել ձեզ:

Ջումշուղը բնաւորութեամբ խիստ բարի էր: Ասուզգէտի զրութիւնը երեւաց նրան խիսպէս ցաւակցութեան արժանի:

— Հաւ, ասաց նրան, — ես ընդունում եմ քո ինդիքը: Բայց դու գիտես, որ նրա կատարումը դեռ եւս ինձանից կախուած չէ: Նախ այն պատճառով, որ ես չը գիտեմ արդեօք երբ կը բարեհաճի հօրեղայրս ինձ ազատել այդ փառաւոր ապարանքից, երկրորդ, արդեօք թոյլ կը տայ քեզ ինձ մօտ ծառայելու:

— Ծնորհակալ եմ, հազար անգամ ծնորհակալ եմ ձեզանից, մելիք: Թող ես լինեմ չնից պակաս, եթէ ամեն րոպէ աշխատելու չլինեմ արժանացնելու ինձ ձեր ողորմանութեանը: Իսկ ինչ որ վերաբերում է մեր բանտար-

կութեանը, այդ, իմ կարծիքով, երկար չետի: Երբ ձեզ բերեցին այստեղ, ձեր հօրեղայրը սաստիկ տիրեց, եւ մտածութիւնների մէջ ընկաւ: Նա սկսեց նախատել ինձ, իր թէ ես պատճառ դարձայ, որ նա կոռւց ձեզ հետ: Նա մեղաղրում էր ինձ, թէ ես սխալ գուշակութիւններ արեցի իմ աստղներով: Որովհետեւ նախ քան ձեզ ունեցած տեսութիւնը, նա հրամայեց ինձ նախագուշակել, արդեօք աստղները խոստանում են յաջողութիւն խօսակցութիւնը սկսելու համար, թէ ոչ: Հէնց դրա համար էլ նա բարկացաւ ինձ վրայ եւ նստացրեց դրա համար էլ նա բարկացաւ ինձ վրայ եւ նստացրեց դրա համար մէջ: Ես ճանաչում եմ ձեր հօրեղօրը, նա այդ գնդանի մէջ: Ես ճանաչում եմ ձեր հօրեղօրը, նա մոռանում է անցեալը: Երբ կը զայրանայ, պատրաստ է մոռանում է անցեալը: Երբ կը զայրանայ, պատրաստ էնչացնել ամենին մահուան տաննշանքով: Իսկ երբ բարկութիւնը կ'անցնի, այդ ժամանակ ինքը կը զղջայ իր վարմունքի համար: Բայց դուք, մելիք, ինքներդ էք մեղաւ կ'ասէիր, որ ես իրաւացի եմ:

— Հասկանում եմ, շատ լաւ եմ հասկանում, գոչեց ջումշուղը: — Բայց նրա ցանկութիւնը կատարելը գոչեց ջումշուղը: — Բայց նրա ցանկութիւնը կատարել բան է: Եթէ իմ կամքից կախուած չէ: Այդ անկարելի բան է: Եթէ քեզ բոլոր հանդամանքները յայտնի լինէին, դու ինքտ կ'ասէիր, որ ես իրաւացի եմ:

— Արժանացրէք ինձ, մելիք, ձեր հաւատարմութեանը, պատմեցէք ձեր մտերիմ ստրուկին այդ նշանաւոր գաղտնիքը: Դուք չէք զղջայ, եթէ ձեր սիրտը բացելու լինէք իմ առջեւ: Ես իմ կեանքով ձեզ եմ պատկանում. պատրաստ եմ ձեզ համար ասլուել եւ ձեզ համար մեռնել:

Ճումշուդը տեսաւ, որ աստղագէտը անկեղծաբար կարեկցում էր իրան, եւ վճռեց հաղորդել նրան իր գաղտնիքը, աւելի այն պատճառով, որ պէտք էր զգում որ եւ իցէ մէկի առջեւ թափել իր սրտի ցաւերը:

— Հսիր, ասաց նա աստղագէտին, — ես կը պատմեմ քեզ բոլոր հանգամնքները, որոնք արգելում են ինձ ընդունելու հօրեղօրս առաջարկութիւնը: Բայց երդվում եմ, որ եթէ քո լեզուն մի որ եւ իցէ մարդու կը յայտնի իմ խորին գաղտնիքը, դու անպատճառ կորած կը լինես իմ ձեռքով, եւ ոչ մի զօրութիւն չի կարող ազատել քեզ իմ վրէժինդրութիւնից:

Աստղագէտը պատասխանեց.

— Թողես մի եւ նոյն րոպէում գոնկուսի<sup>1</sup> կերպարանք ստանամ, եւ այնպէս մնամ մինչեւ վերջին դատաստանի օրը, եթէ ես այս աստիճան անխորհրդապահ կը գտնուեմ: Եւ ի՞նչ օգուտ ինձ դաւաճանել իմ տիրոջ գաղտնիքին: Ձեզ յայտնի է, մելիք, որ ոչ թէ ըսկ հետաքրքրութեան համար ինդրում եմ հաղորդել ինձ ձեր պատմութիւնը, այլ առաւելապէս նրա համար, որ ես միջոց ունենամ լաւ մտածելու, արդեօք չէի կարող մի որ եւ իցէ օգուտ բերել ձեզ եւ դրանով ապացուցանել իմ անձնանուիրութիւնը: Դուք գիտէք, մելիք, որ ես թափառել եմ ամբողջ աշխարհում, տեսել եմ եւ հնդկացիներին, եւ գարբներին<sup>2</sup>, եւ ուղղափառ մուսուլմաններին, եւ անմաքուր ջհուդներին, եւ . . .

<sup>1</sup> Գոնկուս նշանակում է խոզ, որը համարվում է ամենապիշտ անասուն մուսուլմանների կրօնքով: Ծան. հեղ.:

<sup>2</sup> Գաբր կոչվում են այն պարսիկները, որ դեռ պահպանել են հին կրապաշտական կրօնը: Գաբրները հալած գում են մահմեդական պարսիկներից եւ պիղծ են համարվում: Ծան. թարգ.:

Ճումշուդը ընդմիջեց աստղագէտի խօսքը ասելով.  
— Հաւ, լաւ, ես քեզ հաւատում եմ, հիմայ լսիր:  
Եւ նա սկսեց պատմել հետեւեալը:

#### IV.

Ճումշուդը ջուանշիրցիների մօտ:

“Իմ հայրը շուտ մեռաւ. Նրա մահից յետոց հօրեղբայրս ինձ ընդունեց իր հոգաբարձութեան նելքոյ: Տան եւ եօթ տարեկան էի ես, երբ նա տուեց ինձ մի յանձնարարական նամակ, որ գրուած էր ջուանշիրցիների<sup>1</sup> մի ծերունի ցեղապետի անունով: Այդ քաջ եւ պատերազմանէր ցեղը բնակվում է մեր լեռների վրայ, արեւմտեան կողմում: Նա ցանկանում էր, որ ես, ապրելով այդ լեռնաբնակների մէջ, ընտելանայի նրան բարքուվարքի պարզութեանը, սովորէի նրանց ճարպիկութիւնները նիզակ եւ զէնքեր գործածելու մէջ, եւ վերադառնայի որպէս մի վարժ պատերազմող, որ կարող լինէր ամեն անդամ փառքով հանդիսանալ կրուի դաշտում: Իմ վարժութիւնների համար ժամանակ որոշեց նա չորս տարի, ընծայեց ինձ մի գեղեցիկ նժոյգ, հարուստ զէնքեր, երեսուն թուման փող եւ ես ճանապարհ ընկայ, գնացի:

<sup>1</sup> Ջուանշերցիները Պարաբաղի լեռնաբնակներ են, որոնք նշանաւոր են որպէս լաւ ձիաւորներ: Ծան. հեղ.:

Պարաբաղի լեռնային մասը, միշտ բնակեցրած լինելով հայերով եւ հայոց մելիքների տիրապետութեան ներքոյ գտնուելով, երբէք ջուանշիրցիների բնակութեան տեղ չէ եղել: Ջուանշիրցիք իրանց անունը առել են ջուանշիրի տափարակ անապատներից: Որ գտնվում են կուր գետի աջ ափերի վրայ, Պարաբաղի սահմանի մօտ: Միայն մելիքների իշխանութիւնը ընկնելուց յետոց ջուանշիրցիք համարձակուեցան իրանց անասունների հետ ամառը անցկացնել Պարաբաղի լեռների վրայ, իսկ ձմեռը դարձեալ վերադառնում էին գէպի կուր գետի եղերքի տափարակները: Այդ կեանքը շարունակվում է մինչեւ այսօր: Ծան. թարգ.:

“իմ ճանապարհորդութիւնը տեւեց երեք օր, չորրորդում ես տեսայ իմ առջեւ ջուանշերցիների եղեգնեայ տաղաւարները։ Նրանք չուել էին այդ ժամանակի, իրանց հօտերի հետ, լեռների ամենաբարձր գագաթների վրայ։ Որովհետեւ եղանակը սաստիկ տօթային էր, եւ արեգակի ջերմութիւնը անտանելի էր դարձել ոչ միայն հովետներում, այլ մինչեւ անդամ լեռնային բարձրաւանդակների վրայ։”

“Ո՞քան մեծ բաւականութեամբ նայում էի ես ջուանշերցիների օբաների<sup>1</sup> վրայ։ Նրանց բազմաթիւ հօտերը ազատ շրջում էին ճոխ, կանաչազարդ արօտամարդերի մէջ։ Անհամեմատ գեղեցիկ ձիաները թռչութում էին, կայտում էին, ծփելով իրանց ագիներն ու բաշերը։ Օդը բարեխառն էր։ մի առանձին տարօրինակ քաղցրութիւն թափուած էր նրա մէջ։ Ես հասայ այնտեղ արեւի մայր մտնելուց առաջ։ Տղամարդիկը, շուրջ հաւաքուած, ինչ որ բանի վրայ խօսակցում էին։ Ոմանք անհոգ նստած էին իրանց տաղաւարների մուտքի առջեւ եւ ծխում էին։ Մանուկները խաղում էին նրանց մօտ։ Կանայքը ծածկուած չէին այն անտանելի քօղելով։ որոնք մեղ մօտ գործածութեան մէջ են։ Նրանք բոլորը վին բաց երեսներով նստած էին տաղաւարների առջեւ, եւ զբաղուած էին զանազան աշխատութիւններով։ Ոմանք բուրդ էին մանում, ոմանք գորդ էին գործում, ոմանք իրանց համար հագուստներ էին կարում, իսկ մի քանիս էլ, ձեռքով բռնած ոչխարներին կամ գառներին, խուզում էին նրանց բուրդը։ Մի խօսքով, աչքի էր զար-

<sup>1</sup> Օքա կամ օվա նշանակում է իջեւան։ Այսպէս կոչում է թափառաշղթեկ խաչարածների ժամանակաւոր բնակութեան տեղ։ Ծան։ թարգ։

կում կնիկների ժրաջան աշխատասիրութիւնը, իսկ տղամարդների կատարեալ անգործութիւնը, որոնք զբաղուած են լինում միայն իրանց նժոյգներով, գէնքերով եւ ձարպիկ ձիարշաւներով<sup>1</sup>։

“Հենց որ ես յայտնուեցայ, իսկոյն իմ վրայ դարձրի լնդհանուրի ուշադրութիւնը։ Հիւրասիրութիւնը համարվում է ամենազլխաւոր առաքինութիւններից մէկը ջուանշերցիների մստ։ Նրանցից իւրաքանչիւրը, մինը միւսի հակառակ, ցանկանում էր բաւականութիւն գտնել, հիւրասիրելով ինձ իր մօտ։ Ես մերձեցայ մի բնակարանի, որի հանդէպ նստած էր մի պատկառելի ծերունի, զարդարուած ալիքներով։ Նրա գէմքի ապնիւ գծերը արտայայտում էին մի առանձին հրապուրանք։ Ես ողջունեցի նրան, ասելով։”

— “Սալամուն ալէյքում։”

— “Ալէյքում աս սալամ<sup>2</sup>, պատասխանեց նա։”

— “Թող շնորհէ քեզ Ալահը խաղաղութիւն եւ բարեբախտութիւն, բարա, ասեցի ես, — կարող ես ինձ ցոյց տալ, թէ որն է չասան ցեղապետի տաշաւարը։”

— “Թող բազմանան քո տարիքը, ինչպէս երկնքի աստղները, պատասխանեց ծերունին։ — չասանը այլ եւս չկայ մեր մէջ։”

<sup>1</sup> Ինչպէս արեւելեան բոլոր հովիւ ցեղերի մէջ, այնպէս էլ ջուանշերցիների մօտ, տնտեսական բոլոր աշխատութիւնները բարձուած են կնիկների վրայ։ Տղամարդիկ վայելում են կատարեալ հանգստութիւն, զբաղվում են իրանց զէնքերով, ձիաներով, պարապվում են աւազակութեամբ։ Ծան։ թարգ։

<sup>2</sup> Սալամուն ալէյքում նշանակում է խաղաղութիւն քեզ։ Ալէյքում աս աւանդում է գեղ եւս լինի խաղաղութիւն։ Ծան։ թարգ։”

— “Ուր է գնացել:  
— “Պարսկաստան, Քէրիմ-խանի<sup>1</sup> մօտ, որը մտքին  
դրել է նստել իրանի գահի վրայ:

— “Ի՞նչ պատճառ ունէր Հասանը հեռանալու իր  
հայրենիքից, շարունակեցի ես, ձիուց ցած իջնելով եւ  
ծալապատիկ նստելով ծերթանու մօտ:

— “Հասանը չկարողացաւ հաշտուել մեր նոր  
տանուտէրի հետ եւ ստիպուեցաւ մեր երկրից հեռանալ,  
որովհետեւ երկիւղ ունէր նրա վրէժինդրութիւնից:

— “Ուրեմն դուք նոր տանուտէր ունէք:

— “Ինչպէս չէ: Նրան կոչում են Փանահ-խան<sup>2</sup>.  
Նա ծնուած է մեր լեռներում: Ես նրան ճանաչում էի,  
երբ գեռ երեխայ էր. այդ հասակում եւս նա այնքան  
յանդուգն էր եւ կոռուպրար, որ ոչ ոք չէր սիրում  
նրան: Տեսնելով, որ մեզ մօտ բնակուելը իրան շատ  
շահաւէտ չէ հեռացաւ դէպի Պարսկաստան, այնտեղ  
մտաւ ծառայութեան մէջ նադիր-շահի մօտ եւ ջառչի  
(մունետիկ) պաշտօն էր կատարում: Խակ յետոյ վերա-  
դարձաւ մեզ մօտ: Նրա ճարպկութիւնը, խորամանկու-  
թիւնը, խօսելու մէջ վարպետութիւնը, որը սովորել էր  
իրանցիներից, նրան յաջողեցրին գրաւելու մեր պարզամիտ  
ջուանշերցիների խելքը, եւ դրանով եղաւ նրանց տանու-

<sup>1</sup> Քէրիմ-խանը էր հիմնողը զանդիների տոհմի թագաւորութեանը  
պարսից գահի վրայ, ապրում էր Ժ. Ռ. Պ. գարու երկրորդ կիսարաժնի  
սկզբում: Ծան. Հեղ.

Քէրիմ-խան, տես մեր “Խամսայի Մելիքութիւնները”, գրքի  
76, 77, 128, 138 երեսներում: Ծան. Թարգ.:

<sup>2</sup> Փանահ-խան: Իր վէպի մէջ հեղինակը պատմական կէտից բաւ-  
ական ճիշտ կերպով նկարագրում է Փանահ-խանի ծտգումը եւ նրա զօրա-  
նալու պատճառները: Խակ աւելի ընդարձակ մանրամասները ընթերցողը կա-  
րող է գտնել մեր “Խամսայի Մելիքութիւնները”, գրքի IX—XV գլուխնե-  
րում: Ծան. Թարգ.:

տէր: Միայն Հասանն էր, որ ընդդիմացաւ Փանահ-խանի  
ընտրութեանը, բայց այդ վերջինը յաղթող հանդիմացաւ,  
եւ Հասանը ստիպուեցաւ հեռանալ:

— “Ափսոս, շատ ափսոս, պատասխանեցի ես,  
նա ինձ շատ հարկաւոր էր: Ես ունեմ նրա անունով մի  
յանձնարարական նամակ իմ հօրեղքօրից՝ Վարանդայի  
իշխանից:

— “Լսիր, ասաց ծերունին. — ոչ ոքին չի պիտի  
յայտնես, թէ դու Հասանի բարեկամն ես, եթէ այդ գի-  
տենան, քեզ համար վատ կը լինի: Խստակ սրտով խոր-  
հուրդ եմ տալիս քեզ:

“Ես գոհունակութեամբ շնորհակալութիւն յայտնեցի  
ծերունուն նրա նախազգուշութեան համար: Երբ նա  
խմացաւ իմ նպատակը, թէ դիտաւորութիւն ունեմ  
ջուանշերցիների մօտ սովորելու պատերազմական արհեստը,  
սկսեց խնդրել ինձ, որ բնակուեմ իր մօտ:

— “Իմ որդիները կը լինեն քո ընկերները,  
ասաց նա, — նրանք համարվում են ամենալա-  
ձիավարներ մեր ցեղի մէջ: Իմ տունը կը լինի քո  
տունը:

“Յետոյ կանչեց իր որդիներին եւ նրանց ներկայա-  
ցրեց ինձ: Այդ երիտասարդները եղան պէս ընդունեցին  
ինձ: Նրանց անկեղծ դէմքերը ինձ շատ հաճելի թուեցան:  
Երեցը, որ կոչվում էր Արդուլ, կարծես թէ, պատկա-  
նում էր հսկաների սերունդին. նա խիստ բարձրահասակ  
էր: Նրա մարմնի բոլոր գծերի մէջ արտայայտվում էր  
արիութիւն եւ քաջութիւն: Նրա բոլոր անդամները ցոյց  
էին տալիս դիւրաթեքութիւն եւ արագաշարժութիւն:  
Ամեն ինչ նրա մէջ էր հոյակապ եւ վեհանձնական: Ար-  
դուլին չէր կարելի գեղեցիկ համարել, բայց դէմքը բաւա-

կան գիւրեկան էր, թէեւ արտայայտում էր մի ինչ որ խորին խստասրտութիւն։ Կրտսեր որդին, որ կովում էր իսմայիլ, բարձրահասակ չէր. նրա բոլոր գծերի մէջ երեւում էին կանացի քնքշութիւններ։ Նրա ձայնը այնքան գրաւիչ էր, որ թափանցում էր ուղիղ մարդու հոգու մէջ։

“ ծերունին իմ վերաբերութեամբ հնարեց մի չեղած պատմութիւն, որը հազրդեց իր որդիներին, ասելով, իբր թէ ես մի մուսուլման եմ Խօրասանի կողմերից. թէ նշանաւոր պատճառներ ստիպել են ինձ թողնել իմ հայրենիքը. թէ ես սպանել եմ մի պարսիկ աստիճանաւորի, որը ցանկանում էր վերաւորել ինձ, եւ այդ սպանման պատճառով հեռացել եմ Խօրասանից, ապաստան գտնելու աղատ ջուանչիքիների մօտ։

“ Երիտասարդդները լսելով այդ առասպելը, երգուեցան իմ եղայրներ լինել, եւ խնդրեցին, որ ես համարեմ նրանց կայքը եւ բնակարանը որպէս իմ սեպհականութիւն։

— “ Բայց դուք չե պիտի զարմանաք, զաւակներս, շարունակեց խելացի ծերունին, — երբ կը տեսնէք, որ մեր հիւրը մեզ հետ չե կատարում այն սուրբ պաշտամունքները, որոնք սահմանուած են մեզ համար երկնային գլքով։ Որպէս պատիժ իր գործած յանցանքի, նա շարունակ հինգ տարի չէ կարող գնալ մէշեղը նա մազ<sup>1</sup> անելու եւ մեր կրօնական միւս ծէսերը կատարելու համար։ Այդ արգելումները զրուած են նրա վրայ, որպէս սաստիկ պարտաւորութիւն, մի սուրբ շէյխի ից<sup>2</sup>,

<sup>1</sup> և ա մազ նշ. աղօթք. Ծան. հեղ.։

<sup>2</sup> Շէյխի, մահմեդական կրօնաւոր. Ծան. թարգ.։

որին խոստովանուել է նա իր հետ պատահած արկածները։

Ես հասկացայ ծերունու նպատակը եւ սրտումն շնորհակալ եղայ նրանից։ Բայց նրա մանկահասակ որդիքը զարմանում էին շէյխի իմ վերաբերութեամբ սահմանած խիստ ապաշխարանքի մասին։

“ Երբ նրանք հեռացան, որ տեղաւորեն իմ ձին եւ նրան ձարակ տան, ծերունին ինձ հետ միայնակ մնալով, ասաց։

— “ Դու մի զարմացիր այդ նախազգուշութիւնների համար, որ ես գործ եմ դնում։ Այժմ մեզ մօտ այն ժամանակները չեն մնացել, որպէս առաջ էր, երբ որ թագաւորում էր ազատութիւնը մտածելու եւ զգալու որպէս մարդ ցանկանում էր։ Մեր այժմեան մօտաւոր ծանօթութիւնը իրանցիների հետ ծանօթացրեց մեզ մահմեղական մոլեռանդութեան բոլոր ցնորաբանութիւնների, բոլոր այլանդակութիւնների հետ։ Առաջ մեզ համար մի եւ նոյն էր՝ թէ քրիստոնեան, թէ մուսուլմանը եւ թէ մինչեւ անգամ ջհուղը, երբ պատահում էր նրանց հիւր լինել մեզ մօտ։ Իսկ այժմ մուսուլման չլինելը մի սարսափելի արատ է, եւ ես մեր ամբողջ վրանաբնակների կողմից ինձ պիտի ենթարկեի անախորժութիւնների, նրա համար, որ պահեցի ինձ մօտ մի քրիստոնեայ հիւրին։ Երեւակայեցէք, այդ մոլեռանդութիւնը այժմ այն աստիճան արմատացել է մեր մէջ, որ ես այդ գէպքում չեմ կարող հաւատալ մինչեւ անգամ իմ հարազատ որդիներին։ Դրա համար էլ ես հնարեցի այն առասպելները։ Խօրասանցու կեղծ անունով դու կապըես մեզ մօտ, որպէս քո տան մէջ։ Ամենքը կ'աշխատեն որոնելու քարեկամութիւնը։ Ես քեզ դրանից յետոյ պիտի կոչեմ Մահմեդ։ Եւ որպէս զի դու ստիպուած չլինելիր կա-

տարելու մեր մահմեդական ծէսերը, ես հնար գտայ դրանից եւս քեզ ազատելու:

— «Ախ, ջումշուդ, յառաջ տարաւ ծերունին, — ճշմարիտ ասած, շատ ցաւալի է, երբ մտածում ես, թէ ինչ ժամանակների ենք հասել, որ ես ստիպուած եմ խաբել, սուտ խօսել մինչեւ անգամ իմ զաւակների առջեւ: Ուր կորաւ մեր նախնական անկեղծ պարզութիւնը, մեր սրտերի ուրախութիւնը: Այդ բաւական չէ, ստիպում են մեզ թագյնել մեր կնիկներին, ստիպում են փաթաթել նրանց չադրան երի<sup>1</sup> մէջ եւ պահել: Իսկ մենք, տղամարդիկներս, պէտք է բոլոր աշխատութիւնները կատարենք<sup>2</sup> վախենալով, մի գուցէ մեր կնիկներին դուրս հանելով, մի որ եւ իցէ մարդ կը տեսնէ նրանց երեսները: Ես լսեցի, որ Փանահ-խանը, պարսից խաների սովորութեան համեմատ, արդէն կազմակերպում է իր համար մի ամբողջ հարեմ<sup>3</sup>: Նրան պակաս են միայն ներքինիները (թող Ալահը ուղարկէ նրանց վրայ իր նզովքը): Այժմ Փանահ-խանի կնիկները արդէն թագնուած են չագրաների մէջ եւ երեսների վրայ կրում են անթափանցիկ, ցանցատեսակ քօղ (բուրքէնդ): Այդ վատ, շատ վատ է...»

«Այդ բոլոր խօսքերը ասում էր ծերունին կիսաձայնով, վախենալով, մի գուցէ լսէին նրա դատողութիւնները:

<sup>1</sup> Զադրա կամ չադր-չաբ, մահմեդական կնոջ սփածանելիք: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Խաշնարած ցեղերի մէջ տղամարդի եւ կնոջ աշխատութիւնները տես էջ 403, ծան. 1:

<sup>3</sup> Մահմեդական խանարած ցեղերը, որոնք դեռ ապրում են նահապետական պարզութեան մէջ, իրանց կնիկներին փակուած դրութեան մէջ չեն պահում: Նրանք կանանց կամ հարեմ չըւնեն: Ծան. թարգ.:

“Արեգակը մայր մտաւ: Փիշ-ն ամազը<sup>1</sup> կարդաց ազանը<sup>2</sup> հրաւիրելով աղօթելու: Ծերունին թողնելով ինձ, դիմեց զէպի մի տաղաւար, որ ծառայում էր մէջդի փոխարէն: Այնտեղ ամեն կողմից թափվում էր ժողովուրդը աղօթելու համար: Ես մնացի միայնակ, նստած թաղեքի վրայ, որ տարածուած էր ծերունու խրճիթի առջեւ, եւ մեծ բաւականութեամբ նայում էի երեկոյեան սքանչելի արշալուսի վրայ, որը ոսկէ գունով նկարում էր երկինքը:

## V.

### Գեղեցիկ Սալիհան:

“Ծերունին վերադարձաւ շատ ուշ, իր երկու որդիների հետ, եւ խնդրեց ինձ մտնել տաղաւարը, ուր պատրաստուած էր ընթրիքը: Այնտեղ տեսայ նրա կնոջը, որի անկեղծ, ուրախ կերպարանքը ինձ խիստ հածելի թուեցաւ: Կնոջ մօտ նստած էր ծերունու դուստրը, մի մանկահասակ, տասն եւ վեց տարեկան աղջիկ, որ զբաղուած էր մեզ համար ոչխարի կաթ պատրաստելով: Նա փաղաքշանքով նայեց իմ վրայ, եւ թեթեւ կերպով զուխ տալով, ողջունեց ինձ: Ախ, իմ սիրելի աստղագէտ,

<sup>1</sup> Փիշ-ն ամազ կոչվում է նա, որ մինարէթներից կոչում է մուսուլմաններին աղօթելու: Ծան. հեղ.:

<sup>2</sup> Մէջդների մինարէթների բարձրութիւնից աղօթելու հրաւելք կարդացողը (ազան տուողը) կոչվում է մուազին եւ ոչ թէ փիշ-ն ամազ: Իսկ փիշնամազ ասում են այն մահմեդական հոգեւորականներին, որոնք առանձին արտօնութիւն ունեն մէջդներում հրապարակական աղօթքը սկսելու եւ ժողովուրդը հետեւում է նրանց աղօթելու օրինակին: Փիշ-ն ամազ բառի բուն նշանակութիւնն է առաջին աղօթող կամ աղօթքը սկսող: Ծան. թարգ.:

<sup>3</sup> Ազան, ձայնաւոր աղդաբարութիւն աղօթելու ժամը որոշելու համար: Ծան. թարգ.:

երկնքի վրայ գտնուած բոլոր աստղները չեին կարող համեմատուել նրա սեւ աչքերի փայլի հետ։ Նրա ալեւից վառուած դէմքի վրայ նկարուած էր մի տեսակ կախարդիչ հրապուրանք։ Ես չեի կարողանում աչքերս հեռացնել նրանից, եւ խորին հոգեզմայլութեամբ գաղտուկ նայում էի սքանչելի Սալիհայի վրայ։

“Ես բնակուեցայ այդ բարեսիրտ մարդիկների մօտ, եւ ամեն օր բախտ ունեի տեսնելու իմ նազելի Սալիհային։ Ես օրսստօրէ զգում էի աւելի սաստիկ սէր դէպի այդ աննման աղջեկը, որը իր գրաւիչ պարզամտութեան հետ միացրել էր խիստ ուրախ եւ կենդանի բնաւորութիւն։ Նա կոչում էր ինձ կարդաշ (եղբայր) եւ երեւում էր. որ մի առանձին բաւականութիւն էր գրանում իմ ներկայութիւնից։ Այդ երջանիկ լեռնաբնակների բարք ու վարքի պարզութիւնը չէր արգելում ազատ յարաբերութիւններ երկու սեռերի մէջ։ Այդ միջոց էր տալիս ինձ աւելի մօտ լինել Սալիհային եւ քաղցրացնում էր մեր բարեկամութիւնը միշտ նորանոր վայելութիւններով։ Նրա եղբայրների հետ շատ անգամ ես ձիով ման էի գալիս, գնում էինք որսորդութեան, եւ ես եղայ նրանց հետ աւելի մտերիմ, քան թէ կարող էր լինել մի սերտ բարեկամ։ Մենք սիրում էինք սանձահարել անվուսպ, սաստիկ խստերախ նժոյգներին, սիրում էինք՝ թուշելով նրանց վրայ, կամ դէպի ցած սլանալ սարսափելի զառիվերներից եւ կամ բարձրանալ ահուելի ժայռերի վրայ։ Մենք ձիու վրայ կատարում էինք զանազան տեսակ խաղեր։ Երբեմն սաստիկ արագավազ ընթացքի միջոցում գետնից վեր էինք բարձրացնում օդի մէջ ձգած խնձորը, եւ կրկին նետում էինք միմեանց դլսի վրայով։ Երբեմն

չի րի դ<sup>1</sup> էինք խաղում, կամ հրացաններով նպատակին դիպցնելու փորձեր էինք անում, եւ ես ամեն օր սովորում էի աւելի եւ աւելի ճարպկութիւններ, աւելի հմտութիւններ ձիավարելու մէջ։

“Սալիհան սիրում էր ինձ ամենաջերմ սիրով։ Ես նկատում էի այդ սէրը նրա հիանալի հայեացքի մէջ, որը միշտ յառած էր լինում իմ վրայ, նկատում էի նրա խորին ուշագրութեան մէջ դէպի այն բոլորը, ինչ որ ինձ էր վերաբերում։ Բայց նա սիրում էր ինձ, ինչպէս մի եղօր, ինչպէս իր միակ բարեկամին։ Նրա սիրու չէր կարող բաժանել այն սէրը, որը զգում էր դէպի ինձ, այն զգացմունքից, որ ուներ դէպի իր հարազատ եղբայրները։ Այդ երկու հակումները, թէ դէպի ինձ եւ թէ դէպի իր եղբայրները, ոչինչով չեին տարբերվում նրա սրտում։ Նրա մայրը միամիտ կին էր եւ մտածում էր միայն տնային տնտեսութեան վրայ։ Ինձ ոչ սակաւ անգամ յաջողվում էր միայնակ մնալ Սալիհայի հետ, օգնել նրան կատարելու իր այս եւ այն աշխատութիւնները, եւ երբեմն գնալ նրա հետ ջուր բերելու լեռնային առուակներից։ Այսպիսի դէպքերում մենք դիտմամբ դանդաղացնում էինք մեր ընթացքը, եւ ես այդ ժամանակ քաղում էի նրա համար գեղեցիկ ծաղկներ, որոնցով զարդարուած էին լեռները։ Այդ ծաղկներով նա ուրախանում էր, որպէս մի երեխայ։ Երբեմն սեղմում էի նրան իմ կուրծքի վրայ, համբուրում էի նրա մարջանի նման կար-

<sup>1</sup> Չի րի դ ասում են այն խաղին, երբ ձիարշաւի ժամանակ միցողները աշխատում են միմանց հարուածել այդ խաղի համար յատկապէս պատրաստուած գաւաղաններով։ Այդ խաղը հին ժամանակներում հայրց մէջ կատարվում էր փոքր ինչ այլ ձեւով, եւ կոչվում էր մականական կարևորութան։

միր շըթունքները։ Բոլոր այդ դէպքերում նա չէր ընդդիմանում, դնում էր իր գեղեցիկ գլուխը իմ ուսի վրայ, եւ երեխայական քնքոյշ հաւատալսմութեամբ նայում էր իմ աչքերի մէջ, հարցնելով։ — “Նղբայր, դու ինձ միշտ պիտի սիրեսու։ Ես խոստանում էի նրան մշտական սէր եւ բարեկամութիւն։ Դրանով նա ուրախանում էր, եւ որպէս մի թեթեւ այծեամն, վազվզում էր, թռչուտում էր, իրան գոհ եւ բախտաւոր էր համարում։ Շատ անգամ իմ դիւրազրգիու արիւնը բորբոքվում էր եւ ես զգում էի, թէ որպիսի սաստիկ կրակ այրում էր իմ սիրու. . . . Բայց Սալիհան այնքան անմեղ կերպով հաւատացած էր ինձ, նա այնքան միամիտ էր եւ պարզասիրտ, որ ես վախենում էի խանգարել նրա երեխայական բախտաւորութիւնը. . .

Այդ դրութեան մէջ էին մեր յարաբերութիւնները, երբ սկսեց մօտենալ ժամանակը, որ պէտք էր ցածիչնել լեռներից տափարակների վրայ ձմերելու համար։ Կարծեմ, դու շատ լաւ դիտես, որ Ղարաբաղի բոլոր խանարած ցեղերը գարնան սկզբից սկսում են հեռանալ դէպի լեռները, եւ հետզիւտէ աստիճանաբար բարձրանում են նրանց վրայ, այն չափով, ինչ չափով սաստիմնում է արեգակի տօթը, որը ցամաքացնում է բուսականութիւնը տափարակների վրայ, եւ դաշտային տեղերում մարդկային կեցութիւնը դարձնում է անկարելի։ Երբ սկսում է աշունքը, այդ խանարածներն եւս սկսում են փոքր առ փոքր ցած իջնել լեռներից, որոնց վրայ ցուրտը արդէն զգալի է գառնում։ Իսկ ձմեռը կրկին բնակվում են իրանց ձմեռնային, խրճիթներում, որ փորուած են գետնի տակ։

<sup>1</sup> Չնայելով, որ հեղինակի նկարագրած ժամանակներից անցել է մէկ եւ կես դար, ջուանշեցիք գեռ եւս չեն փոխել իրանց կենցաղավարու-

Այսպէս չուելով մի տեղից միւս աևլ, նրանք տալուայ ամբողջ ընթացքում վայելում են ծաղկեալ գարուն. եւ նրանց բազմաթիւ հօտերը, գեղեցիկ նժոյգների ընտիր երամակները միշտ գտնում են դալար եւ սննդարար կերակուր։

“Եւ այսպէս, ջուանշեցիները վերադարձան ամարանոցից եւ բնակուեցան իրանց ձմեռնային գետնափոր խըթակիթներում։ Այդ ժամանակ պատահեց մի անցք, որը ունեցաւ նշանաւոր աղբեցութիւն իմ վեճակի փոփոխութեան վրայ։

“Քարիրլուցիները<sup>1</sup> քշեցին, տարան մեր ձիաները։ Ջուանշեցիները սաստիկ վրդովուեցան այդ յափշտակութեան պատճառով։ ՎՃռեցին վրէժինդիր լինել։ Մեր բոլոր ընտիր ձիաւորները հաւաքուեցան եւ ուխտեցին չափի խուն անել (ասպատակել) քարիրլուցիների ձմերանոցը։ Ես էլ մասնակցեցի այդ արշաւանքի մէջ։ Սալիհայի երեց եղբայրը եւ մինչեւ անգամ ծերունի հայրը միացան քաջերի հետ։ Ես շատ թախանձեցի ծերունուն, որ նա յետ մնայ այդ վտանգաւոր ձեռնարկութիւնից, բայց նա չկամեցաւ լսել ինձ։ Նա կորցրել էր իր ամենալաւ նժոյգներից մէկը, արաբական ցեղեց, որին խիստ թանգ էր գնահատում։ Սալիհայի կրտսեր եղբայրը մնաց տանը։ Նա խիստ տխուր էր, որ նրան զրկեցին մասնակցել մեր քաջագործութիւնների մէջ, բայց այդ անհրա-

թեան եղանակները։ Կրանք եւ մինչեւ այսօր բնակվում են գետնափոր խրճիթներում, այն եւս ձմեռը միայն, իսկ տարուայ տաք եղանակներում թափառում են զանազան տեղեր. բնակուելով շարժական տաղաւարների մէջ, որ պատրաստվում են եղէզներից ու ծածկում են թանձր թաղիթներով։ ‘Ծան. թարգ.։

<sup>1</sup> Քարիրլուցիները մի առանձին խանարած ցել են Ղարաբաղուած։ ‘Ծան. թարգ.։

Ժեշտ էր, որովհետեւ մէկը պէտք է մնար տան վրայ հսկելու համար: Բոլոր կնիկները քնած էին, երբ մենք ձևագործ ընկանք, այդ պատճառով ես միջոց չունեցայ Սալիհային մնաք բարեաւ ասելու:

«Հետեւեալ դիշերը մենք հասանք քարիրլուցիների ձմերանոցը: Գիշերային մթութիւնը նպաստեց մեղ անտեսանելի կերպով մօտենալ այն տեղին, ուր պահուած էին մեր եւ նրանց ձիաների երամակները: Կոտորելով պահապաններին, մենք քշեցինք նրանց երամակները եւ ոչխարների հօտերը մեղ մօտ: Բայց խաւարի մէջ չկարողացանք նկատել, որ հովիւներից մէկը միջոց գտաւ ազատուելու, եւ փախչելով իմացում տուեց քարիրլուցիներին մեր յարձակման մասին: Մի ակնթարթում այդ վերջինները պատրաստուելով, վրայ պրծան մեր ետեւից: Եւ որովհետեւ մենք, ծանրաբեռնուած լինելով մեր հարուստ աւարով, չէինք կարող արագութեամբ շատ հեռու գնալ, այդ պատճառով նրանք կարողացան միւս օրուայ կէսօրին համար մեր ետեւից եւ շրջապատել մեղ: Կռիւը երկու կողմից եւս խիստ արիւնահեղ էր: Վերջը քարիրլուցիները յաղթող հանդիսացան: Մենք կորցրինք շատ տղամարդիկ, եւ թողնելով ամբողջ աւարը, ստիպուեցանք ազատութիւն որոնել փախուստի մէջ: Սալիհայի հայրը մահացու վէրք ստանալով իր կուրծքի մէջ, ընկաւ հէնց իմ մօտ, շարտասանելով ոչ մի խօսք: Ես նոյնպէս վէրք ստացայ գլխիս վլայ եւ կորցրի շատ արիւն:

«Կռուից յետոյ, երբ մենք ամեն ինչ կորցրած մօտեցանք մեր ձմերանոցին, բոլոր կնիկները դուրս եկան մեղ ընդառած: Նրանք, որ յոյս ունէին ուրախութեամբ հանդիպել մեղ, տեսնելով մեղ պատահած դժբախտութիւնը, սկսեցին լաց լինել, աղաղակել, փետել իրանց

ծամերը եւ պատառոտել իրանց հագուստը: Զկար նրանց մէջ մի այնպիսին, որ սուդ չանէր իր տոհմայիններից որ եւ իցէ մէկի համար, որ սպանուած չլինէր կոռուի դաշտում: Սալիհան գունաթափ, կիսամեռ, նայում էր ինձ վրայ իր գեղեցիկ աչքերով, որ լցուած էին արտասուքով: Նրա մայրը լաց էր լինում սպանուած ամուսի համար:

«Սալիհան սկսեց հոգ տանել իմ առողջութեան մասին, պատրաստեց ինձ համար հանդիսատ անկողին, որ կազմուած էր մի քանի թաղկեներից: Նա աւելի մէծ խնամք ունէր իմ վրայ, քան թէ իր եղօր վրայ, որը նոյնպէս վիրաւորուած էր, բայց թեթեւ կերպով: Այդ վերջինը շուտով առողջացաւ, եւ կրտսեր եղօր հետ շատ անգամ հեռանում էին տնից, գնում էին անտառը գաղաններ որսալու: Մայրը միշտ զբաղուած էր իր տնտեսական գործերով, եւ ես վայելում էի մի անգամակ տեսնելով իմ մօտ աննման Սալիհային:

«Նա մի առանձին կարեկցութեամբ աշխատում էր նախագիտել իմ ցանկութիւնները. երբեմն մի քանի ժամ շարունակ անց էր կացնում իմ անկողնի մօտ, քնքշութեամբ նայում էր իմ վրայ, աշխատելով գուշակել իմ զգացմունքները, իմ գրութիւնը: Ախ, որքան անսահման ուրախալի էին այդ ըոպէները: Մի այսպիսի բախտաւորութիւն խիստ հազիւ անգամ շնորհվում է մարդկանց: Ես շնորհակալ էի լինում Աստուծուց իմ ստացած վէրքի համար եւ այն բոլոր տանջանքների համար, որ այդ վէրքը պատճառեց ինձ:

«Մի օր Սալիհայի եղբայրները տանը չէին: Մայրը, որ սակաւ անգամ գուլս էր գալիս, նոյնպէս հեռացաւ

դէպի մերձակայ անտառը ցախ հաւաքելու համար։ Օրը թէեւ ձմեռնային էր, բայց բաւական տաք էր։ Քեզ յայտնի է, որ մեր տափարակների վրայ խիստ հազիւ անգամ է ձիւն գալս, եւ եկածը երկար չէ մնում։ Մենք Սալիհայի հետ մնացինք խրժժում միայնակ։ Ես արդէն զգում էի ինձ բոլորվին առողջացած։ զլիիս վէրքը կատարելապէս բուժուած էր։ իմ գեղեցիկ բարեկամը, ուրախանալով իմ առողջութեան վրայ, այն օր աւելի զուարժ էր, աւելի հրապուրիչ էր, քան թէ միւս օրերը։ Նա նստած էր իմ մօտ, եւ իր սովորութեան համեմատ, նայում էր իմ աշքերի մէջ։ Ես մօտ քարշեցի նրան, նա շնդիմացաւ։ Ես գրկեցի նրան, համբուրում էի եւ սքանչանում էի իմ կեանքում վայելած ամենաբերկրպալի լուպէով……։ Սալիհան նոյնպէս սեղմել էր ինձ իր կուրծքի վրայ, խորին հրճուանքի մէջ էր, եւ կոչում էր ինձ ամենահաճելի անուններով։ Նա կատարելապէս բախտաւոր էր համարում իրան, բախտաւոր իր անգիտութեամբ, իր պարզամտութեամբ……։ Իսկ ե՞ս, — ես արդէն զղջացած, տանձվում էի խղճի խայթով……

“Ապագան ներկայանում էր ինձ ամենասարսափելի կերպարանքով։ Ինձ լաւ ծանօթ էր մեր լեռնաբների բնաւորութեան խստութիւնը այսպիսի դէպքերում։ Ես գիտէի, եթէ Սալիհայի վարմունքը յայտնուէր, այն ժամանակ նա կորած էր, նրան կը քարկոծէին։ Եղբայրները ոչ միայն չէին պաշտպանի նրան, այլ ընդհակառակն, իրանք առաջնորդ կը լինէին, որ օրինակ կը տային մահուան դատապարտելու նրան։ Ես ամբողջ մարմնով սոսկացի, երբ նայեցի իմ նազելի Սալիհայի վրայ, որը ուրախ ժպիտը երեսին, թէքուած էր իմ ուսի վրայ։ Երեւակայում էի, որ կարելի է չէնց մի քանի բոսկեներից յետոյ, նա արիւ-

նաթաթախի ընկած կը լինի իմ աչքերի առջեւ եւ կը մեռնի զարհութելի տանջանքների մէջ։

“Նրա կեանքը ազատելու համար ինձ միայն մի միջոց էր մնում, այն է՝ պսակուել նրա հետ օրինաւոր ամուսնութեամբ։ Բայց մի անդունդ բաժանում էր մեզ միմեանցից։ Նա մահմեղական էր, խկ ես՝ քրիստոնեայ։ Սալիհան զարմանում էր իմ տխուր լուութեան վրայ։ Նա հետաքրքրութեամբ անդադար հարցնում էր։ արդեօք ես կրկին վատ եմ զգում ինձ, կամ ես չէի կամենայ մի որ եւ իցէ բան։ Ես վախենում էի յայտնել նրան իմ մոտանջութիւնները եւ բաւականանում էի պատասխանելով, թէ ես բոլորովին առողջ եմ։ Այդ խօսքերը լսելով, նրա փաղաքանքը չունէր։ Նա այնքան գոհ էր, այնքան ուրախ էր, որ ես չէի համարձակվում զրկել նրան իր զուարժութիւնից, յայտնելով, թէ որպիսի վտանգ է սպառնում թէ ինձ եւ թէ նրան։ Բայց իմ սիրտը կտոր կտոր էր լինում……

“Խսկ այն, որ թագյնում էի ես, ինքն ըստ ինքեան յայտնուեցաւ Սալիհայի պարզմութեան պատճառով։ Հէնց որ նրա մայրը վերադարձաւ անտառից, նոյն բոպէում աղջիկը պատմեց նրան բոլորը, ինչ որ կատարուել էր մեր մէջ։ Նա ուրախութեամբ խնդրում էր իր մօրը, որ շնորհաւորէ իրան, որպէս իմ ամուսին։ Յարգելի պառաւը խկոյն նկատեց իր դստեր գրութեան բոլոր զարհութեանքը։ Նա սոսկաց, մտարերելով այն դատապարտութիւնը, որ սպառնում էր իր սիրելի զաւակին։ Արգելելով նրան, այդ մասին ոչինչ չխօսել իր եղբայրների հետ, պառաւը եկաւ ինձ մօտ։ Ես տեսայ նա լաց էր լինում եւ հասկացայ, որ Սալիհան բոլորը խոստովանուել էր նրան։

“Այդ ինչ ալեցիր դու, Մահմեդ, հեկեկալով ասաց ինձ Սալիհայի մայրը։ — Դու ծածկեցիր ամօթով իմ ասք. ըստսկութեան 27

ընտանիքը, դու խեղճ, միամիտ Սալիհայի կորստեան պատճառը դարձար: Միթէ դրա համար մենք ընդունեցինք քեզ մեր օջախի մէջ, որպէս մեր հարազատ որդի: Մենք հաւատում էինք քո խստակութեանը, բայց դու խարեցիր մեզ: Կարելի է ձեզ մօտ, այնտեղ, Խօրասանում, այդ համարվում է մի հասարակ բան: Բայց մեզ մօտ, այդ լեռների մէջ, միշտ սարսափելի մահ է սպասում այն կոյսին, որ մեղանչում է ողջախոհութեան դէմ: Չարագիրծ, դու էլ անպատիժ չես մնայ. իմ որդիների խէն ջարները կը ցցուեն քո կուրծքի մէջ: Ան, սուրբ Ալի, ինչեր են պատահում: Ես պիտի տեսնեմ, թէ ինչպէս իմ թանգագին Սալիհային ամեն կողմից կը քարկոծեն մարդիկ: Ան, Ալլահ, առաջ փակիր իմ աչքերը, որ չտեսնեն այդ սարսափը... Խղճալի պառաւը սկսեց աւելի սաստիկ կերպով լաց լինել:

“Դժբախտաբար նա խօսում էր բաւական բարձր ձայնով: Սալիհան, որ այդ ժամանակ գտնվում էր գետնափոր խրճիթի միւս բաժնում, լսեց պառաւի զարհուրելի խօսքերը: Նա հասկացաւ բոլորը, եւ մեռելի նման գունաժամափ դէմքով ներս վազեց մեզ մօտ, մի քանի բուգէ լուռ կանգնած մնաց, յետոյ տաստանուելով օրօրուեցաւ եւ ցած ընկաւ համարեա իմ ոտքերի մօտ:

“Թէ ինչ կրեցի ես այդ սարսափելի բուգէներում, չեմ ցանկանում իմ ամենաչար թշնամուն անգամ: Երկինքը սոսկալի կերպով պատժում էր ինձ իմ յանցանքի համար: Այդ բուգէում ես մոռացել էի մեր կրօնքների տարբերութիւնը, մոռացել էի իմ հօրեղբօրը, մոռացել էի ամբողջ աշխարհը եւ տեսնում էի միայն զարհուրելի դրութիւնը նրա, որը ինձ համար ամեն բանից աւելի թանգագին էր... եւ ես վճռեցի:

“Այդ դէպքում անկարելի էր նրանց բացատրել, թէ որքան էլ ես սրտով ցանկանայի ազատել Սալիհայի կեանքը, դարձեալ չէի կարող, որովհետեւ ես քրիստոնեայ էի: Այդ կը նշանակէր սպանել նրան: Եւ ո՞ր բարբարոսը, եթէ նա լինէր իմ տեղը, այսպէս կը վարուէր: Ես հետեւեցի իմ սրտի ձայնին, եւ բարձրացնելով կիսամեռ Սալիհային, եւ պահելով նրան իմ գրկի մէջ, ասեցի.

— “Հանգստացիր, իմ սիրելի եւ թանգագին ամուսին, հանգստացիր եւ դու, ով յարգելի մայր, փոխանակ տրամութեան, թող ուրախութիւնը լցնէ մեր սրտերը: Ես յանցաւոր եմ ձեր առջեւ, բայց չէնց այսօր կը քաւեմ իմ յանցանքը: Հէնց որ կը վերադառնան Սալիհայի եղբայրները, ես խկոյն կը խնդրեմ նրանց համաձայնութիւնը, որ մենք միանանք օրինաւոր ամուսնութիւնով: Զենք յայտնի նրանց պատահածի մասին, կը ծածկենք նրանցից մեր գաղտնիքը: Դու, իմ թանգագին Սալիհա, կը լինես իմ սիրելի կինը, իսկ դու, յարգելի մայրիկ, կ'ունենաս մի նոր որդի:

“Արտասանելով այդ խօսքերը, ես մոռանում էի, որ խօստանում էի մի անկարելութիւն, որով ստիպուած պիտի լինէի կամ դաւաճանել իմ կրօնին, կամ մեղանչել իմ խօստան դէմ: Ես տեսնում էի միայն իմ Սալիհայի սարսափելի վլձակը եւ պատրաստ էի ամեն քայլ անել:

“Զեմ կարող նկարագրել այն ուրախութիւնը, որ տեղի ունեցաւ իմ խօսքերից յետոյ: Սալիհան անսահման հոգեղմայլութեամբ ընկաւ իմ գիրկը: Նրա մայրը չոքեց գետնի բրայ, աղօթում էր ինձ համար: Ես այդ բուգէում գտնվում էի անշափ բախտաւորութեան մէջ:

Ճումշուղի ամուսնութիւնը Սալիհայի հետ:

“Երբ որ վերադարձան Սալիհայի եղքայրները, ես յայտնեցի նրանց իմ ցանկութիւնը, թէ գիտաւորութիւն ունեմ ամուսնանալու նրանց քրոջ հետ։ Նրանք ուրախութեամբ տուեցին իրանց համաձայնութիւնը, որով հետեւ եղքօր պէս սիրում էին ինձ։ Միւս օրը նշանակուեցաւ մեր ամուսնութեան խորհուրդը կատարելու համար։ Առաջին օրը հաւաքուեցան մեր խրճիւմ շատ տղամարդիկ եւ կանայք, զուարձանում էին, երգում էին եւ քէֆ էին անում։ Երկրորդ օրը կատարուեցաւ ին այ ով<sup>1</sup> ձեռքեր ներկերու սովորութիւնը։ Երրորդ օրը բոլոր պատրաստութիւնները պսակի խորհուրդը կատարելու համար արդէն կարդի էին դրուած։ Եւ չը նայելով բարք ու վարքի պարզութեանը, որ տիրում է ջուանշերցիների մէջ, ես ստացայ այդ օրուայ մէջ բազմաթիւ ընծաներ իմ հարսնացուի ազգականներից եւ բարեկամներից։ Ես հագնուած էի փառաւոր կերպով։ բոլորը աշխատում էին ցոյց տալ ինձ իրանց համակրութիւնը։ Եւ ես էի այն օր կատարելապէս բոլոր հրաւիրեալների պետք։ Իմ հարսնացուի երկու եղքայրները էին այնօրուայ հանդէսի մէջ իմ սաղդ աստը եւ սոլդ աստը<sup>2</sup> գրանք ամենայն ձշութեամբ կատարում էին

<sup>1</sup> Իսին առանձին բոյս է, որով տաք կիմաներում բնակուողները տրորում են իրանց ձեռները եւ ոտները։ Ծան. Հեղ.։

Իսին ան մի առանձին բոյս է, որը չորացնելով եւ փոշի դարձնելով, շաղախում են ջողվ, եւ գործ են ածում մազեր եւ մարմնի այլ մասները ներկելու համար, գլխաւորապէս ձեռները եւ ոտները։ Կերկած տեղը մոյգծիրանի գոյն է ստանում։ Ծան. թարգ.։

<sup>2</sup> Սաղդ աստ եւ սոլդ աստ, նշ. աջ եւ ձախ կողմի մարդ։ Ծան. Հեղ.։

իմ բոլոր հրամանները։ Ես մոռացայ քեզ ասելու, որ հարսանիքի հանդէսը կատարելու ժամանակ ինձ յատկացրել էին մի առանձին խրճիթ, որը բաւական հեռու էր Սալիհայի խրճիթից։ Սալիհան այնօր հագած ունէր իր ամենաշքեղ զգեստները, օծուած էր անուշահոտ իւղերով, ստանում էր նոյնպէս ընծաներ։ Բոլոր կանայքը, որ հաւաքուած էին նրա մօտ, անընդհատ հանաքներ էին անում եւ զուարձացնում էին նրան։

“Երբ որ ժամանակը հասաւ, ես նստեցի ձիու վրայ, եւ իմ բոլոր հիւրերի ուղեկցութեամբ, գնացի Սալիհային ընդառաջ։ Ես եւս մօտենում էր ինձ հակառակ կողմից, նոյնպէս ձիին վրայ նստած եւ շրջապատուած իր ազգականներով ու բարեկամներով։ Ճուանշերցիների սովորութեան համեմատ, դեռ Սալիհան բոլորովին ինձ չմօտեցած, ես նետեցի դէպի նրան մի խնձոր, որ այս նպատակով ձեռքում բռնած ունէի։ Դա մի նշան էր խաղերը սկսելու համար։ Այդ միջոցին Սալիհան, որ նստած էր մի ամենալաւ նժոյգի վրայ, նետի նման պացաւ դէպի իր բնակարանը։ Իմ խումբը ընկաւ նրա ետեւից։ Նրա խումբը ընդիմագրում էր, աշխատում էր օգնել փախստականին։ Իսկ իմ մարդիկը աշխատում էին բռնել Սալիհայի ձիու սանձից եւ կանգնեցնել նրան։ Երկար մրցութիւնից յետոյ, մէկը իմ խումբից կարողացաւ կանգնեցնել նրան։ Մէնք միացանք եւ ամբողջ խումբերով դիմեցինք դէպի իմ բնակարանը։ Երբ որ հասանք իմ խրճին, ես սկսեցի խնդրել Սալիհային, որ ցած իջնէ

Սաղդ աստ նշ. աջ ձեռք, իսկ սոլդ աստ նշ. ձախ ձեռք. այսպէս կոչվում են այն երիտասարդները, որոնք հարսանիքի հանդէսը կատարելու ժամանակ, աջ եւ ձախ կողմերից շրջապատում են փեսային։ Դրանք փոխարինում են մեր մակարներն երին։ Ծան. թարգ.։

ձիուց. ինձ հետ ձայնակցեցին եւ նրա բոլոր ազգականները: Բայց կանայքը, որ ուղեկցում էին Սալիհային, յորդորում էին սրան չկատարել իմ խնդիրքը: Այդ հասարակ ծէսի համար տեղի ունեցան երկար հակածառութիւններ: Վերջապէս Սալիհան ձիուց ցած իջաւ, ես ընդունեցի նրան եւ հանդիսաւոր կերպով ներս տարաց իմ խրճիթը: Մօլան պատրաստ էր. նա կատարեց պսակի խորհուրդը, կարդալով մի քանի գլուխներ զօրանից: Յետոյ բոլորը հաւաքուեցան իմ խրճիթում, աղաղակում էին. երգում էին եւ թռչկոտում էին: Երբ նուագածուները իրանց քամանչան երով<sup>1</sup> յայտնուեցան, հանդիսականների ուրախութիւնը աւելի կենդանացաւ: Սկսեցին պարել: Բոլորը միմեանց ձեռքից բռնելով, եւ շրջանակներ կազմելով, նուագարանների եղանակի համեմատ, զանազան շարժումներ էին գործում մինչեւ կէս գիշեր: Մեր ձմերանոցի բոլոր խաշնարածները զուարձանում էին իմ հարսանիքում: Սալիհան գոհ էր եւ ուրախ, ինչպէս մի երեխայ, նա բոլորովին նուիրուած էր ինձ եւ անսահման կերպով սիրում էր ինձ: Նրա եղայրները եւ մայրը նոյնպէս գոհ էին Սալիհայի բախտաւորութիւնով: Իսկ ես գոհ էի իմ նուիրած զոհարերութեամբ, որով գարձայ փրկիչ այն արարածի կեանքին, որին սիրում էի, եւ բախտաւորացրի նրա ընտանիքը:

“Ինձ տուեցին որպէս մշտական սեպհականութիւն այն խրճիթը, որի մէջ կատարուեցաւ իմ ամուսնական խորհուրդը, եւ ես բնակուեցայ այնտեղ իմ անդին կենակցի հետ: Ո՞րպիսի բերկրալի օրեր անց էի կացնում ես նրա հետ. ո՞րքան անսահման բաւականութիւն էի

<sup>1</sup> Քամանչան, մուզիկայի գործիք է: Ծան. հեղ.:

վայելում նրա կուրծքի վրայ: Սալիհան այնքան բարի էր, այնքան հնազանդ էր, այնքան սիրելի էր, որ ես համարում էի ինձ այս աշխարհի մարդիկներից ամենաբախտաւորը եւ բոլորովին մոռացել էի իմ դրութիւնը:

“Երբեմն իմ առանձնակի խորհրդածութիւնների ժամանակ, ինձ ներկայանում էր իմ գործած յանցանքը, — այն գեղջումը, որ ես կատարել էի մեր կրօնի կանոնների հակառակ, որոնք արգելում են քրիստոնեային ամուսնական կապով միանալ մահմեդականի հետ: Ես զգում էի, որ ես շատ վատ եմ, եւ չգիտէի, թէ ինչ երեսով պիտի յայտնուեմ հօրեղբօրս մօտ եւ ինչ պիտի ասեմ նրան: Այսպէս երբեմն տանջվում էի ես եւ յուսահատութեան մէջ պատրաստ էի ամեն ծայրայեղութիւնների գիմել: Բայց հէնց որ նայում էի Սալիհայի վրայ, իմ բոլոր մթին մտածութիւնները իսկոյն անհետանում էին, եւ բաւականանում էի միայն նրան տեսնելու զուարձութեամբ:

“Այսպէս անցաւ երեք տարի: Ես հայր եղայ մի որդու եւ մի դստեր: Զաւակներիս ծնունդից յետոյ Սալիհան երեւում էր ինձ աւելի պաշտելի եւ աւելի կատարեալ: Ես ապրում էի, ես շնչում էի միայն նրանով: Հետեւելով ամեն բանի մէջ ջուանշերցիների պարզ կենցաղաբութեան եղանակներին, մէնք նրանց հետ գարունքին չուում էինք գէպի լեռների բարձրութիւնները, իսկ երբ սկսվում էր ձմեռը, կրկն վերադառնում էինք գէպի մեր գետնափոր խրճիթները:

“Իմ երջանկութիւնը կատարեալ լինելու համար, պակաս էր միայն տեսնել իմ Սալիհային քրիստոնեայ. զրանով ես կամենում էի հանգստացնել իմ խիղճը, որը սաստիկ բողոքում էր իմ ամուսնութեան դէմ: Այդ

նպատակով ես աշխատում էի ծանօթացնել իմ կնոջը  
մեր կրօնի մաքերի եւ սուրբ ճշմարտութիւնների հետ։  
Սալիհան մեծ հաճութեամբ լսում էր բոլորը, ինչ որ  
պատմում էի նրան։ Նա շուտով ստացաւ բաւական  
չիմնաւոր տեղեկութիւններ մեր կրօնի վարդապետու-  
թիւնների մասին։ Տեսնելով նրան բոլորովին պատրաս-  
տուած, յայտնեցի նրան, որ ես քրիստոնեայ եմ եւ  
Վարանդայի մելիքի եղբօր որդին։ Պատմեցի նրան իմ  
ջուանշիրցիների մօտ ուղարկուելու իսկական նպատակը եւ  
բոլոր անցքերը, ինչպէս որ ճշմարտապէս էին։ Նա զարմա-  
ցած լսում էր իմ պատմութիւնը եւ զգում էր, թէ  
որքան շատ նրա համար զոհել էի ես, եւ խորին  
հրձուանքով հաւասացնում էր ինձ, որ պատրաստ է  
լինել քրիստոնեայ, եւ ամեն տեղ հետեւել ինձ, ուր որ  
ես գնալու լինեմ։

“Ուրախացած այդ բարեբախտ նորութիւնով, ես  
միայն մտածում էի, թէ արգեօք ինչպէս պէտք է ի կա-  
տար ածել իմ ցանկութիւնները, որոնք կայանում էին  
նրանում, որ Սալիհային մլրտել տամ, եւ իմ հօրեղբօր  
համաձայնութիւնը ստանամ, որ նա ընդունէ մեր ամուս-  
նութիւնը։

“Հօրեղբօրս ինձ համար նշանակած ժամանակամիջոցը  
արդէն անցել էր, եւ ես կարող էի վերադառնալ նրա  
մօտ, առանց որ եւ է դժուարութեան հանդիպելու։ Ես  
յայտնեցի Սալիհային իմ դիտաւորութիւնը։ Նա համա-  
ձայնուեցաւ, թէեւ չէր կարող առանց սարսափելու մտա-  
ծել, որ ստիպուած պիտի լինի առժամանակ անջատուել  
ինձանից։ Ես աշխատեցի հանգստացնել նրան, խոստանա-  
լով, որ բաժանվում եմ նրանից ոչ աւելի քան քսան  
օրով։ Ես յանձնեցի Սալիհային եւ իմ զաւակներին նրա

մօր հոգատարութեանը։ Մեր միմեանցից անջատուելու-  
րոպէն խիստ սրտաշարժ էր։ Ես յայտնեցի նրանց, թէ մի  
կարեւոր պատճառ ստիպում է ինձ գնալ Խօրասան, իբր  
թէ մի ժառանգութիւն ստանալու համար, որը մնացել  
է իմ մեռած ազգականներից մէկի մահից յետոյ։ Բայց  
միայն Սալիհային կատարելապէս յայտնի էր ճշմարտու-  
թիւնը։

“Երբ ես վերադարձայ հօրեղբօրս մօտ, ինձ տեսնե-  
լով, նա շատ ուրախացաւ։ Ես մեծ բաւականութեամբ  
վայելում էի նրա հայրական սէրը եւ փաղաքշանքը, եւ  
օր ըստ օրէ սպասում էի մի յարմար բոպէի, որ առիթ  
ունենամ նրա առջեւ բաց անելու իմ սիրտը։ Բայց այդ  
ժամանակ մենք պատերազմ ունեցանք Խամսայի մելիքների  
հետ, որը տեւեց աւելի քան երկու ամիս։ Մենք կուռում  
էինք փոփոխական բախտով։ Երբեմն յաջողութիւնը մեր  
կողմն էր լինում, երբեմն նրանց կողմը։ Վերջը հաշու-  
թեան դաշն կապուեցաւ։

“Իմ հօրեղբայրը վերադարձաւ Զանախչի, ուրախու-  
թեամբ գրկեց ինձ, գովարանում էր իմ հմտութիւնները,  
իմ ճարպկութիւնը պատերազմական արհեստի մէջ։ Հէնց  
այդ բոպէում ես պատրաստվում էի յայտնել նրան իմ  
բաղձանքը, բայց նա իմ խօսքը կտրեց, ասելով, թէ իմ  
տղայութեան հասակից նա ուխտ է գրել Թալիշի մելիքի  
հետ, նրա աղջիկը ինձ համար կնութեան առնելու, երբ  
ես քսան եւ մէկ տարեկան կը լինեմ, իսկ իմ հարսնա-  
ցուն տասն եւ վեց տարեկան։ Եւ աւելացրեց, թէ հիմայ  
ժամանակը հասել է։ Եւ Թալիշի մելիքը, լսելով իմ  
վերադարձը, ուղարկել է իր որդուն, որ հրաւիրէ մեզ  
Զէյվա, կատարելու համար արդէն վաղուց նշանադրուած  
ամուսնական պսակը։

“Հսելով այդ խօսքերը, ես շուարած մնացի, իմ բոլոր յոյսերը կորան։ Խսկ հօրեղբայրս խօսում էր այդ խնամութեան վրայ խիստ մեծ փափագով։ Դիրանով նա յոյս ունէր ամրացնել հաստատուն հիմքի վրայ մի սերտ, բարեկամական կապ ԽՍԱՄԱՅԻ բոլոր մելքների մէջ։ Տեսնելով նրա զիտաւորութիւնները, այլ եւս չհամարձակուեցայ յայտնել նրան, թէ ես արդէն ամուսնացած եմ, որովհետեւ գիտէի, որ նա իր քաղաքական նպատակների համար, պատրաստ կը լինի զոհել իմ թանգագին Սալիհային։ Բայց ես չէի կարող համաձայնուել նրա առաջարկութեան հետ։ այդ պարզ տեսնում ես դու։ — Ահա բոլոր պատճառները, որ ստիպեցին ինձ այնպէս յամառութեամբ մերժել նրա ցանկութիւնները եւ չյայտնել նրան իմ գաղտնիքը։ Ինքդ գատիր, աստղագէտ, արդեօք իմ վարմունքը իրաւացի չէր։

Այդ պատմութեան ժամանակ աստղագէտը իր բոլոր լսածների պատճառով գտնվում էր զարմացած եւ հիացած դրութեան մէջ։

— Դուք բոլորովին իրաւացի էք, յարգելի մելք, պատասխաննեց նա։ — Երդվում եմ իմ մօրուքով, հազար անգամ իրաւացի էք։ Ես երբէք այդ գաղտնիքը չէի հասկանայ, եթէ դուք ինքներդ չը բաց անէիք։ Ի նկատի առնելով ձեր հօրեղբօր դիւրաբորբոք բնաւորութիւնը եւ դործի այժմեան դրութիւնը, իրաւ է, որ չէ կարելի յայտնել նրան ձեր ամուսնութեան մասին Սալիհայի հետ։

— Ինձ առաւելապէս անհանգստացնում է այն, պատասխաննեց մելքը, — որ ես մինչեւ այժմ չկարողացայ տեղեկութիւն ստանալ իմ կնոջ եւ զաւակների մասին, եւ չկարողացայ նաեւ իմ մասին տեղեկութիւն տալ նրանց, որովհետեւ վախենում էի հօրեղբօրից։

Երեւակայում եմ, թէ որքան անհանգիստ կը լինեն նրանք, ամբողջ երկու ամիս ոչ մի լուր չը ստանալով իմ մասին։ Բայց ես նրանցից բաժանուելու ժամանակ խոստացայ, որ ինքս կը վերագառնամ քսան օրից յետոյ։

Աստղագէտը պատասխանեց։

— Եթէ Ալին եւ սուրբ մարգարէն յաջողութիւն կը շնորհէն եւ ես շուտով կ'ազատուեմ այդ վերապից, ես ձեզ ապահովացնում եմ, մելք, որ դուք վստահութեամբ կարող էք յանձնել ինձ ձեր մասին տեղեկութիւններ տանել ձեր կնոջը եւ զաւակներին։ Ես կ'աշխատեմ ապացուցանել ձեր առջեւ իմ հաւատարմութիւնը, որ դուք մատծէք, թէ աստղագէտ հասանն էլ մի որ եւ է բանի պէտք կը գայ։ Ես ձեզ այնքան սիրեցի, մելք, որ պատրաստ եմ կրել երկու հարիւր հարուածներ իմ ոտների տակ, միան թէ տեսնէի ձեզ հանգիստ եւ բախսաւոր։

— Շնորհակալ եմ, հասան, պատասխանեց երիտասարդը, — ես կը վարձատրեմ քո հաւատարմութիւնը, երբ որ կը կալողանամ, եւ այն չափով, որ դու միշտ կը յիշես։ Եթէ ես գիտենայի, որ իմ կինը եւ զաւակներս հանգիստ ու առողջ են, այն ժամանակ ես համբերութեամբ կը տանէի այդ բանտի չարչարանքները, որովհետեւ կը մատծէի, որ այդ բոլորը կրում եմ նրանց համար, որոնք այդ աշխարհում ամեն բանից աւելի թանգիսին են ինձ համար։

Այսպէս խօսելով, նրանք շնկատեցին, որ ամառնային կալճատեւ գիշերը արդէն անցել էր։ Եւ արշալոյսի առաջին ճառագայթները, ծագելով հրեղէն ժապաւէնի նման, աւետում էին նոր եւ պայծառ առաւօտ։ Բայց նրանց ստորերկրեայ վերապի մէջ լրսի շառաւիզները թափանցել չէին կարող։

## VII.

Թալիշի Մելիքի պատգամաւորը:

Վարանդայի մելիքը գիշերը անցկացրեց խիստ անհանգիստ կերպով։ Նա չգիտէր ի՞նչ անել։ Դառն մտածութիւնները, մինը միւսից աւելի սարսափելի, փոփոփակի կերպով վրդովում էին նրա երեւակայութիւնը։ Նա գիտէր, որ իր իշխանութեան ներքոյ դանուող երկրը այնքան մեծ եւ զօրաւոր չէ, որ կարողանայ ընդդիմագրել Խամսայի բոլոր մելիքների միացած ուժերին, որոնք վաղուց արդէն մի յարմար առիթ էին որոնում, որ զինուորուեն իր գէմ։ Նա ամենից աւելի յոյս էր դրած Թալիշի մելիքի դաշնակցութեան վրայ, որը միացած լինելով իր հետ, կարող էր խաղաղ կերպով արգելել միւս երեք մելիքների թշնամական գործողութիւնները։ Իսկ այժմ եւ այդ յօյսը, թուում էր նրան, որ բոլորովին ոչնչացաւ։ Նա վատահ էր, որ իր եղօրորդին կը նպաստէ իր քաղաքական դիտաւորութիւնների կատարմանը, բայց նա եւս, ընդհակառակն, կատարելապէս ընդդիմանում էր իրան։ Բայց ի՞նչ էր նշանակում այդ յամառութիւնը։ Ի՞նչ էր նրա պատճառը։ Զումշուղը գեռ չէր տեսած իր համար նշանագրուած հարմացուին։ ուրեմն օրիորդին անհաւան լինելը չէր կարող առիթ տալ նրան, որ չ համաձայնուի պահկուելու նրա հետ։ Պէտք է մի ուրիշ պատճառ լինէր։ Որքան աւելի մտածում էր նա, այնքան աւելի նրան անյայտ էր մնում մթին դաղսնիքը։ Հարկադրել Զումշուղին անկարելի էր։ Մելիքը շատ լաւ գիտէր իր եղօրորդու հաստատամիտ եւ անվեհեր բնաւորութիւնը։ Նա գիտէր, որ Զումշուղը ոչ մի վտանգից սուկալու սովորութիւն չունի, եւ նրա ամուր կամքը միշտ կը լինի անխորտակելի պատճեց ամեն մի բռնադատական գոր-

ծողութիւնների դէմ։ Մեղմ միջոցները չէին օգնում։ դրանք արդէն փորձուած էին։ Էլ ի՞նչ պէտք էր անել։ Ի՞նչ միջոցների պէտք էր ձեռնարկել։

Երկար դատողութիւններից յետոյ, մելիքը վճռեց, որ այդ գէպքում անհրաժեշտ է հաշտեցնել երկու հակառակ ծայրայեղութիւններ։ Նաև, մերժել Թալիշի մելիքի պահանջը այնպիսի վարպետութեամբ, որ նա առիթ չունենայ վերաւորուելու, եւ այդպիսով մնալ նրա հետ բարեկամական յարաբերութիւնների մէջ, իսկ յետոյ, ամեն միջոցներով աշխատել տեղեկանալու ջումշուղի յամառութեան գաղտնի պատճառը, որը պէտք է շատ նշանաւոր լինի, եւ հարկաւ, կ'ունենայ մեծ ազդեցութիւն ապագայ գործողութիւնների վրայ։

Մելիքը այժմ ցաւում էր, որ իր բարկութեան եւ ցասման մէջ վշտացրեց ջումշուղին եւ աստղագէտին։ Լինելով բաւական մնահաւատ, նա չէր վստահանում սկսել այդքան նշանաւոր գործեր, առանց նախապէս հարցումներ անելու աստղագէտից։ Զէր կարող եւ վստահանալ, որ աստղագէտը կ'ասէ նրան Ճշմարիտը։ Աւելի հաւանական էր համարում, որ աստղագէտը վերաւորուած լինելով, դիտմամբ կ'աշխատէր օգուտ քաղել մելիքի դրութիւնից, եւ վնասակար ու կորստաբեր աստղների ազդեցութիւնը ցոյց կը տար նրան որպէս բարեյաջող, որպէս զի ոչնչացնէ մելիքին եւ նրանից վրէժինդիր լինի։ Այդ կասկածանիքի պատճառով նա վճռեց՝ այլ եւս չհրաւիրել աստղագէտին խորհուրդ հարցնելու համար, իսկ վաղառաւուեան կանչել իր մօտ Թալիշի մելիքի որդուն, բարեկամաբար խորհուրդ անել նրա հետ եւ բացատրել ջումշուղի նրա քրոջ հետ ամուսնացնելու անկարելութիւնը։

Թալիշի մելիքի որդին արդէն տասն օր էր, որ գտնվում էր Զանախչի աւանում եւ տհաճութեամբ սպասում էր մի վճռական պատասխանի, որը օրսատօրէ յետաձգելով, ուշացնում էին: Նա մտածում էր, որ իր քրոջ հետ ամուսնանալու պատիւը պէտք է ուրախութեամբ լցնէր ջումշուդի սիրտը, բայց տեսնում էր դրա հակառակը: Այն ծածկամտութիւնը, որով թաղնում էին նրանից ջումշուդի եւ իր հօրեղօր մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները, որոնք նրա կարծիքով բոլորովին աւելորդ էին, միանգամայն համբերութիւնից դուրս էր բերում նրան: Նա արդէն վճռել էլ գնալ մելիքի մօտ եւ բացարձակ կերպով յայտնել իր պահանջը, երբ նրան կանչեցին մելիքի մօտ:

— Շատ ցաւում եմ, սիրելի Յուսէին<sup>1</sup>, որ ես պիտի յայտնեմ քեզ անախորժ նորութիւն... ասաց նա:

— Ինձ թուում է, պատասխանեց դիւրաբորբոք երիտասարդը, — որ ոչինչ բան այնքան անախորժ չէր կարող լինել, քան ինձ ի զուր սպասել տալը, որով այդքան ժամանակ տանջեցիք ինձ:

— Ի՞նչպէս, միթէ դուք ձանձրանում էք իմ հիւրասիրութիւնից:

<sup>1</sup> Յուսէին: 384 էջի, 1. ծանօթութեան մէջ ցոյց տուեցինք, որ Մելիք-Յահնազար Բ-ի ժամանակակիցը եւ նրա հետ թշնամական յարաբերութիւններ ունեցող թալիշի կամ Գիւլիստանի իշխանը էր Մելիք-Բէղլարեան Մելիք-Յովսէփը: Իսկ արդեօք այդ Մելիք-Յովսէփը ունէր Յուսէին անունով որդի, որին որպէս հերոս յիշում է հեղինակը իր վէպի մէջ, — մեզ յայտնի չէ: Մեզ յայտնի է այդքանը միայն, որ Մելիք-Յովսէփը ունէր Մելիք-Բէղլար անունով մի որդի, որը գեռ եւս հօր կենդանութեան ժամանակ յայտնի էր իր քաջագործութիւններով եւ չափազանց անվեհեր բնաւորութեամբ: Տես մեր “Խամսայի Մելիքութիւնները”, գորի 64, 82—84, 179 երեսները: Ծան. թարգ.:

— Ի հարկէ, ձանձրանում եմ, որովհետեւ ես եկած եմ այստեղ գործի համար, որը վաղուց պէտք է վերջացած լինէր: Ես չէի կարծում, որ տասն եւ չորս տարի առաջ տուած խօսքը կատարելու համար, կրկին հարկաւոր կը լինէին այդքան խորհրդակցութիւններ, այդքան յետաձգումներ:

Մելիք Յահնազարեանին չափազանց տհաճութիւն պատճառեց իւր հիւրի վարմունքը, որը այդպէս գոռոզաբար էր խօսում նրա հետ: Բայց, ողքան կարելի է, զապելով իր բարկութիւնը, շարունակեց.

— Ես վաղուց ցանկութիւն ունէի եւ մեծ ուրախութեամբ կը փութայի ձեր հօտ հետութիւն անեռ.. ես զգում եմ դէպի նա խորին յարգանք եւ բարեկամութիւն. նա միշտ գտնուել է ինձ հետ սերտ դաշնակցութեան մէջ: Բայց ինչ պէտք է արած: Ես աշխատում եմ համոզել իմ եղբօրորդուն, բայց նրա յամառութիւնը միակ պատճառն է գործի բոլոր յետաձգութեան...

— Ի՞նչպէս, ընդմիջեց նրան մելիք Յուսէինը աւելի բորբոքուելով, — ջումշուդը չէ համաձայնվում պահելու իմ քրոջ հետ: Միթէ նա կարծում է, որ կարող է մեզ հետ անպատիժ կերպով այսպիսի կատակներ անել: Եւ դուք, մելիք, լինելով այդ տան գլխաւորը, լինելով նրա հօրեղայրը, թոյլ էք տալիս նրան այդպէս վարուել: Ես պարզ տեսնում եմ, որ դուք նրա հետ կամակից էք եւ գործում էք ընդհանուր համաձայնութեամբ: Էլ ինչու էիք ինձ ի զուր տեղը այսպան սպասել տալիս: Կարելի էր շատ շուտով տալ այդ գեղեցիկ պատասխանը: Ո՞վ կը մտածէր, որ վարանդայի մելիքը կը խաղայ իր տուած խօսքի հետ, ինչպէս մի երեխայ...

— Հանդարտութիր, հանդարտութիր այ տղայ, ընդհատեց  
նրան մելիք Շահնազարեանը, — դու մոռանում ես քեզ...

— Ամենեւին չեմ մոռանում... պատասխանեց զայրացած երիտասարդը: — Իսկ դուք զգում էք, մելիք,  
թէ ի՞նչ կարծիք պէտք է ունենալ մի մարդու վրայ, որ  
տասն եւ չորս տարի առաջ, Խամսայի բողոք մելիքների  
ներկայութեամբ տուածիսոքը, առանց որեւ իցէ պատճառի,  
այժմ կամենում է ոչնչացնել: Ի՞նչ անուն պէտք է տալ  
մի այսպիսի մարդուն...

— Յուսէին, մտածիր, որ դու քո տանը չես...

— Ես ամեն տեղ մի եւ նոյն եմ. կը խօսեմ ձշմա-  
րիտը ամեն տեղ եւ ամեն մարդու երեսին: Դուք համար-  
ձակվում էք ծածկել նախատինկով իմ քրոջ եւ մեր  
ամբողջ տան անունը, իսկ ես պէտք է լոեմ...

— Բայց Յուսէին, միթէ այդ իմ մեղն է...

— Մելիք, ես երեխայ չեմ, ես լաւ հասկանում  
եմ ձեր անտեղի պատճառաբանութիւնները: Մի ծած-  
կեցէք իսկութիւնը այսպիսի դարտակ հեքեաթներով,  
որոնց ես բնաւ չեմ հաւատում: Մենք ունենք թրեր եւ  
խէնջարներ, որոնք ձեր ունեցածից ամենեւին ստոր չեն.  
Մեր զօրքը ձերից պակաս չէ: Դուք շուտով կը տեսնէք,  
թէ թալիշի մելիքը գիտէ արդեօք վրէժխնդիր լինել իր  
վիրաւորանքի համար, թէ ոչ: Ձեր Զանախչն սարերից  
չէ կազմուած...

— Յուսէին, պատիւ դնելով քո հօրը, ես միայն  
ներում եմ քեզ քո գոռող խօսքերի համար:

— Ես կարօտութիւն չունեմ ձեր ներողամտութեան:  
Ահա իմ պաշտպանը: Նա ձեռքը դրեց խէնջարի վրայ:  
— Նրանով համարձակ կ'ասեմ ամենի առջեւ, թէ Մե-  
լիք-Շահնազարեանը խաբերայ է...

Մելիքի բարկութիւնը բորբոքուեցաւ ինչպէս կայծակ,  
աչքերը լցուեցան արիւնով, եւ նա գոչեց.

— Լիրբ տղայ, դուրս իմ տնից, թէ չէ, երդվում  
եմ բոլոր սրբերի անունով, որ ես ակնածութիւն չեմ  
անի հիւրասիրութեան սուրբ օրէնքներին, որոնք պաշտ-  
պանում են քեզ իմ հարուածներից: — Դուրս, կրկնում  
եմ քեզ: Ես արհամարհում եմ քեզ, արհամարհում  
եմ քո բոլոր ընտանիքը, քո զօրքը եւ ամբողջ թալիշի  
ժողովուրդը: Թողղ լինի անէծք, մահ եւ մշտական պա-  
տերազմ մեր մէջ, մինչեւ ես կը կործանեմ քո Զէյվան  
եւ կը շաղախեմ արիւնով ձեր բնակարանների մոխիրը:  
Եթէ ես չվախենայի պղծել իմ ձեռքերը, քեզ ան-  
պատճառ կտոր-կտոր կ'անեի եւ քո մարմինը կը տայի  
դիշակեր թռչուններին ուտելու համար: — Տէր Աս-  
տուած, ինչ եմ տեսնում ես, մի համբակ համարձակ-  
վում է հայհցել ինձ...

— Մի կատաղիր, մելիք, ասաց Յուսէինը սառ-  
նասրտութեամբ, — դու ի զուր քո արիւնը կը պղտորես...  
Նա դուրս եկաւ սենեակից, հեծաւ իր ձին եւ իր խումբի  
հետ հեռացաւ Զանախչից:

Մելիքը մնաց որպէս քարացած: Մրտմութիւնից  
երկար չէր կարողանում արտասանել մի բառ անդամ:  
Բարկութիւնը բոլորովին տիրել էր նրան:

### VIII.

#### Շատ խոստացողը:

Մեր խեղձ կալանաւորները, որոնք տանջվում էին  
վիրապի մէջ, աղատուեցան: Դեռ կէսօր չէր եղած, նրանց  
կանչեցին մելիքի մօտ:

Նա սիրով ընդունեց նրանց, խնդրեց մոռանալ բոլոր անցածը, եւ յայտնեց ձումշուղին իր մշտական բարեկամութիւնը, ասելով.

— Ներիբ ինձ, սիրելի ձումշուղ, իմ բարկութեան համար: Ես, արդարեւ, վերաւորեցի քեզ, բայց պէտք է գիտենաս, որ դու ինքդ առիթ տուեցիր . . . : Ինձ այժմ սաստիկ ցաւ է պատճառում, մտածելով, որ կրկին պիտի սկսուի մեր երկրում նելքին պատերազմը, որը այժմ բոլորովին անխուսափելի է դարձել: Նստիր, ձումշուղ, այդ մասին աւելի մանրամասնաբար պիտի խօսեմ քեզ հետ: Ձումշուղը նստեց, ասելով.

— Ոչ թէ ձեզ, այլ ինձ, հօրեղբայր, պէտք է ներողութիւն խնդրել. Ես այնքան յանցաւոր եմ ձեր առջեւ, որ չգիտեմ, թէ ի՞նչով կարող եմ քաւել իմ յանցանքը:

— Մոռացութեան տանք այդ բոլորը, սիրելի ձումշուղ, ասաց մելիքը: — Ինձ ծանօթ է քո փորձառութիւնը եւ քո քաջութիւնը պատերազմական գործերում, այդ պատճառով ցանկանում եմ յայտնել քեզ իմ գիտաւորութիւները: Ես մերժեցի թալիշն մելիքի առաջարկութիւնը. դրանից յետոյ դու ազատ ես քո պարտաւորութիւնից. այդ մասին կարող ես անհոգ լինել. Ես այլ եւս չեմ ստիպելու քեզ ամուսնանալ նրա աղջկայ հետ: Ես այժմ գժոխքի նման ատում եմ նրանց բոլոր ընտանիքը:

— Ախ, որքան շնորհակալ եմ ձեզանից, հօրեղբայր, որքան բախտաւոր եմ ես եւ որքան ուրախ: Դուք չափազանց ողբրմած էք դէպի ինձ:

— Շնորհակալ մի լինիր ինձանից, ձումշուղ: Ես կռուեցայ թալիշների հետ, որովհետեւ քո նախկին

հարսնացուի եղբայրը, այն լիրը, անպիտան տղան, համարձակուեցաւ իմ տան մէջ ինձ խրատներ տալ . . . համարձակուեցաւ կոչել ինձ խաբեբայ . . . : Չեմ կարող առանց կատաղութեան մտարերել այդ բոլորը: Ես յայտնեցի նրան պատերազմ եւ մենք պէտք է դրա համար պատրաստուենք: Ինձ շատ լաւ յայտնի է, հէնց որ թալիշն մելիքը կը հրատարակէ իրան իմ թշնամի, այն ժամանակ Խամսայի բոլոր մնացած մելիքները անպատճառ կը միանան նրա հետ, եւ ես ստիպուած կը լինեմ պատերազմել չորս մելիքների դէմ: Մենք ունենք բաւական զօրք, այդ ծշմարիտ է, եւ կասկած չունենք մեր զօրքերի քաջութեան մէջ, այսուամենայնիւ, ուժերի գերազանցութիւնը դարձեալ նրանց կողմը կը մնայ. — չորսը մէկի դէմ: Մենք պէտք է աւելի հիմնաւոր կերպով մտածենք, թէ ի՞նչով կարող ենք առաջը առնել այն փոթորիկի, որը սպառնում է մեզ: Ասա ինձ, ձումշուղ, դու այնքան երկար գտնվում էիր ջուանշերցիների մօտ, ծանօթ ես նրանց բարքուվարքին ու քաջութեանը ասա, դու ի՞նչ կարծիք ունես նրանց մասին: Արդեօք նրանք նյոնքան արի են, նյոնքան ճարպիկ են կոփուների մէջ եւ նյոնքան անձնավոտահ են յարձակումների մէջ, որքան նրանց մասին խօսվում է:

— Ձուանշերցի ասպատակները ոչ առանց պատճառի հռչակուած են իրանց արհեստով եւ քաջութիւններով:

— Երբ որ այդպէս է, ուրեմն ես կը յայտնեմ քեզ իմ նպատակը: Ես կամենում եմ ինդրել Փանահիսանից եւ նրա ջուանշերցիներից, որ ինձ օգնեն մելիքների դէմ: Այդ անհրաժեշտ է: Դիտաւորութիւն ունեմ քեզ յանձնել այդ պատգամաւորութիւնը: Լաւ

Ժանօթ լինելով բոլոր հանգամանքներին, որ վերաբերում  
են այդ լեռնաբնակների բարքուվարքին, դու աւելի  
հեշտ կարող ես կատարել այդ գեսպանախօսու-  
թիւնը:

— Մեծ ուրախութեամբ կը կատարեմ ձեր հրա-  
մանը, հօրեղբայր, պատասխանեց հիացած քումշուդը: —  
Չէ՞ կարելի, որ հէնց այսօր թոյլ տաք ինձ ճանապարհ  
ընկնելու: Որքան շուտ, այնքան լաւ: Որովհետեւ մենք  
կը փութացնենք գործը, դժուարութեան մէջ զնելով մեր  
թշնամիներին, եւ միջոց կ'ունենանք նախապէս յարձակում  
գործելու նրանց երկրների վրայ:

— Քո դատողութիւնը շատ խելացի է, քումշուդ,  
բայց հարկաւոր է գոնէ մէկ օրով յետաձգել քո գնալը:  
Ես կամենում եմ, որ դու ներկայանաս Փանահ-խանին  
այն փառքով, որ պատշաճ է Վարանդայի իշխանին: Ես  
կը տամ քեզ մեծաքանակ սվիտայ (շքախումբ) եւ կը  
յանձնեմ տանելու թանգագին ընծաներ: Փանահ-խանը  
երկար տարիներ ապրել է պարսիկների մէջ, որոնց մօտ  
առանց փի շք է շե՝ չէ կատարվում ոչ մի գործ, եւ նա-  
խքը, անտարակոյս, կը սիրէ փի շք է շն եր:

Յետոյ նա դարձաւ գէպի աստղագէտը, ասելով.

— Իսկ դու, իմ թանգագին աստղագէտ, նոյնպէս  
մոռացիր մեր անցեալ տարածայնութիւնը, եւ ուղեղ կեր-  
պով որոշիր, թէ էգուց որ ժամին աւելի յարմար կը  
լինի իմ գեսպանութիւնը ճանապարհ զնելու: Միայն  
ինդրում եմ, մի խառնավնթորիր քո նախագուշակու-  
թիւնները, ինչպէս երէկ արեցիր, գործը դարտակ բանի  
չէ վերաբերում:

<sup>1</sup> Փիշք է շ. ընծայ: Ծան. հեղ..

— Ամենամեծ ուրախութեամբ, մելիք, պատասխա-  
նեց աստղագէտը. — միայն թոյլ տուեցէք ինդրել ձեզ,  
որ ինձ եւս ուղարկէք քումշուդի հետ:

— Ի՞նչու համար:

— Նրա համար, որ ձեր գեսպանութիւնը կարողա-  
նայ իր բոլոր քայլերը, իր ամեն մի վարմունքը տնօրինել  
ըստ ժամանակին, համեմատ բարեյաջող աստղների ազդե-  
ցութեանը: Ես կը լինեմ ձեր գեսպանութեան ուղեցոյցը,  
եւ դուք կարող էք յոյս գնել կատարեալ յաջողու-  
թեան վրայ:

— Համաձայն եմ, պատասխանեց մելիքը, — աւելի  
լաւ է, որ ես առժամանակ զրկուած լինել մի այնպիսի  
իմաստուն մարդու ներկայութիւնից, որպիսին դու ես,  
որը կարող է ինձ համար որոշել ժամանակները, թէ երբ  
պէտք է չիրուս ծիսել, երբ պէտք է գնալ որսորդու-  
թեան եւայն: Կարծեմ, դրանից աւելի մի այլ կարեւոր  
պարապմունք չի պիտի ունենամ մինչեւ ձեր վերադառ-  
նալը: Որովհետեւ թալիշի մելիքը միայնակ չի համարձա-  
կուի արշաւանք գործել իմ երկրի վրայ. իսկ մինչեւ  
միս մելիքներին իր հետ միացնելը, դուք Աստուծոյ յա-  
ռութեամբ վերադառն կը լինիք, եւ ես քաջ ջուան-  
շիրյների աջակցութեամբ երկիւղ չեմ ունենայ մեր ու-  
ժերի անհաւասարութեան մասին: Մնաք բարեաւ, իմ  
սիրելիներ, գնացէք հանգստացէք, երէկուայ անխորժու-  
թիւններից յետոյ, ձեզ պէտք է հանգստանալ եւ  
պատրաստուել ճանապարհի համար: Ընծաների եւ ձեր  
սվիտայի համար ես ինքս հոգ կը տանեմ:

Քումշուդը հրաւիրեց աստղագէտին իր սենեակը, այն  
պատրուակով, իբր թէ կամենում է նրանից լսել մի  
քանի նախագուշակութիւններ: Երբ նրանք առանձնացան,

ջումշուգը սկսեց զժի նման վազվգել իր սենեակում, բացականչելով.

— Ի՞նչ բախտ է, ինչ բախտ է, ես այժմ ազատուած եմ այն բարբարոսական ամուսնութիւնից, որը ինձ այնքան տանջում էր: Ես հաշտուեցայ հօրեղքօրս հետ, ես կրկին կը տեսնեմ իմ սիրելի, գեղեցիկ Սալիհյան եւ կը գրկեմ իմ երեխաներին: Այս, որքան բախտաւոր եմ ես. որքան ցանկանում եմ, որ շուտով անցկենար այդ օրը, որը անտանելի է ինձ իր երկարութեամբ... Այս տեղ ընդհատեց նա իր խօսքը, եւ դառնարով աստղագէտին, որը այդ միջոցին ինչ որ գրում էր, ասաց.

— Դէն գցիր, խնդրեմ, քո այդ կախարդական համարումները, եւ ուրախացիր ինձ հետ...

— Ես մեծ բաւականութեամբ ուրախակից եմ լենում ձեզ, պատասխանեց աստղագէտը գլուխը վեր բարձրացնելով. — Եւ հէնց այդ րոպէում ձեր ուրախութիւնը բազմապատիկ անելու համար էի կատարում իմ համարումները:

— Ես այդ բաներին շատ չեմ հաւատում. դու հաշում ես աստղների ընթացքը, բայց հիմայ ցերեկ է, նրանց տեսնել անկարելի է:

— Հարկաւոր չէ անպատճառ տեսնել նրանց: Ինձ յայտնի են նրանց շրջանները, նրանց պարտուելու ժամանակները, թէ իրանց առանցքի շուրջը եւ թէ երկրագնակ շուրջը...

— Լսիր, դու խոստացար լինել իմ հաւատարիմ ծառայ, իսկ այժմ քո կեղծուպատիր պատմութիւններով աշխատում ես խարել ինձ, ինչպէս խարում ես ուրիշներին: Խոստովանուիր, որ քո բոլոր աստղաբաշխական գիտութիւնը կատարեալ ստութիւն է:

— Դէ, մելիք...

— Պահիր քո քարոզները նրանց համար, որոնք հաւատում են քեզ: Ես չեմ մեղադրում քեզ քո խորամանկութիւնների համար. պէտք է մի բանով հաց ձարել, եւ ի հարկէ, աւելի լաւ է աստղագէտ լինել, քան թէ մուրացկանութիւն անել: Ծակատագիրը ամենին հարստութիւն չէ տախս: Դու ինչով ես մեղաւոր որ քեզ չկեցակուեցաւ խան լինել: Այն ժամանակ դու ել քո կողմից կը հաւատայիր եւ կը վարձատրէիր մի որ եւ իցէ աստղագէտին նրա նախագուշակութիւնների համար:

— Ի՞նչպէս, մելիք, միթէ դուք այդպիսի կարծիք ունէք իմ մասին...

— Ոչ միայն կարծիք, այլ համոզուած եմ, որ այդպէս է:

— Ուրեմն ես չունեմ ձեր աչքում ոչ մի արժանաւորութիւն:

— Ընդհակառակն, դու ունես հաւատարիմ ծառայի արժանաւորութիւններ, եթէ միայն ցանկանալու լինես: Եւ հաւատաք ինձ, որ այդ ծառայութիւնը քեզ համար աւելի օգտարեր եւ շահաւէտ կը լինի, քան թէ քո բոլոր աստղաբաշխական գիտութիւնը: Ես կամենում եմ յանձնել քեզ մի կարեւոր գործ: Լսիր.

Մենք էգուց պիտի ճանապարհ ընկնենք դէպի ջուանշերցիների օրաները. երբ կը մօտենանք Փանակ-խանի բնակարանին, դու պէտք է աննկատելի կերպով բաժանուես իմ սվետայից եւ գնաս իմ սիրելի Սալիհյան օրան: Այնտեղ զգուշութեամբ նրա մասին տեղեկութիւններ պէտք է հաւաքես, յետոյ պիտի աշխատես տեսնուել իմ կողջ հետ այնպէս, որ ոչ ոք նրա ազգականներից ընկատէ: Յետոյ նոյնպէս զգուշութեամբ կը

վերադառնաս ինձ մօտ եւ քո բոլոր տեղեկութիւնները կը հաղորդես ինձ: Եթէ դու այդ բոլորը խոհեմութեամբ կը կատարես, այն ժամանակ ես կարող եմ նախագուշակել քեզ համար, աւելի ճշգութեամբ քան բոլոր աստղագէտները, որ շատ թումանն եր՝ իմ քսակից կը թռչն եւ կը մտնեն քո գրպանը: Տես, պէտք է զգոյշ լինես, եւ դրանից յետոյ, այդ գործի մասին մի բառ անգամ չի պիտի հանես բերանիցդ: Որքան ուզում ես, քո աստղներով խաբիր իմ հօրեղորը եւ իմ բոլոր սվետային. այդ քո գործն է. միայն պէտք է գիտենաս, որ ես չեմ հաւատում քո համաստեղութիւններին:

— Ես պատրաստ եմ իմ ծառայութիւնը մատուցանել ձեզ, մելք, եւ դուք ինքններդ կը տեսնէք, թէ արդեօք ես կարող եմ տեղեկութիւններ հաւաքել մի գործի մասին, որ ճանձն էլ չհասկանայ: Պէտք է խոստովանուել, մելք, որ դուք առաջին խելացի մարդն էք, որոնց պատահել է ինձ տեսնել այս աշխարհում: Խօսքը թող մեր մէջ մնայ, միթէ յիմարութիւն չէ հաւատալ, թէ աստղները ազդեցութիւն ունեն մարդկային գործողութիւնների կամ վիճակի վրայ: Այսուել դեռ ոչինչ: Նայեցէք, Պալսկաստանում մի քայլ անգամ չեն անում առանց աստղագէտի հետ խորհուրդ անելու. Եթէ ձախ ոտքով անցար չէմքի վրայից — դժբախտութեան կը հանդիպես.<sup>2</sup> Եթէ փոշտացիր — վատ

<sup>1</sup> Թուման պարսից դրամ է, որը հաւասարվում է 4 արծաթբուբ: Ծան. հեղ.:

<sup>2</sup> Այ եւ ձախ ձեռքերի կամ ոտների խորհրդաւոր նշանակութիւնից ստեղծուեցան մեղանում յաջողակ եւ յաջողութիւն, ձախողակ եւ ձախորդութիւն բառերը: Ոչ միայն պարսիկների մէջ, այլ եւ հայերի մէջ աջ ոտքով առաջին քայլ անելը կամ մէկի շէմքից ներս մտնելը բարեյաջող խորհուրդ ունի, որի ընդհակառակը, ձախ ոտքի առաջին քայլը

է:<sup>1</sup> Եթէ աղը վեթեցիր — կատարեալ դժբախտութեան նշան է: Իսկ մեր եղբայր աստղագէտները, քաղցածութիւնից ստիպուած, վայրիվերց կերպով սովորում են աստղների կրութիւնը, անդիր սերտում են նրանց անունները, եւ յետոյ սկսում են ողորմելի ռամիկների մօտ լուրջ կերպով ցնորաբանութիւններ անել, խօսել համաստեղութիւնների մասին եւ բացատրել նրանց դիմքը, կացութիւնը, եւ միայն Ալահը գիտէ, թէ ուրիշ ինչ յիմարութիւններ են խօսում: Մնահաւատ իրանցինները վախենում են մի քայլ անգամ տնից դուրս դնել, առանց խորհրդակցելու աստղագէտի հետ<sup>2</sup>: Եթէ նա պատահմամբ մի բան նախագուշակում է, որպան գովասամքներ, փառք եւ փող է ստանում: Իսկ եթէ նախագուշակութիւնը սխալ է յայտնվում, դարձեալ ինքը մնում է իրաւացի, ասելով. թէ յետաձգեցին գործը. այն ոտքը առաջ չդրեցին, որ

անազողութիւն կարող է բերե: Այդ հասկացողութիւններից առաջ են եկել ժողովրդի մէջ զանազան ասացուածներ, օրինակ, “նրա ոտքը և երով էր” — “նրա ոտքից նասուեցաւ գործը, եւայլն: Ծան. թարգ.:

<sup>1</sup> Մէկ անգամ փռշտամպ հայերի մէջ չար է գուշակում, եւ այդ պատճառով, եթէ պատահում է այդ որ եւ իցէ գործի սկսելու սկզբում, իսկոյն գաղաքեցնում են գործը: Երկու անգամ փռշտամպ բարի է գուշակում, իսկ երեք անգամը աւելի բարի: Երերից ա ելք ոչինչ նշանակութիւն չունի: Այսուեղից մտել է մեր ժողովրդի մէջ այն սովորութիւնը, երբ մեկը փռշտամպ է, իսկոյն ամեն կողմից բարեմաղթում են նրան, ասելով “առաջութիւն”, որովհետեւ, միանգամ փռշտամպ նրա առողջութիւնից մի բան պակասեց: Բայց փռշտամպ նշանակութիւնները փոխվում են, նայելով, թէ օրուայ որ ժամանակում են պատահում: Օրինակ. ժողովրդի մէջ մինչեւ անգամ առած է դարձել՝ թէ “գիշերուայ սարը (Փիանգամ փռշտամպ) և կը էն: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Ճանապարհ գնալու կամ ճանապարհորդութիւն սկսելու լաւ եւ վատ, չար եւ բարի բոպէները, ժամերը ու օրերը որոշելու համար մեր հին աստղագիտութեան մէջ առանձին կանոններ կան: Մեր “Եփէմերդին” եւս պայտ մասին որոշումներ է անում: Իսկ ուամիկը շատ անգամ շաբաթներով յետաձգում է իր ճանապարհորդութիւնը, երբ գուշակողները նրան ասում են “Չեր բարի սըհաթի չե՞ն . . . : Ծան. թարգ.:

պէտք էր. այնպէս պէտք չէր նայել. երեւի, մի մարդ չար աչքով տուեց, եւ հազարաւոր այսպիսի յիմար պատճառներ կը բերեն, որ անկարելի է մի ըստ միոջէ յիշել: Եւ ի՞նչու էք զարմանում, մելք, որ մեղ մօտ աստղագէտների թիւը օրըստօրէ բազմանում է. դա խիստ շահաւետ մի պարապմունք է...

— Հաւատում եմ, պատասխանեց Քումշուդը, — բայց իմ աստղը ասում է ինձ, որ մենք անցեալ գիշերը չքնեցինք, երբ դժուդում էինք ստորերկիւեայ վերապի մէջ, իսկ էգուց պէտք է ձանապարհ գնանք, ուրեմն հիմայ պէտք է հանգստանալ: Յտեսութիւն, աստղագէտ:

Նրանք պառկեցին գորգերի վրայ եւ շուտով քնեցին խորին քնով:

## IX.

Փանահ-խանի մօտ համելը:

Միւս օրը, կէսօրուայ պահին, գեսպանախումբը ձանապարհ ընկաւ: Քումշուդը հագած ունէր մի տեսակ զգեստ, թուրքաց ձեւով, որ հարուստ կերպով զարդարուած էր ոսկէ հուռ ժապաւէններով: Նա նստած էր սեւ նժոյգի վրայ, որը իր վայելքագեղ կազմուածքով եւ փոքրիկ զլխով ցոյց էր տալիս իր արաբական ծագումը: Երեք հարիւր տղամարդիկ, զինուած ոտքից ցզլուխ, կազմում էին նրա սվետան: Իրանց յարգանքը ցոյց տալու համար, այդ ձիւտորները գնում էին նրա ետեւից եւ առջեւից, բաւական հեռաւոր տարածութեան վրայ:

Շանապարհին գնալու ժամանակ, իրանց ընթացքը աստղների բարեյաջող ընթացքի հետ յարմարեցնելու պատրուակով, Քումշուդը հրամայեց աստղագէտին, որ ձին իր ձիու հետ հաւասար կերպով քշէ, որպէս զի կարո-

ղանայ նրա հետ խորհուրդներ անել: Բայց փոխանակ աստղների վրայ խօսելու, ձանապարհի ձանձրոյթը ցրուելու համար, հազիւ լսելի ձայնով, խօսում էր նրա հետ իր Սալիհայի մասին, տալիս էր զանազան պատուէրներ, թէ ինչպէս պէտք էր նրա հետ տեսնուել, ինչպէս առանձնանալ, որովհետեւ մի ուրիշն ներկայութեամբ Սալիհայի հետ խօսել կարող էր հակառակ հետեւանքների հասցնել, եւ նրա չափազանց պարզմութիւնը կարող էր երեւան համել իրանց գաղտնիքը:

Երբ մօտեցան ջուանշերցիների օքաներին, ձանապարհի վրայ կանգ առին: Այդ միջոցին աստղագէտը, Քումշուդի ցանկութեան համեմատ, նստեց մարգագետնի վրայ եւ սկսեց նախագուշակութիւններ անել, թէ երբ կը համի բարեյաջող րոպէն օրաները մանելու համար: Քումշուդի ամբողջ խումբը, նոյնպէս ձիերից ցած իջնելով, զարմացած նայում էին աստղագէտի պարապմունքների վրայ: Նրանց հայեացքները արտայայտում էին յոյս եւ երկիւղ: Լաւ ձանաչելով իրան ըջապատող անձինքների հասկացողութիւնը, աստղագէտը գիտմամբ ցոյց էր տալիս երեւակայական դժուարութիւններ, որոնք իրը թէ ներկայանում էին նրան աստղների ընթացքը հետազոտելու ժամանակ: Բոլորը զարմանում էին նրա իմաստութեան վրայ, բացի Քումշուդից, որը ժպտալով լսում էր նրա իմաստակութիւնները: Վերջապէս աստղագէտը ուրախութեամբ բացականչեց.

— Երեկոյեան ժամուն, երբ արեգակը խոնարհուած կը լինի դէպի իր մուտքը, դուք եւս կարող էք մուտք գործել Փանահ-խանի օրայի մէջ, եւ կարող էք իսկոյն գնալ նրա մօտ: Նա կընդունէ ձեղ սիրով եւ դուք յանդութիւն կը գտնէք ձեր նպատակների մէջ: Իսկ ինձ

այժմ անշրաժեցած է բաժանուել ձեզանից եւ առժամանակ թագնուել մի ուրիշ օրայի մէջ։ Յետոյ կը վերադառնամ եւ կը հաղորդեմ միայն մելք-ջումշուդին այն գաղտնիքը, որը աստղների շնորհիւ պիտի երեւան հանեմ։ Պատուիրում եմ. թէ իմ գնալը եւ թէ վերադարձը պէտք է, որպէս մի գաղտնիք, նոյնպէս ծածկուած մնայ Փանահ-խանից կամ նրա մարդիկներից։ Ոչ ոք պէտք չէ որ զիտենայ, թէ ես պատկանում եմ ձեր խումբին, մինչեւ ես ինքս յայտնելու չլինեմ այդ։ Եթէ դուք իմ այս պատուէրները ճշտութեամբ չէք կատարի, այն ժամանակ ոչինչ յաջողութիւն ունենալ չէք կարող։

— Մենք խոստանում ենք ճշտութեամբ կատարել քո պատուէրները, ովք իմաստուն աստղագէտ, պատասխանեց ջումշուդը, մի առանձին պատկառանքով նշանակութիւն տալով նրա խօսքերին։

Յետոյ իր խումբին հրամայեց նա ձիաների թամբերը վեր առնել, հանգստանալ, սպասելով աստղագէտի նշանակած ժամանակին։ Իսկ ինքը այս վերջինի հետ հեռացաւ ծառերի ստուերի ներքոյ, եւ գրելով մի քանի խօսքեր, տուեց նրան Սալիհային յանձնելու համար Աստղագէտը մնաք-բարեաւ ասելով, հեռացաւ։

Նրեկոյեան պահուն Վարանդայի մելքի դեսպանութիւնը մտաւ Փանահ-խանի օրան։ Ջուանշիրցիների այդ նոր տանուտէրը, թէեւ բնակվում էր նոյնպիսի տաղաւարի մէջ, որպէս միւմներն ունեին, բայց դա կազմուած էր աւելի ամուր կերպով, զրսից ծածկուած էր թաղինքներով, իսկ ներսից զարդարուած էր պարսկական գորգերով։ Տաղաւարը բաժանուած էր մի քանի մասերի, որոնցից կանանց բնակութեան համար որոշուած մասը այն աստիւծան ամուր կերպով ծեփած էր կաւով եւ սպիտակակ-

յրած դրսից, որ դարձել էր ինչպէս մի քարեղին շենուածք։ Մի քանի ներքինիներ պահապան էին կարգուած այդ արգելեալ բնակարանի վրայ, որի մուտքը բաց էր միայն Փանահ-խանի համար։ Հակառակ ջուանշիրցիների կենցաղավարութեան պարզ սովորութիւններին, Փանահ-խանի կնիկները կրում էին չափրա, երբ դուրս էին գալիս ներքինիների առաջնորդութեամբ, եւ պարսից սովորութեան համեմատ, ծածկում էին իրանց երեսները թանձր, ցանցատեսակ քօղերով։

Փանահ-խանը ընդունեց Վարանդայի իշխանի դեսպանութիւնը մի առանձին ուրախութեամբ, որը ծածկել էկարղացաւ։ Նա պարզ կերպով նախատեսում էր, որ իր մասնակցութիւնը այն պատերազմի մէջ, որը մելք-Շահնազարեանը պիտի վարէր Խամայի մելքների դէմ, իրան միջոց կը տար աւելի եւս բարձրանալու, հէնց նոյն իսկ մելքների հաշուով։ Նա խոստացաւ հինգ օրից յետոյ պատրաստ լինել իր օգնութիւնը մատուցանելու համար, եւ հրամայեց տեղաւորել ջումշուդին ու նրա սվետացին առանձին տաղաւարներում, իր բնակարանի մօտ։ Նա խիստ փաղաքշակով էր վարվում գեսպանի հետ եւ աշխատում էր ամեն կերպով նրան բաւականութիւն տալ։

Դեսպանութիւնը Փանահ-խանի մօտ ժամանելուց միւս օրը ջումշուդին իմացում տուին, թէ աստղագէտը սպասում է նրան մերձակայ անտառում, մի կարեւոր աեղեկութիւն հաղորդելու համար։ Ջումշուդը իսկոն վաղեց նրա մօտ, եւ տեսնելով աստղագէտի մթին դէմքը, մնաց ապշած։

— Ասա՛, ի՞նչ տեղեկութիւն ունես, գոչեց նա։ — Կարելի է դու մահուան բօթաբե՞ր ես։

— Հանգստացէք, մելիք, պատասխանեց աստղագէտը,  
— պատրաստութեցէք լսել մի անախորժ նորութիւն...

— Խօսիր, մի ծածկիր, կրկնեց երիտասարդը անհամբերութեամբ, — ի՞նչ է պատահել, իմ Սալիհան մեռած է...

— Ո՞չ, նա կենդանի է, բայց գտնվում է ուրիշ  
տիրապետութեան ներքոյ...

— Ո՞ւմ... ով է այդ բարբարոսը... ես իմ խէն-  
ջարը կը ցցեմ նրա կուրծքի մէջ, թէ նա գետնի տա-  
կում եւս թարգնուած լինի: — Ասա՛, ով է, ի՞նչու  
ես լոել...

— Նա գտնվում է Փանահ-խանի հարեմի մէջ...

— Փանահ-խանի հարեմի մէջ... կրկնեց երիտա-  
սարդը, եւ կայծակնահարի նման մնաց շփոթուած: Եր-  
կար չկարողացաւ նա յուշի գալ. վերջը թոյլ ձայնով  
բացականչեց, — ես կորած եմ... այդ խօսքերի հետ  
օրորուեցաւ, ընկաւ խոտերի վրայ:

Աստղագէտը հոգատար կերպով բռնեց նրա ձեռքից,  
ասելով.

— Մելիք, մի տխրէք, կայ հնար ձեր դժբախտու-  
թեանը օգնելու...

— Ի՞նչ հնար: Միթէ դու չգիտես, որ եթէ ես  
կոիւ սկսեմ Փանահ-խանի հետ, դրանով պիտի զրկեմ  
իմ հօրեղօրը այն օգնութիւնից, որ սպասում է նրա-  
նից: Այն ժամանակ մեր թշնամիները իրանց ոխակալու-  
թիւնը կը յագեցնեն մեր արիւնով եւ Զանախչին մոխիր  
կը դարձնեն: Իսկ մնալով Փանահ-խանի հետ բարեկա-  
մական յարաբերութիւնների մէջ, ես հարկադրուած կը  
լինեմ յաւիտեան զրկուել Սալիհայից: — Այս, այդ  
սարսափելի է... Բայց որտեղ են իմ զաւակները...

— Նրանք մնայել են Սալիհայի մօր խնամատարու-  
թեան ներքոյ:

— Պատմի՛ր այդ սոսկալի գէպքի բոլոր մանրամաս-  
ները, գոչեց ձումըուղը զայրացած կերպով: — Ես պա-  
տրաստ եմ ամեն ինչ անել, միայն թէ իմ Սալիհան  
ազատուած լինի:

— Ձեր հեռանալուց անմիջապէս յետոյ, որպէս  
պատմեց ինձ Սալիհայի մայրը, Փանահ-խանը մտածեց  
անձամբ շրջել բոլոր օրաները եւ տեսնել իր նոր հպա-  
տակներին, որոնք առաջ նրա հաւասար մարդիկ էին:  
Մէկը նրա մերձաւորներից պատահմամբ տեսաւ ձեր կնոջը,  
եւ հիացած նրա գեղեցկութեամբ, պատմեց Փանահ-խա-  
նին Սալիհայի անհամեմատ չքնաղութեան մասին: Փա-  
նահ-խանը տեղեկանալով, որ նա մի խորասանցու կին է  
եղել, որի ամուսինը հեռացել է գէպի իր հայրենիքը,  
իրան իրաւունք համարեց անտէր մնացած կնոջը ձեռք  
բերել, այնպիսի խորամաննկութեամբ, որ ոչ ոք նրա դրա-  
ցիներից չկարողացաւ գիտենալ, թէ որտեղ անհետա-  
ցաւ այդ կինը: Միայն Սալիհայի մայրը եւ եղբայրները  
գիտեն, թէ որտեղ է գտնվում նա, որովհետեւ ինքը  
Փանահ-խանը յայտնել է նրանց, ի հարկէ, խոստանալով  
իր հովանաւորութիւնը եւ հարուստ ընծաներ: Այժմ  
բարքուվարքի ապականութիւնը այն աստիճան տիրել է  
ջուանշիրցիներին, որ նրանք ուրախութեամբ ընդունել են

1 Մահմեդականների ամուսնական օրէնքներով ամուսին այրը՝ մօլլայի  
ձեռքով վաւերացրած թղթով՝ իր կնոջը գրաւական է տալիս կամ անշարժ  
կալուածքով եւ կամ մի պայմանաւորեալ գումարով. եթէ կնոջը յետոյ  
արձակելու լինի, նշանակած գրաւականը կը դառնայ վերջինի սեպհականու-  
թիւն: Դա մի ապահովութիւն է կնոջ ապագայի համար, եւ զագում է  
տղամարդերի ինքնահաճութիւնը, որոնք իրանց կնիկներին դուրս վանտելով,  
թողնում են նրան քաղցած: Ծան. թարգ..

Խանի խոստմունքները։ Այն էլ պէտք է ասած, որ Սալհայի թէ մայլը եւ թէ եղայրները յոյս չեն ունեցել, որ միւս անգամ կը տեսնեն ձեզ։ Հիմայ ձեր խեղջ կինը, հէնց ձեր հիւր եղած տան մէջ, տանջվում է տիրութիւնից, անջատուած լինելով իր ամուսնից եւ զաւակներից։ Նա անդադար արտասուք է թափում, եւ այդ արտասուքը դառնայնում է Փանահ-խանի սիրտը, որով հետեւ սիրում է նրան աւելի քան իր բոլոր կնիկներից։ Եւ խեղջ կինը այն աստիճան հոգեպէս տանջուեցաւ եւ մաշուեցաւ, որ այժմ բոլորովին հիւանդ է, եւ Փանահ-խանը հիմայ գտնվում է սաստիկ յուսահատութեան մէջ…

— Իմ կինը մեռնում է, Տէր Աստուած, Տէր Աստուած… գնանք, աստղագէտ, մի՛ ուշացիր, կամ կազատենք նրան, կամ կը կորչենք… Ես արգէն վճռեցի… ես մոռանում եմ բոլորը… Այդ խօսքերով սաստիկ զգածուած երիտասարդը քարշ էր տալիս աստղագէտին իր ետեւից։

— Սպասեցէք, մելիք, սպասեցէք, մենք կը կորչենք ի գուր տեղը, առանց կարողանալու ազատել ձեր ամուսնին։ — Կայ մի ուրիշ հնար…

— Ի՞նչ հնար, ասա, սիրելիդ իմ աստղագէտ, դու յաւիտեան կը պարտաւորես ինձ։ — Բայց արգեօք չես խաբում ինձ…

— Ամենեւին։ Փանահ-խանը գտնվում է յուսահատութեան մէջ, նրա համար, որ ոչ ոք չէ կարողանում առողջացնել նրա սիրելի Սալիհային։ Ես կը ձեւացնեմ ինձ բժիշկ։ Խորամանկութեան մէջ ես վարպետ եմ։ Դուք, կարծեմ ինձ ճանաչում էք։ Ես նրան կը համոզեմ, որ Սալիհային առողջացնելու համար, անպատճառ հարկաւոր է, որ ես հիւանդի հետ տեսնուիմ,

որ կարողանամ որոշել նրա բախտաւոր եւ անբախտ աստղները, որ կարողանամ հետազօտել հիւանդութեան էական որպիսութիւնը, եւ նրա համեմատ կարգադրեմ բժշկելու հնարները։ Փանահ-խանը կը հաւատայ ինձ։ Նա երկար ժամանակ ապրել է Պարսկաստանում, եւ երեւի, սովորած է պարսիկների սնահաւատութեանը։ Իմ կերպարանքը հրապուրիչ չէ, այդ պատճառով էլ վտանգաւոր չէ կարող լինել նրա հարեմի համար։ Ինձ թոյլ կը տան մանել ձեր կուջ մօտ, եւ այսպիսով միջոց կը գտնեմ նրան տեղեկութիւն տալու, որ դուք գտնվում էք պյտեղ, իսկ յետոյ կաշխատեմ նրան գողանալ հարեմից եւ տանել Զանախչի։ Իսկ դուք, այսու ամենայնիւ, շարունակեցէք ձեր գեսպանախօսութիւնները Փանահ-խանի հետ, վարուեցէք նրա հետ ամենայն հաշտութեամբ, եւ ցոյց մի տուեք ամենափոքր նշան անգամ, թէ դուք Ճանաչում էք ինձ։ Ես ինձ պատասխանատուեմ համարում գործի յաջողութեան վերաբերութեամբ։ Հիմայ բաժանուենք, ձեր երկար բացակայութիւնը կարող է նկատելի լինել…

— Մնաք բարեաւ, իմ սիրելի աստղագէտ, դու հաւատացած եղի՛ր, որ Շահնազարեան Մելիք-Ջումուջը կը զիտենայ, թէ որպէս պէտք է շնորհակալ լինել քեզանից։ Նրանք բաժանուեցան։

## X.

Աստղագէտը ներկայանում է Փանահ-խանին։

Իր փառաւոր տաղաւարի մէջ նստած էր Փանահ-խանը, եւ խորին մասիս հութեան մէջ ընկղմուած, ծխում էր զէյլանը։ Նրա անհանգիստ գեմքի վրայ նշանվում էր սրտի բաղմատեսակ կրգերի կոիւը։ Երբեմն ար-

տայայտում էր բաւականութիւն, երբ մտաբերում էր Վարանդայի իշխանի բարեկամական հրաւերը եւ նրա ձեռքով իր բարձրանալու ապագայ յոյսերը. իսկ երբեմն տիրութիւն, երբ մտաբերում էր իր սիրած կնոջ ծանր հիւանդութիւնը:

Այդ միջոցին նրա ծառաներից մէկը ներս մտաւ, յայտնեց թէ մի ինչ որ օտարական, որ կոչում է իրան աստղաբաշխ եւ Ղազվինի<sup>1</sup> գիտնական բժիշկ, ցանկանում է ներկայանալ: Փանահ-խանը զլիսի շարժումով նշան տուեց ներս թողնելու նրան:

— Ալլահը եւ սուրբ մարդարէն թող օրհնեն քաջ ջուանշերցիների մեծափառ հրամանատարին, եւ թող լինեն նրա օրերը պայծառ, ինչպէս արեգակի ճառագայթները, եւ բազմաթիւ, ինչպէս երկնքի աստղերը, ասաց Ղազվինցի բժիշկը, գլուխ տալով, որի միջոցին մի ձեռքը դրեց կուրծքի վրայ, իսկ միւսը նախ տարաւ դէպի ճակատը, յետոյ խոնարհեցնելով կպցրեց գետնին:

Փանահ-խանը բաւական նայեց նրա վրայ, եւ լութեամբ երկար զննում էր նրա օտարութիւնը կերջը հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում դու ինձանից:

— Սուրբ Յուսէինը թող առաքէ ձեզ վրայ իր օրհնութիւնը: Ես լսեցի ձեր ամենաթանկագին ամուսնի հիւանդութիւնը եւ եկայ առաջարկելու ձեզ իմ ծառայութիւնները:

— Միթէ դու յոյս ունես աւելի բախտաւոր լինել, քան թէ քո միւս արհեստակիցները, որոնք ի զուր գործ դրին իրանց բոլոր հմտութիւնները:

<sup>1</sup> Ղազվին, պարսից նշանաւոր քաղաք է. որը գտնվում է Թէհրանի եւ Թաւրիզի մէջ տեղում: Ծան. հեղ.:

— Կարելի է նրանք հասկացողութիւն չունեին աստղների շրջանների եւ նրանց ունեցած ազգեցութեան մասին մարդու վիճակի վրայ...

— Իսկ դու հասկացողութիւն ունե՞ս:

— Քսան սուրբ իմամների<sup>1</sup> ինձ չնորհած կարողութեամբը, ես ուսումնասիրել եմ բնութեան գրքի ամենաարձր խորհուրդները: Իմ վարդապետը եղել է հռչակաւոր Շէյխ-Աբդուլ-Փաթիհ-Ալին, որին մարդուն մատը պէտք է համարել ամբողջ երկրի վրայ:

— Հաւ, դու կարող ես փորձել քո արհեստը, եւ կարող ես յոյս ունենալ, որ կը ստանաս նշանաւոր ընծաներ, եթէ յաջողութիւն ցոյց կը տաս: Ես կը հրամայեմ իմ կնիկների վերատեսչուհուն, եւ նա կը պատմէ քեզ Սալիհայի հիւանդութեան բոլոր մանրամասնութիւնները: Նրա պատմութիւնից դու կարող ես անել քո եզրակացութիւնները հիւանդութեան որպիսութեան մասին, այնուշետեւ, յարմարուելով աստղների ցուցումների հետ, դու կը նշանակես բժշկելու եղանակները, թէ եւ ես շատ յոյս չունեմ...

— Բաւլին, բաւլին<sup>2</sup>, ինքը իմաստութիւնն է խօսում ձեր շրթունքներով: Բայց ներեցէք ձեր դուսն շէմքի ստրուկին իր խոնարհ կարծիքը յայտնել, որ տարաշեայ բժշկութիւնը երբէք չէ կարող իր նպատակին հասնել: Առանց ճիշտ կերպով որոշելու, թէ ինչ աստղ է առաջնորդել ձեր մեծապայծառ կնոջ ծննդեանը (որի գեղեցկութիւնը թող գերազանցէ լուսնից), չէ կարելի եւ որոշել բժշկելու եղանակները...

<sup>1</sup> Քսան սուրբ իմամները: Ծաները միայն 12 իմամներ ունեն եւ ոչ թէ քսան: (Տես էջ 396, Ժան. 1): Ծան. թարգ.:

<sup>2</sup> Բաւլի, նշ. լւաւ. Ծան. հեղ.:

— Ուրեմն ի՞նչ ես պահանջում դու, հալորեց  
Փանահ-խանը սուր կերպով նայելով աստղագէտի երեսին:

— Միայն թոյլտուռութիւն տեսնուելու հիւանդի  
հետ, եւ կէս ժամկ չափով առանձին խօսելու նրա հետ,  
առանց վկաների ներկայութեան, այնուշետեւ ես վստահ  
կը լինեմ իմ բժշկութեան կատարեալ յաջողութեան մէջ:

— Խօսել նրա հետ... կէս ժամ... այն եւս առանց  
վկաների... կրկնեց խանը, կասկածաւոր կերպով նայելով  
աստղագէտի վրայ:

Բայց լաւ հետազօտելով նրա այլանդակ կերպարանքը  
եւ այն անփոյթ ձեւը, որով պահում էր իրան աստղա-  
գէտը, խանը պատասխանեց.

— Հաւ, համաձայն եմ: Ե՞րբ ես ցանկանում տես-  
նել իմ կնոջը:

— Հէնց այս րոպէիս, եթէ կը բարեհաճի ջուան-  
շերցիների մեծ հրամանատարը:

— Հետեւիր ինձ, ասաց խանը, կանգնելով նստած  
տեղից:

Աստղագէտին շատ հաճելի չէր տեսնել, որ ջուան-  
շերցիների զլիսաւորը ինքը պիտի անձամբ ներկայ գանուի  
Սալիհային բժշկութամանակ, եւ դրանով կարող են  
խանգարուել իր բոլոր դիտաւորութիւնները: Նա առա-  
ւելապէս վախենում էր միամիտ Սալիհայի պարզամտու-  
թիւնից, որի մի անզգոց խօսքը կարող էր գտանձնել  
իրան եւ վտանգի ենթարկել: Բայց ուրիշ հնար չիար:  
Նա ճնշուած սրտով գնաց Փանահ-խանի ետեւից,  
օգնութեան կանչելով իր բոլոր հմտութիւնը խա-  
րեբայութեան արհեստում, եւ յոյս դնելով իր խորա-  
մանկութիւնների վրայ, որոնց մէջ խիստ լաւ վար-  
ժուած էր:

Երբ որ նրանք մտան հարեմը, զարմացած կնիկները,  
տեսնելով իրանց հրամանատարի հետ մի օտար մարդ,  
սաստիկ ձիչ բարձրացրին, եւ փախչելով ծածկուեցան  
իրանց սիածանելիքների մէջ: Սալիհան պառկած էր  
անկողնի մէջ, որը պատրաստուած էր տախտի վրայ, եւ  
շուրջանակի պատած էր պարսկական գորգերով: Նրա  
չքնաղ դէմքը գունաթափուած էր, գեղեցիկ աչքերը  
խորն էին ընկած, եւ բոլոր գծերի մէջ նկարուած էին  
հոգեկան սաստիկ տանջանքի նշանակը:

— Զանիկ,<sup>1</sup> ասաց Փանահ-խանը, մօտենալով  
նրա անկողնին. — Ես բերեցի քեզ համար մի նոր եւ  
շատ հմտւտ հաքիմ,<sup>2</sup> որը մի եւ նոյն ժամանակ լաւ  
աստղաբաշխ է. Ես հաւաստի եմ, որ դա կը բժշկէ քեզ:  
Խօսիր նրա հետ:

Սալիհան իր տիսուր հայեացքը գարձեց գէպի նորեկը,  
եւ տեսնելով աստղագէտի ծիծաղելի կերպարանքը, ըլ-  
կարողացաւ զապել իր ժպիտը: Բայց այդ ժպիտը նման  
էր լուսային ճառագայթի րոպէական փայլին, որ երբեմն  
նշանակում է աշնանային գիշերի մթին մառախուզների  
մէջ: Նրանից յետոյ առաջուաց դառն տիսրութեան խա-  
ւարը կրկին պատեց նրա ճակատը: Նա խօսեց թոյլ ճայնով:

— Շնորհակալ եմ ձեր աշխատութեան համար,  
որը բոլորովին ի զուր է...: Իմ հիւանդութիւնը  
անբժշկելի է... դուք ինքներդ դիտէք այդ...

— Ի՞նչու էք դուք, խանում,<sup>3</sup> անձնատուր  
լինում յուսահատութեան, մէջ մտաւ աստղագէտը. —

<sup>1</sup> Զանիկ, ջան բառից, որ նշանակում է հոգի: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Հաքիմ բառը մի բանի նշանակութիւններ ունի, որոնք փոխ-  
զում են արտասանելու եւ գրուելու ձեւից: Նշանակում է՝ հրամանատար  
կամ կառավարիչ, իմաստուն, այլ եւ բժշկ: Ծան. թարգ.:

<sup>3</sup> Խանում, նշ. տիրուհի: Ծան. հեղ.:

Ալահը եւ սուրբ մարգարէն տնօրինել են ձեզ համար շուտափյթ առողջութիւն...

— Ի՞նձ համար . . . պատասխանեց Սալիհան, աչքերը բարձրացնելով նրա վրայ:

Այդ միջոցին աստղագէտը այնպիսի մի ճարպկութեամբ կարողացաւ իր աչքերի ու յօնքերի խորհրդաւոր շարժումներով նրան նշաններ ցոյց տալ, որ խանը ոչինչ չնկատեց, միայն Սալիհան հասկացաւ:

— Այսպէս, ուրեմն դուք կարծում էք, շարունակեց հիւանդը, դառնալով դէպի խանը, — որ ես կարող եմ վստահ լինել այդ հաքիմի բժշկութեան վրայ:

— Անտարակոյս:

— Երբ այդպէս է, մօտ եկէք, հաքիմ, դարձաւ նա դէպի աստղագէտը, — եւ ասեցէք, ես ի՞նչ պիտի անեմ:

— Թոյլ տուեցէք ինձ, խանում, պատասխանեց աստղագէտը, — նախ հաշուել աստղների ընթացքը եւ որոշել այն աստղը, որը լուսաւորել է ձեր ծննդեան րոպէն:<sup>1</sup>

— Այդ որքան ժամանակ կը տեւէ, հարցրեց Փանահ-խանը:

— Ժամանակը ճշդութեամբ ասել չեմ կապող, դա ինձանից կախուած չէ, այլ սուրբ մարգարէի կամքից, պատասխանեց աստղագէտը:

— Իսկ այդ գուշակութիւնները, կարծեմ, կարելի է կատարել եւ իմ առանձին բնակարանում, խօսեց Փանահ-խանը:

<sup>1</sup> Ծննդեան աստղ: Աստղագէտները հաստատում են, թէ իւրաքանչիւր մարդ ծնվում է մի առանձին աստղի աղդեցութեան ներքոյ: Ծան. հել.:

— Ամենեւին, խան, պատասխանեց աստղագէտը: — Ոչ միայն ձեր բնակարանում չէ կարելի կատարել, այլ մինչեւ անգամ այստեղ եւս չէ կարելի, եթէ դուք հրաման չեք տայ ինձ մնալու խանումի հետ միայնակ:

— Քեզ . . . միայնա՞կ . . . կրկնեց խանը. — այդ նոր բան է . . .

Նա դարձեալ սկսեց ուշադրութեամբ երկար նայել աստղագէտի վրայ, որի կատարելապէս այլանդակութիւնը փոքր ինչ հանգարտացրեց խանի կասկածը, եւ նա հարցրեց:

— Միթէ չէ կարելի թողնել այստեղ գոնէ մի ներքինի:

— Ոչ մէկին, խան, այդ անսիրտ մարդիկը ունեն ամենավատ աղդեցութիւն մանկահասակ խանումների ճակատագրի վրայ: Նրանք բոլորը ստեղծուած են անբարեյաջող աստղների ներգործութեան ներքոյ:

— Լսիր, աստղագէտ, ասաց Փանահ-խանը, — դու առաջինն ես իմ տեսած բոլոր հաքիմներից եւ աստղաբաշխներից, որ պահանջում ես այսպիսի նախազգուշութիւններ: Արդեօք, թագնուած չէ մի բան այդ օտարոտի պահանջումների տակ: Տես, զգոյշ կ'աց: Փանահ-խանը գիտէ արժանաւոր կերպով վարձատրել ծառայութիւնները, գիտէ եւ խիստ կերպով պատժել անհաւատարմութիւնը:

— Մի բարկացէք, խան, ասաց Սալիհան անզգուշութեամբ, — կարելի է դա աւելի հմաւտ է բոլորից: Թոյլ տուեցէք ինձ խօսել դրա հետ:

Փանահ-խանը այդ խօսքերից հասկացաւ աւելի շատ բան, քան թէ սպասում էր: Նոյն բոլորում հրամայեց նա ներքինիներին տանել բոլոր կնիկներին հարեմի միւս

բաժնում եւ թողնել աստղագէտին միայնակ Սալի-  
հայի հետ:

— Ես հեռանում եմ, ասայ նա աստղագէտին, —  
եւ յոյս ունեմ, որ դու կ'աշխատես շուտով աւարտելու  
քո դուշակութիւնները . . . եւ հաւատացած եմ, որ  
դու կը վարձատրուես քո բժշկութեան համար . . .  
աւելացրեց նա կծու ժաղիտով եւ դուրս եկաւ հիւանդի  
սենեակից:

## XI.

Աստղագէտը առանձնացած Սալիհայի հետ:

Երբ որ ամենքը հեռացան, աստղագէտը սկսեց նախ  
ուշադրութեամբ հետազոտել սենեակի բոլոր անկիւնները,  
կասկածելով, որ կարող են լրտեսել նրա խօսակցութիւնը,  
յետոյ մօտեցաւ հիւանդի անկողնին, եւ գլուխը խոնարհեց-  
նելով, հազիւ լսելի ձայնով ասաց.

— Դուք խանում, անզգոյշ գտնուեցաք. պէտք  
չէր յայտնել ձեր ցանկութիւնը ինձ հետ խօսակցելու  
մասին . . . Ես ձեր ամենախոնարհ ստրուկն եմ . . . Այժմ  
պէտք է ուշադիր լինեք իմ խօսելուն, եւ ինչ որ ես  
ասելու կամ հարցնելու կը լինեմ, դուք պէտք է այնպէս  
ցոյց տաք, թէ ամեն բանում համաձայն էք ինձ հետ:  
Չեր ամուսինը՝ ջումշուդը այստեղ է, շատ մօտիկ է, եւ  
նոյնպէս սիրում է ձեզ . . .

— Այստեղ, այստեղ, ի սէր Ալիի . . .

Աստղագէտը նշանացի անելով, հասկացրեց նրան, որ  
լուէ, իսկ ինքը նատեց փոքր ինչ հեռու, գորգի վրայ,  
սկսեց զանազան հարցումներ անել, թէ քանի տարեկան  
է, թէ նա ինչ մի առանձին դեպք է յիշում իր մանկու-  
թիւնից եւ այլն: Բոլորը քննելով, վերջը աստիճանաբար

հասաւ մինչեւ տիկնոջ տասն եւ վեց տարեկան հասակը  
եւ հարցրեց.

— Այդ հասակում դոք շրջապատուած էք եղել  
ամենաչար աստղներով. պէտք է, որ այդ ժամանակ մի որ  
եւ իցէ նշանաւոր դէպք պատահած լինի ձեզ:

— Այո՛, այո՛, բացականչեց Սալիհան, — ես այդ  
ժամանակ չափազանց երջանիկ էի . . .

— Երջանիկ, խանում, անկարելի է:

— Ի՞նչպէս չէ:

— Ի հարկէ չէ: Այդ ձեզ այնպէս երեւում էր  
միայն, իրը թէ երջանիկ էիք: Բայց բոլորը, ինչ որ վայե-  
լում էիք այն ժամանակ, տանում էր ձեզ դէպի ան-  
բախտութիւն: Պէտք է աշխատէք մօռանալու այդ . . .

— Մոռանալ, միթէ այդ կարելի է . . . պատաժա-  
նեց Սալիհան խորին վըդովմունքով:

Բայց աստղագէտը խորհրդաւոր կերպով ակնարկեց  
նրան, նա հասկացաւ եւ փոխեց խօսքը.

— Մոռանալ . . . միթէ դուք կարծում էք, որ այդ  
լաւ կը լինի . . .

— Այդ կը փրկէ ձեզ, խանում, կը փարատէ ձեր  
հիւանդութիւնը եւ կը բախտաւորացնէ ձեզ: Այդ ես  
պարզ տեսնում եմ այն բարի աստղներից, որոնք այժմ  
շրջապատում են ձեզ: Ջուանշերջիների հրամանատարի  
աստղը գտնվում է իր կատարեալ ծագման մէջ . . .

— Իսկ իմ զաւակները . . . ի սէր Ալիի, ասեցէք,  
ինչ են անում իմ զաւակները . . . ի՞նչու համար ինձ  
բաժանել են նրանցից . . .

— Հանգստացէք, խանում, ձեր զսուակները առողջ  
են եւ բախտաւոր: Բայց նրանք կը լինեն աւելի բախ-  
տաւոր, երբ որ դուք կ'առողջանաք եւ դրանով կ'ուրա-

խացնէք խանին։ Ես հաւատացած եմ, որ նա յանձն կ'առնի տնօրինելու ձեր գաւակների բախտը։ Իսկ հիմայ դառնանք դէպի ձեր հիւանդութիւնը։ Դուք զգում եք սաստիկ ջերմութիւն, այդպէս չք։

— Խիստ սաստիկ։

— Հաւ, երբեմն ձեր գլխումը մանում են մթին մտածութիւններ եւ դուք բոլորովին անձնատուր եք լենում այդ մտածութիւններին։

— Այո, ես տիրում եմ, տանջվում եմ, մեռնում եմ սրտիս ցաւերից։

— Ձեր սրտի ցաւը է հետեւանք ձեր մտատանջութիւնների, եւ աւելի ոչինչ։ Ասեցէք, արդեօք զգում եք ձեր մէջ այնքան ուժ, որ կարողանաք ձիով ման գալ։

Այդ հարցման միջոցին աստղագէտը աչքերով նշան տուեց հիւանդին։

— Զգում եմ։

— Շատ լաւ, ձեզ հարկաւոր է թարմ օդ, խանում։ Մեկնեցէք գէպ ինձ ձեռքը։

Հիւանդը մեկնեց դէպի բժիշկը իր ձեռքը, եւ նա ցոյց տարով, իբր թէ շշափում է նրա երակը, հազիւ լսելի ձայնով ասաց։ «Ականջ դրեցէք ինձ եւ դուք ազատուած կը լինէք։»

Յետոյ նա նստեց սենեակի մէջտեղը, զրպանից դուրս հանեց իր դը վիթ - զալա մը եւ եղեգնեայ զրիչը, սկսեց աստղաբաշխական համարումներ անել։ Սալիհան հետաքրքրութեամբ նայում էր նրա դէմքի ծիծաղելի ծամածութիւնների վրայ, որ անում էր նա իր գործողութիւնները կատարելու ժամանակ։ Նա ուրախութեամբ կը ցանկանար ընդհատել աստղագէտի պարապմունքը, եւ իր սիրելի ձումշուդի մասին տեղեկութիւններ հարցնել,

բայց վախենալով, մի գուցէ իր հարցուփորձով խանգարէր նրան, այդ պատճառով լրեց։ Բայց աստղագէտը իորապուած էր իր գործի մէջ։ ուշադրութեամբ քննում էր բոլորակները եւ զանազան գծերը, որ գրել էր թղթի վրայ, մի եւ նոյն ժամանակ ինքն իրան մի առանձին ծանրութեամբ խօսում էր։

«Շատ գեղեցիկ... Ճննդեան աստղը մօտենում է... նա ընթանում է աւելի բարձր եւ բարձր... նա կանգնեց... հասկանում եմ, առաւօտը դեռ խիստ վաղ է... դէպի աջ կողսը՝ աստղները բարեյաջող են... դէպի ներքեւ՝ մէկը վնասակար է... բայց ես զիտեմ, թէ երբ է ծագում նա, կարելի է դրանից խոյս տալ... ուզիղ կանգնած է մի աստղ, որ մեծ խոնդուր կարող է լինել... բայց ահա ձին... նա ազատուած է... այդ չափազանց լաւ է... Այդ ինչ փայլուն աստղ է, հա՛, դա խանի աստղն է... որքան երջանիկ է նա... ինչ փառք է շրջապատում նրան... Նա այնքան պայծառ փայլում է, որ նայել անկարելի է նրա վրայ... զարմանալի է... խանումը կատարելավէս կ'առողջանայ, եթէ խոյս կը տայ այդ տատղի ազգեցութիւնից... Ահա, մի ինչ որ լորասանի աստղ է վազում հօրիզոնի վրայ... նա վազում է բռնելու խանումի աստղին։ — ահա նրանք զարկուեցան միմեանց... խանումի աստղը հրձուանքի մէջ է... եւ...

— Կարելի է վերջապէս ներս մտնել, հարցրեց Փանակ-խանը, որը գրաից ծածուկ կերպով ականջ էր դնում նրանց ամբողջ խօսակցութեամբ, որովհետեւ վստահութիւն ըունէր աստղաբաշխի վրայ։

Աստղագէտը վեր թռաւ գորգի վրայից, ասելով.

— Համեցէք, խան, միայն ի սեր Ալիի, աջ ոտքով եւ ներս մտնելուց յետոյ երեք անգամ թքեցէք դէպի ձախ կողմը։

Մնահաւաստ խանը կատարեց նրա պատուէրները,  
ներս մտաւ, հարցնելով.

— Հիմայ ասա՛, առողջայնելու յոյս ունե՞ս:

— Մեծ յոյս ունեմ, պատասխանեց աստղագէտը.

— Խանումի հիւանդութիւնը բոլորովին կ'անցնի մի հաֆ-  
թայի<sup>1</sup> ընթացքում, եթէ դուք, խան, շնորհ կ'անէք  
կատարելու իմ տուած խորհուրդները:

— Ասա՛, ինչ խորհուրդներ:

— Նախ, երեք օր շարունակ, արեւի ծագելուց  
առաջ, խանումը պէտք է խմէ մի-մի բաժակ ջուր այն  
առուակից, որը հոսում է դէպի աջ կողմը:

— Այդ հեշտ բան է: Շարունակեցէք...

— Վեց օր շարունակ նա պէտք է ձիով գնայ այն  
լեռան վրայ, որը գտնվում է աջ կողմում: Այդ զքօ-  
սանքը կատարելու համար նա պէտք է նստած լինի ձեր  
ամենալաւ եւ արագընթաց նժոյգներից մէկի վրայ: Ճա-  
նապարհ ընկնելու ժամանակը պէտք է նշանակուի ամեն  
օր արեգակի առաջին ճառագայթը ծագելու րոպէում:  
Երբ որ խանումը կը հասնի այնտեղ, լեռան վրայ, պէտք  
է ձիոց ցած իջնի, եւ երեսը դարձնելով դէպի Մեք-  
քայի կողմը<sup>2</sup>, պէտք է անդիր կարդայ մի քանի գլուխներ  
զօրանից: Ցետոյ կրկին պիտի նստէ ձիու վրայ եւ վերա-  
դառնայ տուն: Խանումը պէտք է ծածկուած լինի չա-  
տրակի մէջ, եւ դէմքը քօղարկած երեսակալով: Եւ ոչ

<sup>1</sup> Հաւթա, շաբաթ: Ծան. հեղ..

Հաւթա աւելի ճիշտ կը լինի թարգմանել եօթնեակ, այսինքն  
եօթն օր, մի շաբաթ: Ծան. թարգ..

<sup>2</sup> Բոլոր մահմեդականները աղօթելու ժամանակ երեսները դարձնում  
են դէպի Մէքքայի կողմը, ուր դանվում է ընդհանուր մահմեդականու-  
թեան սրբավայրը: Ծան. թարգ..

ոք այդ զքօսանքները կատարելու ժամանակ չի պիտի ու-  
ղեկցէ նրան:

— Ի՞նչպէս թէ ոչ ոք, գոչեց խանը տհաճութեամբ.

— Երեւի, դու յնորքների մէջ ես գտնվում, աստղագէտ:

— Երդվում եմ ձեր մօրուքով, խան, որ ես խօ-  
սում եմ ճշմարիտը: Ամեն մի տղամարդ, որ կուղեկցէ  
նրան, կը լինի պատճառ նրա կորստեանը: Որովհետեւ,  
իմ յիշած ամբողջ վեց օրերի ընթացքում խանումի  
աստղը պիտի փայլի ամենապայծառ կերպով, բայց հէնց  
որ նրան կը մօտենայ տղամարդի աստղը, այդ ժամանակ  
տիկնոջ աստղը խսդյն կը նաեւմանայ:

— Իսկ ներքինիներ:

— Այդ կիսամարդիկը նրա հիւանդութիւնը կը  
դարձնեն բոլորովին անբուժելի:

— Բայց դու գժուել ես, աստղագէտ, խօսեց խանը  
փոքր ինչ բարկացած կերպով: — Ի՞նչպէս կարելի է  
թոյլ տալ կնոջը միայնակ զքօսանք կատարել այդքան  
հեռաւոր տարածութեան վրայ: Դա անկարելի է. մեր  
սովորութիւններին հակառակ է այդ:

Ամենակարող խան, ես յայտնեցի ձեզ այն,  
ինչ որ ցոյց տուեց ինձ իմ խորին գիտութիւնը, որը  
ունեմ ես երկնային լուսատուների մասին, եւ որոնք  
կանխապէս սահմանում են մարդկային ճակատագիրը: Իսկ  
դուք չեք կամենում լսել ինձ, այդ ձեր կամքն է:

Փանահ-խանը մնաց շուարած դրութեան մէջ.  
չգիտեր ինչ վճռել: Իրան յատուկ կասկածամու-  
թիւնը կռուում էր նրա սրտում, մի կողմից, մնահաւա-  
տութեան հետ, որով գժուարանում էր նա չհաւա-  
տալ աստղագէտի խօսքերին, իսկ միւս կողմից, այն ցան-  
կութեան հետ, որով կամենում էր տեսնել Սալիհային

կատարելապէս առողջացած։ Երկար ժամանակ բնակած լինելով պարսիկների մէջ, նա սովորած էր հաւատալ աստղագէտների գուշակութիւններին, եւ նրանց խորհուրդների համեմատ կարգադրել իր գործերը։ Բայց այդ աստղագէտի պահանջները այն աստիճան օտարութի էին, որ նա չգիտէր, թէ ինչ պէտք է անել։ Աստղագէտը նկատելով նրա մտատանջութիւնը, խօսեց.

— Թոյլ տուեցէք, ամենազօր խան, ձեր ստրուկին ասել, որ ես ոչ մի պատճառ չունեմ ձեզ խարելու։ Ինձ յայտնի է ձեր ամենակարողութիւնը, որով պատժել կարող էք խարեբային։ Ինձ յայտնի է եւ ձեր առատաձեռնութիւնը գէպի այն մարդիկը, որոնք կը կատարեն ձեր ցանկութիւնները եւ որոնք կ'արդարացնեն ձեր յշսերը։ Ես կը մնամ այստեղ մինչեւ այն ժամանակ, երբ խանումը կատարելապէս կ'առողջանայ։ Եւ այն ժամանակ դոք կը տեսնէք, խան, որ սուրբ Ալիի կամեցողութեամբն է եղել, որ ինձ ուղարկել է այստեղ, որպէս զի իմ ձեռքով փարասուի այն տրտմութիւնը, որը աիրում է ձեր ամուսնի վրայ։ (Եւ թող բազմապատկէ Ալլահը նրա բախտաւորութիւնը, եւ թող երկարացնէ նրա կեանքը այնքան ժամանակ, որ նա կարողանայ տեսնել իր ժառանգներին մինչեւ եօթներորդ սերունդը)։ Ես գիտեմ, թէ մրագիսի ընծաների կ'արժանանամ եւ որպէս կը վարձատրէ ինձ իշխողներից ամենամեծը՝ ջուանշերցիների խանը (որի գէմքը թող յաւիտեան փայլի փառքի եւ վեհութեան պայծառութեամբ)։

Փանահ-խանը կատարելապէս հրապուրուեցաւ աստղագէտի խորամանկ ճառից։ Նրան աւելի գրաւեց գիտնականի անկեղծ ուրախութիւնը, որը արտայայտվում էր

նրա գէմքի վրայ, երբ խօսում էր իր ստանալիք ապագայ ընծաների մասին։

— Ես համաձայն եմ, ասաց նա, — էգուցուայ օրից կը սկսենք Սալիհային բժշկելու կարգադրութիւնները։

Յետոյ մօտեցաւ հիւանդին, բայց նա, կամենալով խոյս տալ անտանելի բռնակալի ներկայութիւնից, ձեւացրեց իրան իրը թէ քնած է։ Խանը կրկին կանչել տուեց իր կնիկներին եւ ներքինիներին իրանց տեղում, եւ ինքը աստղագէտի հետ հեռացաւ։

## Ա Բ Ա Զ Ի Ն Մ Ա Ս Ն Վ Ե Ր Զ Ը



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՌԴ



I.

Սալիհայի առեւանգումը — աստղագէտի գերուիլը —  
Շուշի բերդի հիմարկութեան առաջարկութիւնը:



Աստղագէտը բաւական ճարպիկ կերպով  
սարքեց Սալիհային առեւանգելու  
ամբողջ ծրագիրը: Յետոյ գիշերով  
զաղոնապէս մոտաւ Զումչուդի տա-  
ղաւարը, հաղօրդեց նրան ինչ որ  
կատարուեցաւ: Զմայլած երիտա-  
սպրդը ուրախութեամբ զբկեց աս-  
տղագէտին, խոստացաւ նրա ծա-  
ռայութիւնը առատապէս վարձատրել, երբ ինքը կը վե-  
րադառնայ Զանախչի ամրոցը: Նրանք երկուքն էլ համա-  
ձայնութիւն կայացրին այն միջոցների վերաբերութեամբ,  
թէ ինչ եղանակով պէտք է գործէին, որ կասկածանքի  
առիթ չտային:

Միւս օրը, Զումչուդը, տեսնուելով Փանահ-խանի  
հետ, թոյտութիւն ինդրեց իր խումբով վերադառնալ,

որպէս զի իր հօրեղքօրը տեղեկութիւն տայ, թէ խանի զօրքերը շուտով նրան օգնութեան կը հասնեն: Փանահիանը, յայտնելով նրան իր ափսոսանքը, թէ զբկվում է մի մեծ բաւականութիւնից, որ չէ կարող աւելի երկար ժամանակով պահել իր մօտ թանկագին հիւրին, — ասաց, որ նա կարող է գնալ, երբ որ կը ցանկանայ, իսկ ինքը, առանց ժամանակ կորցնելու, նրա ետեւից իր զօրքերով կը դայ:

Հրաժարական ողջոյն տալով Փանահիանին, ջում շուդը ճանապարհ ընկաւ: Բայց մի օրուայ ուղեւորութիւնից յետոյ, նա յանձնեց իր խումբը իր հաւատարիմ նօքարներից մէկին, հրամայեց գնալ Զանախչի, տալով նրան մի նամակ իր հօրեղքօր անունով, հետեւեալ բովանդակութեամբ.

“Ամենակարող Աստուծոյ կամքով մեր գործերը յաջողակ են ընթանում: Փանահիանը չորս հազար ջուան շերցիներով կը դայ մեզ օգնելու, ոչ այնքան ուշ, քան տասն օրից յետոյ: Նա յանձնեց ինձ յայտնել ձեզ իր մշտական անկեղծ բարեկամութեան զգացմունքը եւ իր փափագը նպաստելու ձեր յառաջադիմութեանը: Սերեցէք, որ ես ինքս չեմ բերում ձեզ այդ համբաւը: Մի կարեւոր հանգամանք պահանջում է իմ շուտափոյթ գնալը ջուանշերցիների օրաներից մէկում, որտեղ ես անցուցել եմ այն չորս տարիները, երբ սովորում էի պատերազմական արհետը:

“Անհանգիստ մի լինիք իմ մասին: Ես շուտով դարձեալ կը յայտնուեմ ձեզ մարտակից լինելու համար մեր ընդհանուր թշնամիների դէմ”:

Երկու հաւատարիմ նօքարներ իր հետ առած, ջումշուդը բաժանուեցաւ իր խումբից եւ զարտուղի ճա-

նապարհներով յետ դառնալով, եկաւ, թագնուեցաւ այն անտառի մէջ, որ շատ հեռու չէր Փանահիանի բնակարանից, եւ բոլորովին մօտ էր այն լեռանը, որի վրայ, աստղագէտի կարգադրութեան համեմատ, Սալիհան պիտի այցելութիւն գործէր Ղօրան կարդալու համար:

Արեգակը դեռ նոր էր մայր մտել, երբ աստղագէտը եկաւ ջումշուդին տեսնելու: Նրան գժուար չէր գտնել երիտասարդին, որովհետեւ առաջուց ժամանիր էին եղած, թէ անտառի որ վայրում պէտք է սպասէ աստղագէտին: Այդ վերջինը բերեց ջումշուդի եւ նրա երկու նօքարների համար Խօրասանի սաղաւարտներ եւ զրահներ<sup>1</sup>, որոնց գնելու համար սկզբից փող էր ստացած երիտասարդից:

— Ո՞քան ուրախ եմ եւ չնորհակալ քեզանից, իմ սիրելի աստղագէտ, որ դու Ճշտութեամբ կատարեցիր քո խոստմունքը: Հիմայ ասա՛ ինձ, սկսուեցան արդեօք իմ նազելի Սալիհային բժշկելու հրաշալի եղանակը:

— Այսօր առաւտեան առաջին անգամ նա ձիով դուրս եկաւ: Թէեւ ես սաստիկ արգելեցի, որ ոչ ոք չուղեկցէր նրան, բայց կասկածամիտ Փանահիանը, նստած ձիու վրայ, հեռուից իր հայեացքով հետեւում էր նրան: Խանին ես հակառակել չկարողացայ: Նրա այդ կասկածանքը ստիպում է մեզ աւելի զգոյշ լինել: Էզուց, երբ տիկինը կը բարձրանայ սարի վրայ եւ ձիուց ցած կիջնէ Ղօրանի ընթերցանութեան համար, — դուք ձեր նօքարների հետ, ցած թողնելով ձեր սաղաւարտների երեսակալները, պէտք է յարձակում գործէք եւ յափշտակէք Սալիհային: Շտապեցէք, որքան կարելի է, շուտով մտնել անտառը: Ես էլ նատելով Սալիհայի ձիու վրայ, իսկոյն

<sup>1</sup> Խօրասանում պատրաստուած սաղաւարտները եւ զրահները շատ յարգի են Պարսկաստանում: Ծան. հեղ.:

կը միանամ ձեզ հետ։ Թէտք է զգուշանանք մեր ետեւից ընկնողներից։

— Գեղեցիկ խորհուած է։ Դրանից աւելի լաւը մտածել անկարելի էր։ Բայց չգիտեմ, ի՞նչու իմ սիրալ այսպէս սաստիկ կերպով բարախում է։ Երեւի, դա մի որ եւ է դժբախտութեան նախազգացումն է։ Բայց ի՞նչ էլ որ պատահելու լինի, արդէն վճռուած բան է . . . ես պիտի ամեն ինչ զոհեմ Սալիհայի փրկութեան համար։ Միայն չգիտեմ, որտեղ ես պիտի տանեմ իմ կնոջը։

— Զանախչի, ուղեղ ձեր հօրեղքօր մօտ. ահա իմ խորհուրդը։ Դուք վաղ թէ անագան պէտք է յայտնէք ձեր գաղտնիքը եւ պէտք է ցոյց տաք նրան ձեր կնոջը։ Այժմ ամենայարմար ժամանակն է։ Ձեր հօրեղքօր թալիչ մելիքի հետ ունեցած երկպառակութիւնը, նրա անհրաժեշտ կարօտութիւնը ձեր սրի եւ խորհուրդների մէջ։ Ակսուող պատերազմի վերաբերութեամբ, — այդ բոլոր կը հարկադրեն նրան հաշտուելու ձեզ հետ եւ ամեն ինչ կը մոռացուի։

Զումշուդը համաձայնուեցաւ աստղագէտի ենթարկութիւնների հետ, եւ նա վերագարձաւ Փանահանանի մօտ։

Միւս օրուայ առաւօտը, երբ պէտք է կատալուէր առեւանգումը, էր այն հրապուրիչ եւ շքեղ առաւօտներից մէկը, որոնք սովորական են Ղարաբաղում, առաւել ամառնային եղանակների ժամանակ։ Հենց որ ծագեցին արեգակի առաջին ճառագայթները, Սալիհան նստած իր պատուական նժոյգի վրայ, դիմեց դէպի լեռը, սկսեց բարձրանալ նրա գագաթի վրայ։ Փանահ-խանը ոչ մի կերպով չէր կարող համբերել, որ հեռուից չգիտէր նրա գործողութիւնները։ Զումշուդը եւ նրա երկու նօքարները,

ոտքից ցգլուխ պատած զըաշի մէջ, եւ դէմքերը ծածկած երկաթեայ երեսականերով, թագնուած թաւախիտ թուփերի մէջ, ու շաղրութեամբ նայում էին այն գործողութիւնների վրայ, որ նրանց աչքի առջեւ կատարվում էին։ Աստղագէտը գործի յաջողութիւնը աւելի դիւրացնելու համար, բոնած Սալիհայի ձիու սանձից, տանում էր մինչեւ սարի գագաթը։

Տիկինը ձիուց վայր իջածին պէս, աստղագէտը տարածեց նրա ոտների տակ գորգը, որի վրայ ծալապատիկ նստելով, սկսեց նա լսելի ձայնով կարդալ Ղօրանի այաթները։ Այդ լուպէին ջումշուդը իր երկու նօքարների հետ թռան նժոյգների վրայ, եւ նետի նման սլացան դէպի նոյն լեռը։ Յափշտակելով ապշած Սալիհային իր գրկի մէջ, ջումշուդը կայծակի արագութեամբ անհետացաւ անտառի խորքում։ Նօքարները եւ աստղագէտը հետեւեցին նրան։ Վերջինը կարողացաւ նստել Սալիհայի ձիու վրայ։ Փանահ-խանը տեսնելով այդ անցքը, նոյն րոպէում հասկացաւ, որ ինքը խարուած է, եւ իր հետ եղած խումբով նետուեցան փախստականների ետեւից։ Բայց փախստականները ունեին ամենալաւ ձիաներ եւ միջոց գտան միքանի տանենեակ լուպէներով առաջ անցնել։ Բացի դրանից, անտառի մէջ, խուրոնակի պտոյտներով, նրանք աշխատում էին այնպէս շուտ-շուտ փոխել ձանապարհը, որ Փանահ-խանը մի ամբողջ ցերեկ նրանց հետամուտ լինելուց յետոյ, երեկոյեան բոլորովին կորցրեց նրանց հետքերը։ Բայց դժբախտաբար աստղագէտի ձին, փախչելու միջոցին սայթաքուելով, ցած գլորուեցաւ։ Նա ընկաւ այնպէս անաջող կերպով, որ աստղագէտի մի ոտքը մնաց ձիու տակին։ Այդ դժբախտ դրութեան մէջ նա չկարողացաւ աղատուել վերահաս վտանգից։

Փանահ-խանը իր խումբի հետ վրահասաւ, եւ տեսնելով ողորմելի աստղագէտին, մի առանձին գաղանային ուրախութեամբ աղաղակեց.

— Փառք սուրբ մարտարէին, որ դու վերջապէս իմ ձեռքը ընկար: Խաբեբայ, այդ անտառը կը լինի քո գերեզմանը...

Յետոյ դտունալով դէպի իր խումբը, հրամայեց.

— Դուրս քաշեցէք այդ անիրաւին ձիու տակից, որին նա իզուր տեղը փշացրեց, եւ բերեցէք ինձ մօտ: Թէեւ մենք կորցրինք իմ սիրելի Սալիհային յափշտակողների հետքերը, այժմ գոնէ կ'իմանանք, թէ ովքեր էին նրանք: Անպատճառ այդ ստախօսին արժանի բարեկամները կը լեն, որը համարձակուեցաւ այնպէս խորամանկ կերպով խաբել ինձ: Բայց ես դրա հատուցումը կը տամ...

Նօքարները՝ դուրս քաշեցին աստղագէտին, որը երկիւղից դողդողում էր, բերեցին Փանահ-խանի մօտ: Նա նստած էր մի ծառի կոճղի վրայ, իր քննական հայեացքը դարձրել էր դէպի աստղաբաշխը: Նրա բարկութիւնը չափ չունէր:

— Իմաննում ես արդեօք, ասաց նա, — թէ բրափիսի պատժի արժանի ես: Կարող ես որոշել նրա չափը:

Աստղագէտը ոչինչ չպատասխանեց:

— Հասկանում եմ, շարունակեց Փանահ-խանը, որ դու ինքդ չես կարող որոշել: Լաւ, ես ինքս կը նշանակեմ: Նախ, դու պէտք է յայտնես, թէ ովքեր էին ստահակները, որոնք համարձակուեցան յափշտակել իմ կողմը, եւ ինչ նպատակով: Այդ պարզ է, որ դու նրանց հետ համախոչ ես եղել: Յետոյ ես կը մտածեմ, թէ բրը լաւ կը լինի, կախել քեզ ոտներից այդ անտառի մէջ գիշաւ կեր թռչուններին կերակուր դառնալու համար, թէ կեն-

դանի թաղել գետնի մէջ<sup>1</sup>: Այսուամենայնիւ, ես այնքան ներողամիտ կը լինեմ, որ այդ երկուսից մէկի ընտրութիւնը կը թողնեմ քո կամքին... Հիմայ առանց այլեւայլութեան դառնանք դէպի գործը: Սկզբից նախազգուշացնում եմ քեզ, որ դու ամեն մի հարցի մէջ, եթէ գարձեալ կ'աշխատես խաբել ինձ, ամեն անգամ կը ստանաս հինգհարիւրական հարուածներ քո ոտների տակ: Խօսիր:

Աստղագէտը չոքեց ծնկների վրայ, ասաց.

— Ամենակարող խան, ես զգում եմ իմ վարմունքի բոլոր գարշելիութիւնը, բայց եթէ ջուանշերցիների հրամանատարի ողորմածութիւնը թոյլ կը տայ ինձ, ես կը հաղորդեմ նրան բոլորը, ինչ որ ինձ յայտնի է: Ես ցոյց կը տամ այն բոլոր միջոցները վեհափառ Փանահ-խանին, որոնցմավ նա կը լինի ամբողջ Ղարաբաղի պետը:

— Դու կամենում ես կրկին խաբել ինձ:

— Թող հէնց այդ բոպէում շան կերպարանք ստանամ<sup>2</sup>, եթէ իմ ասածները ճշմարիտ չլինեն:

— Տեսնենք: Ես կը շնորհեմ քեզ մի քանի ժամ եւս կեանք: Բայց յիշեր, որ եթէ քո պատմութեան մէջ կը ստախօսես, իւրաքանչիւր սուտի համար կը ստանաս հինգ հարիւր հարուածներ ոտներիդ տակ: Վեր կաց, քո ծնրադրութիւնը ամենեւին չի փրկի քեզ:

Աստղագէտը վերկացաւ եւ սկսեց պատմել այն բոլորը, ինչ որ մեզ արդէն յայտնի է ձումշուղին եւ Սալիհայի ամուսնութեան վերաբերութեամբ. բացատրեց այն պատճառները, որ ստիպել էին ձումշուղին իրան ձեւա-

<sup>1</sup> Այս տեսակ պատիժները իմաստ սովորական են արեւելքում: Ծան. հեղ..

<sup>2</sup> Երդուելու մի առանձին ձեւ է պարսիկների մէջ: Ծան. հեղ..

ցնել խօրասանցի. յայտնեց, թէ ինչ գաղտնիք կար, որ առիթ էր տալիս ձումշուդին ծածուկ պահելու իր ամուսնութիւնը իր հօրեղօրից. — վերջը, որ նա վճռեց առեւանգել Սալիհային, ինչ կերպով եւ լինէր, իսկ ինքը, աստղագէտը, նրա գիտաւորութեանը օդնում էր, կատաւելով հաւատարիմ ծառայի պարտաւորութիւնը:

Այդ պատմութեան միջոցին Փանահ-խանը ու սակաւ անգամ արտայայտում էր իր զարմացումը եւ կարեկցութիւնը դէպի ձումշուդի անել զրութիւնը, որից ստիպուած, վճռել էր նա ծայրայեղութեան դիմել: Վերջապէս ասաց նա.

— Ցաւում եմ, որ ես այդ բոլորը առաջուց չեցիսէի, այն ժամանակ, շատ կարելի է, որ ես չէի ցանկանայ զբկել այդ սիրարժան երիտասարդին իր կնոջց, որին նա այնքան զոհաբերութեամբ տիրացել էր: Այդ պատմութիւնը մեղմացնում է իմ աշքում եւ քո յանցանքը: Ծառայի համար ամեն պարտաւորութիւններից նախադաս է լինել հաւատարիմ իր տիրոջը: Դու կատարել ես քո պարտքը: Բայց թէեւ գու ինձ խաբեցիր, իսկ ես հանգամնանքները ի նկատի առնելով, ներում եմ քեզ: Հիմայ գու ինձ այն ասա, թէ ինչ միջոցով կարող եմ ես համեն ամբողջ Հարաբաղի վրայ տիրելու բարձր իշխանութեանը: Հաւատացած եղիք, որ ես կը վարձատրեմ քեզ արժանաւոր կերպով:

— Թող Ալսահը եւ սուրբ Մարգարէն առաքեն ամենազօր, ամենաողորմած եւ ամենաբարի խանի վրայ իրանց օրհնութիւնը եւ թող բաղմացնեն նրա կեանքի տարիները Մեծ ծովի<sup>1</sup> աւազների թուով: Զեր դէպի ինձ ցցց տուած գթութեան համար, խան, ես կը հաղորդեմ այդ

<sup>1</sup> Մեծ ծով. ովկիանոս: Ծան. հեղ.:

նշանաւոր գաղտնիքը: Երկպառակութիւնները, որ ծագել են Խամսայի մելքների մէջ, բոլորովին քայքայել են նրանց միաբանութիւնը: Իսկ այդ նոր սկսուող պատերազմը կը հասցնէ վերջին հարուածը: Նրանց զօրութիւնը խսպառ կը թուլանայ: Ամբողջ Հարաբաղի վրայ բարձր իշխանութիւն ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ միայն մի բերդ, որը կառուցուած վինէր մի անմատչելի տեղում: Իսկ ես գիտեմ մի այսպիսի տեղ: Զանախիլից 12 վերստ հեռաւորութեան վրայ կայ մի սար, որի գագաթի վրայ ստորոտից բարձրանալու համար հարկաւոր կը լինի մէկ եւ կէս ժամ: Սարսափելի զառիվերներ տանում են դէպի նրա ժայռոս գագաթը: Այդ սարը երեք կողմից բոլորովին անմատչելի է: Նա շրջապատած է պարսպաձեւ ապառաժներով, որոնց ներքեւից աղմկելով որոտում է մի գետ եւ արագութեամբ վազում է քարերի միջով: Միայն մի կողմից կարելի է մուտք գործել դէպի սարի գագաթը, եւ այդ կողմը կարելի է ամրացնել պարիսպներով: Իսկ մնացած կողմերը պաշտպանվում են բնական ամրութիւններով: Սարի գագաթի վրայ կայ մի տափարակ տարածութիւն, որի շրջապատը երկու ժամուայ ճանապարհ կը լինի: Այդ տեղում կարելի է հիմնել մի քաղաք եւ բնակեցնել նրան քաջապատերազմողներով: Այնուհետեւ դուք կը լինէք անմատչելի, երբ մի որ եւ իցէ վտանգ կը սպառնայ թշնամին, եւ կարող եք միշտ հարուածել ձեր թշնամիներին, պահպանով շրջակայ բնակիչներին սարսափի մէջ, եւ սրի ուժով կը հարկադրեք նրանց ձեղ հպատակելու:

— Շատ գեղեցիկ եւ չափազանց լաւ մտածուած է, պատասխանեց Փանահ-խանը: — Դու, ով աստղագէտ, թէեւ վատ բժիշկ ես, թէեւ խաբերայ ես, բայց որպէս

երեւում է, հնարագիտութեան մէջ խիստ վարպետ ես: — Ումն է պատկանում հիմայ այդ տեղը:

— Վարանդայի մելիքին: Եւ որովհետեւ դուք այժմ հրաւիրուած էք նրան օգնելու համար, այդ պատճառով խիստ դիւրին կը լինի ձեզ պահանջել նրանից, որ այդ տեղը ընծայէ ձեզ: Մի բան էլ կայ. իմ տուած խորհրդի համեմատ, ձումշուղը պէտք է իր կնոջը ներկայացնէ իր հօրեղօրը: Դուք կարող էք պահանջել ձեզ համար բաւականութիւն այն յափշտակութեան մասին, որ կատարեց ձումշուղը, առեւանդելով Սալիհային, որը արդէն ձեր կինն էր դարձել: Ձեզ հետ իր բարեկամական կապերը պահպանելու համար եւ իր եղօր որդուն ձեր վրէժինդրութիւնից ազատելու համար, որ նա կրկին բախտ ունենայ իր Սալիհայի ամուսինը լինել, — ես հաւատացած եմ, որ Վարանդայի մելիքը ուրախութեամբ կը համաձայնուի ընծայել ձեզ այն տեղը, եթէ դուք կը ներդունէք այդ որպէս վարձատրութիւն ձեզ հասցրած անպատվութեան փոխարին:

— Դու չափազանց խելացի մարդ ես, աստղագէտ: Այն պարզեւը, որին դու արժանի ես, կը լինի քո ազատութիւնը պատժուելուց եւ վարձատրութիւն փողերով: Դու կը ստանաս թէ առաջինը եւ թէ երկրորդը, հետեւիր ինձ:

Նրանք գնացին:

## II.

Գիշերային պատերազմ Զանախչիի մօտ — նրանց ազատուելը պաշարումից:

Ձումշուղը իր թանկագին աւարի հետ ձիավարում էին մի ամբողջ օր, առանց հանգստանալու: Վերջապէս

զգալով սաստիկ յոգնութիւն, եւ այլ եւս չտեսնելով իրանց ետեւից հետամուտ եղողներին, նրանք կանգ առին:

Սալիհան, որ սկզբից սաստիկ վախեցած էր, ուրախացաւ, երբ լսեց ծանօթ ձայնի հնչենները, որոնք այնքան մօտ էին նրա սրտին: Հասկանալով կատարուած անցքի նպատակը, նա ձանապարհի ամբողջ ընթացքում միայն նայում էր ձումշուղի վրայ, այն աշքերով, որ լցուած էին հոգեկան բերկրութեամբ, եւ չէր կարողանում իր հրձուանքին բաւականաչափ մնունդ տալ: Երբ որ նրանք կանգ առին, Սալիհայի հարցմունքները չափ չունէին: Անդադար գրկում էր իր ամսւանին, Ճնշում էր իր կուրծքի վրայ, աշխատում էր արտայայտել իր սրտի բոլոր բորբոքը, բոլոր սէրը, բոլոր տանջանքները, որ կրել էր նա իրանց անջատման միջոցում: Ձումշուղը նյոնպէս գտնվում էր մի այնպիսի հիացման մէջ, որ խօսքեր չէր գտնում իր ուրախութիւնը արտայայտելու: Փափուկ խոտերը ծառայում էին նրանց անկողնի տեղ, իսկ միլիոնաւոր աստղերը, որոնք շքեղ կերպով սփոռուած էին կապոյտ երկնակամարի վրայ, լուսաւորում էին նրանց: Ո՛վ սիրոյ քաղցր րոպէներ, ինչու ամենին չէք վիճակվում դուք: Բայց աւազ, գուարձութիւնները խեղճ մահկանացուների գնվում են խիստ թանկ գնով եւ հոգեկան դառնութիւնների հետ գտնվում են մի եւ նոյն կարգում, — դառնութիւններ, որոնք վաղ թէ անագան յաջորդում են ուրախութիւններին...

Երրորդ օրուայ երեկոյեան պահուն ձումշուղը տեսաւ իր առջեւ մի խումբ զինուած մարդիկ, որոնք, ինչպէս երեւում էր, հանգստանում էին, որովհետեւ նրանց ձիաները արածում էին նրանց շուրջը: Երիտասարդը հետաքրիզուեցաւ գիտենալ, թէ ովքեր էին նրանք, այդ

մաքով իր նօքարներից մէկին հրամայեց, որ գնայ տեղեւկանայ: Երբոր նա վերադարձաւ, ջումշուղը խմացաւ, որ նրանք իր մարդիկն էին, որոնց առաջուց ինքը ճանապարհ էր դրել, որ գնային Զանախչի: Նա զարմացաւ, թէ ինչ արգելք կարող էր այդքան ժամանակ նրանց պահած լինել այդ տեղում, եւ խսկոյն մօտեցաւ, սկսեց պատճառը հալցնել մի եւ նոյն նօքարից, որին յանձնել էր իր խմբի գլխաւորութիւնը:

— Գուցէ ձեզ յայտնի չէ, իշխան, պատասխանեց նա, — որ Խամայի բոլոր մելքները ապատամբուեցան մեր գէմ, եւ Թալիշեցիք, ջարդելով ձեր հօրեղքօր զօրքերը, արդէն պաշարել են Զանախչին: Մենք չհամարձակուեցանք առանց ձեզ առաջ գնալու եւ վճռեցինք սպասել ձեր վերադարձին:

— Հօ, այդ շատ վաղ են սկսել... ես այդ չէի սպասում... — Շատ է թշնամիների թիւը:

— Մօտ երեք հազար:

— Այդ ոչինչ. ես կ'աշխատեմ շուտով ծանօթանալ Թալիշեցիների հետ... Մենք հէնց այդ գիշեր պէտք է յարձակուենք թշնամիների վրայ եւ աղատենք Զանախչին պաշարումից:

Ջումշուղը խորհուրդ տուեց Սալիհային հագնուել տղամարդի ձեւով եւ յարձակում գործելու միջոցին ըստաժանուել իրանից: Ժամանակը նպաստում էր քաջերիտասարդի դիտաւորութեանը: Երկինքը ծածկուեցաւ մէզերով, որոար որոտում էր, կայծակը կարատում էր մթին ամպերը: Ամեն ինչ ցոյց էր տալիս, որ գիշերը փոթորկային եւ խաւար կը լինի: Ջումշուղը բաժանեց իր խումբը երեք մաս, հրամայելով իւրաքանչիւր մասին հարուածել թշնամուն միմեանց հակառակ կողմերից: Որ-

պէս զի խաւարի մէջ միմեանց ճանաչեն, նրանք ընտրեցին որպէս նշանաբան Սալիհա անունը:

Գիշերից: Սաստիկ անձրեւը հեղեղի նման թափում էր ամպերից: Անընդհատ որոտման միջոցում կայծակի փայլատակումը հետեւում էր մինը միւսին. շանթահար երկինքը, կարծես թէ, վառվում էր կրակի մէջ: Կամաց, առանց աղմուկի, ջումշուղի խումբը առաջ էր ընթանում: Անձրեւի ձայնը խլացնում էր նրանց քայլերի խիշոցը: Նրանք գնում էին հետիոտս, ձիաները իրանց ետեւից քարշ տալով: Զանախչի բերդին խիստ մերձ հեռաւորութեան վրայ նրանք տեսան թշնամիների մի խումբ, որ զետեղուած էր տաղաւարների մէջ: Տաղաւարները հիւսուած էին ծառերի ճիւղերից: Եղանակի վատութիւնը տախիւլ էր նրանց ծածկուել այդ ժամանակաւոր բնակարանների մէջ: Միայն տեղ-տեղ տեսնվում էին կանգնած պահապաններ, որոնք անձրեւից պահպանուելու համար մինչեւ ականջները ցած էին թողել իրանց փափանները եւ նայում էին դէպի հակառակ կողմը:

Հետազօտերով այդ բոլորը կայծակի լուսով, որը անդադար փայլատակում էր, ջումշուղը նշանացի կերպով իմացում տուեց նստել ձիաների վրայ: Նրա հրամանը կատարուեցաւ այնքան հանդարտութեամբ, որ անկարելի էր լսել ամենափոքը շարժման ձայն անգամ: Հարիւր մարդ դիմեց դէպի գետի կողմը, միւս հարիւրը դիմեց դէպի բերդի հիւսիսային կողմը, իսկ ջումշուղը մնացածների գլուխը անցնելով, ընտրեց գործել դէպի կենտրօնը: Մի ակնթարթում երեք խումբերը միասին, սարսափելի աղաղականը, յարձակուեցան քնաթաթախ, ընդարձացած Թալիշեցիների վրայ: Արիւնհեղութիւնը սոսկալի էր: Թշնամիների մէջ տիրեց շփոթութիւն եւ իրարանցում: Նրանք

ՀՀասկանալով թէ ում հետ գործ ունեն, կամ իլում էին իրանց զէնքերը եւ յարձակվում էին միմեանց վրայ, կոտորում էին միմեանց, կամ ընկնում էին վէրք ստանալով վարանդացիների խէնջարներից ու թրերից։ Այդ միջոցում կայծակը, կարծես թէ, կամենալով նպաստել ձումշուդի յաջողութեանը, փայլատակեց մի տաղաւարի վրայ եւ այրեց նրան։ Որոտման զարհուրելի պայթիւնը դղբեց ամբողջ շրջակայքը, եւ լեռների խորքից հազարւոր բուժիւններ վերադարձրին նրա արձագանքը։ Կրակը արագութեամբ տարածուեցաւ բոլոր տաղաւարների մէջ եւ հրդեհի լուսաւորութեան առջեւ վարանդացիները կոտորում էին իրանց թշնամիներին, ինչպէս գիշտիչ գագաններին։

Թալիշի մելքի որդին, որը բերդը պաշարողների հրամանատարն էր, գործ դրեց բոլոր հնարաւոր միջոցները, որ կարողանայ հաւաքել իր զինուորներին, որպէս զի ընդդիմադէ յարձակուողներին, բայց նրա ջանքերը ի զուր անցան։ Վերջապէս նրան յաջողուեցաւ միացնել մինչեւ հինգ հարիւր հոգի, որոնք գտնվում էին անպատճառ եւ անկարգ վիճակի մէջ։ Նա խիզն յայտնեց նրանց, թէ թշնամու թիւը շատ փոքր է, եւ թէ շափազանց ամօթալի բան կը լինէր մի բուռն գայլերից խոյս տալը, կորցնելով այն բոլոր օգուտները, որոնք ձեռք էին բերուած այնքան թանկ գներով։

“Ամաչեցէք, աղաղակում էր նրանց, — ամաչեցէք, երկոտ զինուորներ, ուր էք փախչում այսպէս շտապով։ Միթէ չէք տեսնում, որքան փոքրաթիւ են այն ստահակները, որ համարձակվում են մեզ անհանգստացնել։ Միթէ դուք նոյն թալիշեցիները չէք, որոնք մի քանի օր առաջ մահ եւ սարսափ էին տարածում վարանդայի զօրքերի

մէջ։ Ինչից էք վախենում դուք, ձեր տաղաւարների հրդեհից, թէ այդ մի բուռն մարդիկներից։ Սրբենք դրանց արիւնով մեր սրերը եւ զրանով փարատենք մեր նախատինքը։ Երեւի, դուք ցանկանում էք, որ ես ամաչելով յիշեմ, որ ձեր հրամանատարն եմ եղել։ Եկէք, եկէք հաւաքուենք եւ ստիպենք զղջալ այդ յանդուգն յիմարներին, որոնց ես չեմ ճանաչում։ Խելքի եկէք, թալիշեցիք, եթէ ոչ, երդվում եմ բոլոր սրբութիւններով, որ ես կոտորել կը տամ ձեզ, ինչպէս անպիտան ստրուկների, որոնք իրանց ստուերից եւս վախենում են։

Այսպէս աղաղակելով, թուրը շարժելով եւ անհնաղանդներին իր ոտքերի տակ ձգելով, Մելք-Յուսէինը հաւաքեց իր զօրքերից մնացածներին, մի կողմը տարաւ, որպէս զի ժամանակ ունենայ նրանց կարգի բերելու։ Վարանդացիները, այլ եւս չտեսնելով թշնամիներին, վազեցին աւարի առնելու թալիշեցիների բանակը, որը արդէն միխիր էր գարձած։ Յանկարծ նրանց ետեւից լսելի եղաւ խառնաձայն աղաղակ։ Մելք-Յուսէինը իր մարդիկներով յարձակուեցաւ ձումշուդի զօրախումբի վրայ եւ չորս կողմից պաշարեց նրան։ Կոխւը նորոգուեցաւ այժմ աւելի յամառութեամբ։ Յուսէինը պատառելով թշնամու խումբը, մօտեցաւ ձումշուդին, եւ երկուսի մէջ սկսուեցաւ սաստիկ մենամարտութիւն։ Ձումշուդին աղատեց նրա զրահը եւ սաղաւարտը, իսկ Յուսէինին նրա անհամեմատ ճարպկութիւն։ Ձումշուդը խնայում էր նրան, բայց նա ամենեւին չէր մտածում խնայել ձումշուդին։ Նրա մանկահասակ կինը, ամուսնի մօտից չքաժանուելով, կռուում էր զարմանալի քաջութեամբ։ Յանկարծ, ձումշուդը իր նժոյգը սաստիկ արագութեամբ գարձնելու միջոցին, ասպանդակները կտրուեցան, եւ ինքը գլխիվայր թռաւ դեսնի

վրայ: Յուսէինը շտապեց օդուա քաղել այդ դէսկրից եւ պատրաստվում էր իր մահաբեր սուրբ իջեցնել ոսոխի գլխին: Բայց ջումշուդի պահապան հրեշտակը այնտեղ կանգնած էր: Մանկահասակ Սալիհան մի ակնթարթում դուրս է կորզում թուրը Յուսէինի ձեռքից եւ իր երկրորդ հարուածով նրան գլորում է գետին: Տեսնելով իրանց հրամանատարին ընկած, թալիշեցիները նոյն րոպեում ցրիւ եկան, եւ արշարուափ առաջին ճառագայթները ողջունեցին վարանդացիների յաղթութիւնը: Զանախչի բերդը ազատուեցաւ թշնամու պաշարումից:

Պաշարուածները ամբողջ գիշերը անցկացրին բերդի պարիսպների վրայ, չկարողանալով հասկանալ, թէ արդեօք ովքեր պէտք է լինին նոր յարձակում գործողները, կամ բերդի շրջակայքում ինչեր էին կատարվում: Քամու շվշոցը, անձրեւի աղմուկը, որոտի սաստիկ գղրդիւնը թոյլ չեն տալիս նրանց մի բան լսել: Եւ վախենալով, մի գուցէ իրանց սխալմունքով Զանախչին մասնեն թշնամու ձեռքը, նրանք չվատահայան բերդից դուրս դալ եւ մինչեւ առաւօտ մնացին փակուած նրա մէջ:

### III.

Դաղտնիքը յայտնվում է — Փանահ-խանի գալուստը:

Մեծ ուրախութեամբ Ալարմնդայի իշխանը իր ամրոցի պարիսպներից տեսաւ ջումշուդին, որը յաղթական փառքով, իր խումբի հետ, մօտենում էր շարժական կամուրջին: Հօրեղբայրը եւ եղբօրորդին յնծութեան բացականչութիւններով վաղեցին եւ միմեանց զիրկը ընկան: Երբ անցաւ հոգեգմայլութեան առաջին րոպէն, մելիքը ասաց:

— Հաղար անգամ գոհութիւն կը մատուցանեմ Ամենաբարձրեալին, որ քեզ, իմ սիրելի ջռ մշուդ, եւ ոչ մի ուրիշին պարտական եմ ես թշնամիների պաշարումից ազատուելու: Դու շահեցիր մի նոր իրաւունք իմ երախտագիտութիւնը գրաւելու համար: Բայց ով է այդ գեղեցկադէմ երիտասարդը, որ կանգնած է քո մօտ:

— Դա իմ փրկիչն է, հօրեղբայր, եթէ դա չլինէր, դուք այլ եւս ինձ չէիք տեսնի:

— Ի՞նչպէս:

Ջումշուդը պատմեց մեզ արդէն յայտնի անցքը: Վարանդայի մելիքը հիացմամբ գրկեց Սալիհային, համբուրեց: ասելով.

— Սիրելի երիտասարդ, քո ինձ մատուցած ծառայութիւնը այնքան անգնահատելի է, որ բարձր է ամեն տեսակ վարձատրութիւնից: Պահանջիր ինձանից, ինչ որ կամենում ես: Եթէ քո պահանջածը լինի միայն իմ իշխամութեան ներքոյ, երդվում եմ քեզ իմ սրով, որ դու անպատճառ կը ստանաս:

Այդ խօսքերի միջոցին ջումշուդը բռնեց Սալիհայի ձեռքից, երկուան էլ ծունկ իջան մելիքի առջեւ:

— Մենք ինդրում ենք ձեր ներումը, հօրեղբայր, դա մեզ համար աւելի թանկագին է, քան ամեն տեսակ պարզեւներ:

— Ներում... ձեր երկուամիտ... այդ ինչ է նշանակում... ես չեմ հասկանում...

— Այդ երիտասարդը, հօրեղբայր, այդ երիտասարդը...

— Ասա՛, շուտով, մի՛ տանջիր ինձ:

— Այդ երիտասարդը... իմ կինն է:

— Քո կի՞նն է, եւ նա...

— Մահմեդականուհի է . . .

— Ի՞նչպէս, դու ամուսնացա՞ր մահմեդական աղջկայ հետ, եւ հրաժարուեցա՞ր մեր կրօնի սուրբ ծէսերից . . . Տէր Աստուած, այդ ի՞նչպէս կարելի է:

Սալիհան զուարթ կերպով մէջ մտաւ.

— Ես արդէն համարեա թէ քրիստոնեայ եմ. իմ ամուսինը պատմել է ինձ բոլորը, ինչ որ վերաբերվում է ձեր կրօնին: Ես սիրում եմ քրիստոնեաներին եւ պատրաստ եմ քրիստոնեայ լինել: Ես կը ցանկանայի եւ մկրտութիւն ընդունել. դուք այնքան բարի էք եւ ներուղամիտ, որ կ'օգնէք ինձ կատարելու իմ բաղձանքը:

Սալիհայի խոստովանութեան մէջ այնքան անկեղծութիւն եւ բարեհոգութիւն կար, որ Վարանդայի իշխանը բոլորովին հիացած մնաց նրա խօսքերից: Նա վեր բարձրացրեց Ձումշուդին ու նրա կնոջը, գրկեց երկուսին, ասելով.

— Բախտաւոր եղիք, իմ զաւակներ, եւ միշտ բախտաւոր, իսկ ինձ մնում է այսուհետեւ ուրախանալ, ձեր երջանկութիւնը տեսնելով:

Ո՞րպիսի հրձուանկով Ձումշուդը եւ Սալիհան լսեցին այդ խօսքերը, որոնց մէջ բովանդակվում էր նրանց ապագայ բարեբախտութիւնը եւ յոյսը աւելի լաւ ապագայի:

Միւս օրը հրաւիրուեցաւ մի քահանայ, որը կատարեց Սալիհայի մկրտութեան սուրբ խորհուրդը. իսկ երրորդ օրը նա ամուսնացաւ Ձումշուդի հետ օրինաւոր պսակով, քրիստոնէական սուրբ կրօնի ծէսերի համեմատ:

Սալիհայի ամուսնութեան միւս օրը Փանահ-խանը, իր քաջասիրտ ջուանշերցիների հետ, յայտնուեցաւ Զանախչ ամրոցի պարիսպների մօտ: Վարանդայի մելքը ու բախտութեամբ շտապեց դիմաւորելու նրան: Բարեկամական

խոստունքները երկու կողմից եւս թափվում էին գետի նման: Փանահ-խանը խորամանկ կերպով հրապուրում էր մելքի խելքը, յայտնելով այն միաքը, թէ իր ապագայ բարձրանալու ակնկալութիւնը պէտք է հիմնուած լինի իր եւ նրա հետ կապուելիք դաշնակցութեան վրայ: Մելքը, անհրաժեշտութիւնից ստիպուած, փաղաքշում էր ջուանշերցիների զլսաւորին, որովհետեւ առանց նրա աջակցութեանը չէր կարող խամայի բոլոր մելքների միացեալ ուժերին գէմ դնել:

Խանի գալուց յետոյ Զանախչին դարձաւ խնձոյքների մի մեծ դահլիճ. բոլոր գէմքերի վրայ կարելի էր տեսնել ուրախութիւն եւ բաւականութիւն: Բայց այդ զուարձութիւնների միջոցում Փանահ-խանը չէր մոռանում իր ներքին խորհուրդները: Նա միան մի յարմար առիթ էր որոնում խօսակցելու մելքի հետ, եւ այդ առիթը շուտով տեղի ունեցաւ: Վարանդայի մելքը տեղեկութիւն ստացաւ, որ Թալիշի մելքը, վշտանալով եւ զայրանալով իր կրած կորուստների պատճառով, բանակցութիւններ սկսեց խամայի միւս մելքների հետ եւ արդէն կապեց նրանց հետ դաշնակցութիւն հակառակ Վարանդայի իշխանի: Նա իմացաւ, որ պատերազմի պատրաստութիւնները կատարվում են խիստ եռանգով եւ շուտով պէտք էր սպասել թշնամու մի նոր եւ աւելի զօրաւոր յարձակմանը: Այդ բոլորը ի նկատի առնելով, Վարանդայի մելքը անհրաժեշտ համարեց խորհրդակցել Փանահ-խանի հետ, մտածել այն նախապատրաստութիւնների մասին, որպիսիքը պէտք էր ձեռք առնել թշնամու գէմ պաշտպանուելու համար: Իսկ Փանահ-խանը մտածում էր օգուտ քաղել այդ հանգամանքներից եւ իրագործել իր վաղեմի բաղձանքները: Նա ասաց.

— Մելիք, թշնամիները սաստիկ զօրաւոր են, եւ որպէս երեւում է, դիտաւորութիւն ունեն գործելու բոլորովին վճռական կերպով։ Հարկաւոր է սկզբից ապահովացնել իրան եւ պատրաստ լինել նրանց յարձակումների դէմ։ Երբ դուք ապահովուած կը լինէք, այն ժամանակ ինքներդ կարող էք դուրս գալ կոռուի դաշտը, առանց սպասելու, որ նրանք ձեզ մօտ շնորհ բերէին։ Ձեր Զանախչի բերդը պաշտպանուելու համար խիստ անյօւսալի դիրք ունի։ Պէտք է որոնել մի աւելի ամուր դիրք, եւ ես մի այսպիսի տեղ ի նկատի ունեմ, որի վրայ բերդ հիմնելով, կը լինենք այնուհետեւ բոլորովին ապահովուած։ Բացի դրանից, մելիք, ես դիտաւորութիւն ունեմ ձեզանից բաւականութիւն պահանջել այն սաստիկ վերաւորանքի համար, որ հասցրել է ինձ ձեր եղբօրորդին։

— Ի՞նչպէս, նա համարձակուեցաւ վերաւորել ձեզ։

— Խիստ ծանր կերպով, ասաց Փանահ-խանը ծիծաղելով։ — Նա փախցրեց իմ կնոջը։

— Ձեր կնոջը։ Բայց . . .

— Նրա այժմեան կինը իմ կինն էր . . .

— Այդ ես չեմ հասկանում . . .

— Այդ դժուարին չէ, պատասխանեց խանը եւ սկսեց մանրամասնաբար պատմել բոլոր անցքը։

Յետոյ աւելացրեց։

— Դուք, կարծեմ, կը համաձայնուէք ինձ հետ, մելիք, որ ձեր եղբօրորդին մեղանչել է հիւրասիրութեան սրբութեան դէմ։ Նա եկաւ ինձ մօտ իբրեւ դեսպան ձեր կողմից, բայց յափշտակեց իմ հարեմից իմ կնոջը, գործ դնելով իր ձեռնարկութեան համար նենդաւոր աստղա-դէտի խորամանկրների մէջ, կարօտութիւն ունէր նրա օգնութեանը։ Նա յայտնեց իր կատարեալ համաձայնութիւնը, վճռեցին միւս օրը գնալ այն տեղը տեսնելու, որը նշանակուած էր բերդի կառուցանելու համար։

Մելիքը մնաց շուարած։  
Փանահ-խանը, նկատելով իր խօսքերի յաջող ազդեցութիւնը, շարունակեց,

— Մի բարկացէք, մելիք թող մոռացութեան տանք անցեալ, եւ որպէս Ճշմարիտ բարեկամներ, աշխատենք որոնել հնարներ, որոնցմով կարելի լինէք համաձայնացնել մեր փոխադարձ շահերը այն վարձատրութեան հետ, որը դուք ինձ պարտաւոր էք։ Այն տեղը, որի վրայ ես առաջարկեցի բերդ հիմնել, պատկանում է ձեզ<sup>1</sup>։ Տուեցէք ինձ այդ տեղը։ Ես նրա վրայ կը կառուցանեմ մի բերդ, եւ այդ բերդը կը ծառայէ իբրեւ պաշտպանողական ապահովով ամրութիւն մեր երկուսի համար։ Որովհետեւ ես յոյս ունեմ, գոնէ իմ կողմից, որ մեր բարեկամութիւնը մշտապէս կը շարունակուի, եւ վարանդացիները ջուանշեցիների հետ կը կազմեն մի ժողովուրդ։

Մելիքը, չհասկանալով Փանահ-խանի խորամանկ նպատակները, որ թագնուած էին այդ փաղաքշական խօսքերի մէջ, ուրախութեամբ ընդունեց նրա առաջարկութիւնը։ Նա ուրիշ ճար չունէր. գտնուելով այնպիսի կրիտիկային հանգամանկրների մէջ, կարօտութիւն ունէր նրա օգնութեանը։ Նա յայտնեց իր կատարեալ համաձայնութիւնը, վճռեցին միւս օրը գնալ այն տեղը տեսնելու, որը նշանակուած էր բերդի կառուցանելու համար։

#### IV.

Սալիհան կրկին յափշտակվում է։

Մթին գիշերը տարածել էր խաւարը Ղարաբաղի վրայ։ Ոչ մի աստղ չէր փայլում երկնքից։ օդը թանձր

<sup>1</sup> Շուշի բերդը շինուած է մի այնպիսի բարձրաւանդակի վրայ, որ այնտեղ սեպտեմբեր ամից սկսվում է ձմեռը։ Ծան. հեղ.։

էր եւ ծանր. ամեն ինչ նախագուշակում էր փոթորկի մերձաւորութիւնը, որը ամառնային եղանակների ժամանակ ոչ սակաւ անդամ պատահում է Ղարաբաղի հովիտներում:

Սալիշան միայնակ էր իր սենեակում, որը գտնվում էր Զանախչի ամրոցի հիւսիսային աշտարակի ամենաբարձր յարկում: Այդ միջոցին ջումշուղը գտնվում էր իր հօրեղքոր մօտ, այն խորհրդի մէջ, որին մանակցում էր եւ Փանահիսանը: Նրա մանակահասակ ամուսինը անհամբերութեամբ սպասում էր երիտասարդին: Յանկարծ լսեց նա խիստ պարզ կերպով այդ խօսքերը. «Ճած թողեցէք մի պարան ձեր աշտարակի լուսամուտից, ձեզ կը տան տեղեկութիւններ, որոնք ձեզ համար խիստ կարեւոր են»: Նա վախեցաւ: Մի եւ նոյն ձայնը երկրորդ եւ երկրորդ անդամ արտասանեց մի եւ նոյն խօսքերը: Յետոյ աւելացրեց. «Ոչինչեց մի վախեցէք եւ շտապեցէք: Եթէ դուք կատարելու չլինէք ձեր բարեկամի պահանջածը, յետոյ ինքներդ պիտի զղջաք... բայց այդ շատ ուշ կը լինի... գործը վերաբերում է ջումշուղի կրանքի ապահովութեանը»...

— Ջումշուդ... Աստուած իմ, բացականչեց Սալիշան, — այս րոպէիս, այս րոպէիս, եւ վերառնելով առաջին պատահած պարանը, ցած թողեց լուսամուտից: Նրբ որ իմացաւ, որ նրա ծայրին արդէն կապուեցաւ մի ինչ որ ծանր բան, վեր քաշեց պարանը դէպի ինքը: Նա տեսաւ մի թուղթ, որ կապած էր քարի հետ, սկսեց շտապով կարդալ հետեւեալը. «Մի մարդ, որ ջերմ կարեկցութիւն ունի ձեր բախտաւորութեան համար, յայտնում է, որ մի նշանաւոր գժբախտութիւն սպառնում է ջումշուղին, որից նա ոչինչով չէ կարող ազատուել, եթէ

դուք շտապէք փրկելու նրան: Հենց այս րոպէիս պէտք է գաղանի կերպով գաք այն ծառի մօտ, որը գտնվում է ճանապարհի մօտ, ձախ կողմում: Այնտեղ դուք կը ստանաք մի թիլսման,<sup>1</sup> որը կարող է վտանգից պահպանել ձեր ամուսնին: Բայց այդ մասին պէտք է գաղտնիք պահէլ: Շտապեցէք, եթէ ձեզ համար թանկ է ջումշուղի կեանքը: Չեզ շատ չեն ուշացնի. ոչ ոքի ցոյց մի տուեք այդ թուղթը. ոչնչացրէք նրան եւ գաղտնիքը ծածուկ պահէցէք, որովհետեւ դրանից է կախուած բոլորը»:

Սալիշան չափազանց երկիւղի մէջ ընկաւ:

— Աստուած իմ, դարձեալ բացականչեց նա, — իմ սիրելի ջումշուղը վտանգի մէջ է, կը վազեմ ազատելու նրան: Բայց ինչպէս: Առանց մելիքի հրամանին պահապանը ինձ թոյլ չի տայ գուրս գալ ամրոցից: Իսկ ինձանից պահանջում են գաղտնիք պահէլ... Շուտով հագուստս կը փոխեմ, կ'ասեմ, որ ես ուղարկուած եմ մելիքի կողմից: Երբ որ գործը վերաբերում է իմ ջումշուղի ազատութեանը, այլ եւս ոչինչ չէ կարող ինձ վախեցնել...

Մեր հերոսուհին շտապով փոխեց հագուստը, վաղեց դէպի շարժական կամուրջը:

— Թողել տուր, շուտով, դոչեց նա պահապանին, — մելիքը ուղարկեց ինձ գետից ջուր բերելու:

Պահապանը ցած թողեց շարժական կամուրջը: Նա նետի նման սլացաւ դէպի նշանակած ծառը: Բայց հենց

<sup>1</sup> Թիլսման կամ մեր ժողովրդական բարբառով թւլլում կոչվում են զանազան տեսակ կախարդական բժժանքները, որ սնահաւատները կուտ են իրանց վրայ այլ եւ այլ դիւթական նպատակներով: Ծան, թարգ..

որ հասաւ այնտեղ, իսկոյն մի քանի հոգի շրջապատեցին նրան, բերանը կապեցին թաշկինակով, թեւքերը կաշկանդեցին պարանով, եւ յափշտակելով նրան, արագութեամբ անհետացան:

Խեղջ Սալիհա, եւ այսպէս գու զոհ եղար քո ծերմեռանդութեանը, որ ունէիր դէպի քումշուղը, զ՞հ, հրաբորոք սիրոյ եւ նենդաւոր դաւաճանութեան: Ո՞ր երկիրը կը տանեն քեզ քո յափշտակողները, ի՞նչ են կամենում նրանք, կամ ովքեր են նրանք, — այդ բոլորը գուցէ մի ժամանակ կիմանանք մենք, բայց այժմ դառնանք դէպի քումշուղը:

Վերջացնելով բոլոր կարգադրութիւնները, որ վերաբերում էին մոադրուած պատերազմական գործողութիւնները սկսելուն, մելիքը, Փանահ-խանը եւ քումշուղը բաժանուեցան միմեանցից: Այդ վերջինը վազեց ամրոցի այն կողմը, որտեղ յոյս ունէր գտնել իր նազելի կենակցին: Որպիսի սարափ տիրեց նրա սրտին, երբ մտնելով իր ընակարանը, այնտեղ չգտաւ իր կնոջը: Տղամարդի հագուստը, որը ինքը հագնում էր ձանապարհորդութեան ժամանակ, նոյնպէս անհետացած էր: Արդէն հասկացաւ... ուրեմն նա գնաց... թողեց նրան... նրան, որին այնքան սիրում էր... Այդ անկարելի բան է... այստեղ մի գաղտնիք պէտք է լինի... զրա մեջ ծածկուած է մի նշանաւոր, կորստաբեր գաղտնիք... Այդպէս էր մտածում քումշուղը եւ խելագարի նման վազում էր դէպի շարժական կամուրջը:

Պահապանից ստացած տեղեկութիւններից ստուգեց նա իրան հասած գժբախտութիւնը, ստուգեց, որ Սալիհան, առանց ոչ ոքից հարկադրուած լինելու, ինքնակամ դուրս է եկել ամրոցից: Նրա սիրտը կտրատվում էր. նա

կամենում էր վազել նրա ետեւից, իմանալ նրա մի այդպիսի անսովոր վարմունքի պատճառը: Նա աւելի բարուք էր համարում մեռնել, քան թէ մնալ անդիտակցութեան մէջ: Նա վազեց իր հօրեղքոր մօտ: Մելիքը տեսնելով նրան, անհանգիստ կերպով ոտքի ելաւ: Երիտասարդի մռայլուած, այլայլուած դէմքը, վրդովուած աչքերը ցոյց էին տալիս, որ մի որ եւ է սարսափելի դէպք պէտք է պատահած լինի:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել... գոչեց մելիքը ամբողջ մարմնով դողալով. — ի սէր Աստուծոյ, ասա, ի՞նչ է պատահել քեզ:

— Հօրեղքայր, շտապեցէք... գնանք... գնանք...

— Ո՞ւր, ի՞նչու համար...

— Ես կորած եմ, ես կը մեռնեմ... ախ, մի տանջէք ինձ, գնանք... կարելի է դեռ ժամանակ կ'ունենանք նրա ետեւից համելու... Այսպէս խօսելով, նա քարշ էր տալիս կիսահագնուած մելիքին:

— Յուշի եկ, քումշուղ, ի՞նչ ես կամենում գու, ուր գնանք, ումը որոնենք, ի՞նչը քեզ այդ դրութեան մէջ գրեց:

— իմ Սալիհան... իմ Սալիհան տղամարդի հագուստով հեռացաւ ամրոցից. նա գնաց, Աստուծ գիտէ, թէ որտեղ եւ ինչու համար: Նա ինձ թողեց: Ի՞նչով ես առիթ տուի նրա մի այդպիսի վարմունքին, ես, որ այնքան սիրում էի նրան, որի համար մոռացայ ամեն ինչ այս աշխարհում, որի համար զոհեցի ամեն ինչ: Այդ ի՞նչ է նշանակում: Նա փախաւ եւ ինքնայօժար կերպով... իր կամքով: Կարելի էր մի այդպիսի բան սպասել: Ախ, հօրեղքայր, խղճացէք ձեր անբախտ, լքած, խարուած եղքօրորդու վրայ: Կեանքը անտանելի կը լինի ինձ այ-

սուհետեւ. ես չեմ կամենում այլ եւս ապրել, եւ պէտք չէ ապրել... Ամեն ինչ հակառակում է ինձ... եւ ես կը գնամ բնութեան հակառակ, որը դատապարտել է ինձ մշտական՝ տանջանքի...

Արտասանելով այդ խօսքերը, նա խլեց խէնջարը եւ շտապեց այդ մահացու գէնքը դարձնել դէպի ինքը, բայց մելքը բռնեց նրա ձեռքը, որ պատրաստ էր անձնասպանութիւն գործելու:

— Այդ ի՞նչ ես անում, անխելք, աղաղակեց մելքը, — եթէ Սալիհան թողեց քեզ, ուրեմն նա այլ եւս չարժէ դրան, որ դու նրա համար անձնատուր լինես այս աստիճան յուսահատութեան: Իսկ եթէ որ եւ իցէ մէկը յափշտակել է նրան, այժմ շատ ուշ է որոնելու նրանց: Գիտեն արդեօք, թէ դէպի որ կողմը փախել են նրանք: Կասկածում ես արդեօք որ եւ իցէ մէկին այդ յափշտակութեան մէջ: Դու չես պատասխանում: Միթէ քո լութիւնը ցոյց չէ տալիս, որ քեզ յայտնի չեն իմ հարցերը: Հիմայ դէպի ուր գնանք մի այսպիսի մթին գիշերում: Կարելի է արդեօք չմտածել, որ մեր թշնամիները, գիշակեր գայլերի նման, չեն մռնչում մեր չորս կողմում, եւ թէ, մենք չենք դառնայ զոհ նրանց կատաղութեանը ու մեր անխոհեմութեանը: Խելքի եկ, ջումշուդ, արիացիր եւ համբերող եղիր: Մենք յետոյ կ'աշխատենք ամեն միջոցներ ձեռք առնել քո Սալիհայի ազատութեան համար, եթէ նա յափշտակուած է միայն...

— Ա՛ն, եթէ նա յափշտակուած լինէր միայն, բացականչեց ջումշուդը, — այն ժամանակ ես կը նետուեկի նրա ետեւից մինչեւ աշխարհի վերջին ծայրը, մինչեւ մեծ ծովի յատակը: Բայց աւաղ, նա յափշտակուած չէ,

նա ինքնայօժալ կերպով թողեց ինձ: Ի՞նչպէս անբախտ եմ ես...: Բայց չլինի թէ Փանահ-խանը յանդկնեցաւ հրապուրել նրան: Ոչ, ոչ, այդ անկարելի է, այդ աներեւակայելի է... Տէր Աստուած, նա իր յօժարութեամբ թողեց ինձ. նա արհամարհեց իմ սէրը...: Հօրեղբայլ, խղճացէք անբախտ, խարուած ջումշուդի վրայ: Ես ամաչում եմ նայելու ձեր երեսին, ես, որ Սալիհայի սիրոյ համար մինչեւ անգամ մեղանչեցի մեր սուրբ կրօնի օրէնքների դէմ, իսկ նա այսպէս անփիղջ կերպով խարեց ինձ: Բայց ես կը գտնեմ նրան, եւ այդ խէնջարը կը ցցեմ այն անհաւատարիմ պրառում եւ...: Բայց ես, որ այնքան սիրում էի նրան, միթէ կարող եմ... ոչ, ոչ...: Տէր Աստուած, Տէր Աստուած, որքան անբախտ եմ ես...

Ի զուր մելքը գործ էր գնում ամեն միջոցներ ջումշուդին հանգստացնելու համար, ի զուր վատնում էր իր բոլոր պերճախօսութիւնը նրան համոզելու համար, թէ նա ի զուր տանջում է իրան մի այնպիսի կնոջ համար, որը ինքը իրան անարժան դարձեց նրա ամուսին լինելու համար: Յուսահատուած երիտասարդը փետում էր իր գլխի մազերը եւ ցոյց էր տալիս խելագարութեան բոլոր նշանները: Ամրոցի մէջ բոլոր յուզուած էին այդ անցքի պատճառով: Մելքը, որպէս զի փոքր ինչ հանգստացնէ իր եղբօրորդուն, դիտամի ուղարկեց զանազան կողմեր իր հետքերը, բայց նրանց բոլոր հետախուզութիւնները ապարդիւն անցան: Գիշերային խաւարը անթափանցիկ քողով ծածկել էր այդ անցքը: Ամբողջ գիշերը ոչ մի քողով ծածկել էր այդ անցքը: Ամբողջ գիշերը մարդ ամրոցի մէջ չպառկեց քնելու, բոլոր վրդովուած էին, բոլոր ափսոսում էին, որ ջումշուդին վիճակուեցաւ մի այնպիսի գժբախտութիւն: Մինչեւ անգամ ինքը

Փանահ-խանը մոռացաւ այն վերաւորանքը, որ նրան պատճառել էր Սալիհայի ամօւսինը։ Նա եւ միւսների նման ցաւակցում էր երիտասարդի վիճակին եւ տարութերվում էր զանազան կարծիքների մէջ, թէ ի՞նչ պատճառներ պէտք է գրդած լինէին Սալիհային փախչել մի այնպիսի ամօւսնից, որին այնքան պաշտում էր նա, որին միշտ ցոյց էր տուած իր անկեղծ սիրոյ հաւաստիքը։ Այսպէս տիրութեամբ եւ խոռվութեան մէջ անցաւ Զանախչի բերդում այն գիշերը, որի առաւօար պէտք է սկիզբը դրուէր անմատչելի Շուշիի հիմնարկութեանը։

## V.

Շուշի բերդի հիմնարկութիւնը — տեղեկութիւններ  
Սալիհայի մասին։

Արեգակը փայլում էր իր կատարեալ լուսաւորութեան մէջ։ Բնութիւնը գիշերային փոթորիկից յետոյ, կարծես թէ, կրկին զարթնեց նոր փառքով եւ պայծառութեամբ։ Լեռներից հոսում էին հազարաւոր առուակներ եւ իրանց բարերար հեղանիւթով ոռոգում էին կանաչազարդ հովիտների բուսականութիւնը։ Անտառապատ լեռները երեւում էին աւելի կենդանացած, թարմ զեփիւուր տարածում էր հովիտների մէջ խիստ ախորժելի զովութիւն։

Այդ միջոցին Փանահ-խանը, Վարանդայի մելիքը եւ ջումշուղը դուրս եկան Զանախչ ամրոցից եւ գնում էին դէպի հիւսիսային կողմը։ Մի ահագին զինուած խոռմը առաջնորդում էր նրանց։ Անցնելով լեռնային շղթաները, նրանք սկսեցին վեր ելանել աւելի եւ աւելի բարձր։ Նրանց առջեւ կանգնած էին հսկայական ժայռեր, ծածկուած անտառի եւ մամուռի մէջ։ Եօթն վերստաչափ

բարձրանալով լեռան վրայ, վերջապէս հասան նրանք մի ընդարձակ տափարակի, որը գանվում էր սարի բարձրաւանդակի վրայ։ Այդ տափարակից կարելի էր նշանարել ամենաշեռաւոր տեսարանները, կարելի էր տեսնել բազմաթիւ գիւղեր, որ սփռուած էին հովիտների վրայ, կարելի էր հիանալ խաղողաբեր այգիների շքեղութեամբ եւ գեղեցիկ լեռների պատկերներով, որ ծածկուած էին խիտ անտառներով։ Իսկ այդ բոլորը այնքան անորոշ կերպով էին երեւում, որ կարելի էր մտածել, որ նրանք շատ փոքրիկ առարկաներ են։ Այդ տափարակը երեք կողմից բոլորովին անմատչելի էր, որովհետեւ շըջապատած էր համարեա պարապի նման սեպացած ժայռերով։ Միայն հիւսիսային կողմից կարելի էր բարձրանալ դէպի յիշեալ տափարակը։

Ահա, ասաց Փանահ-խանը, բոլոր շըջակայքը ուշադրութեամբ հետազոտելուց յետոյ, — ահա այդ տափարակը ամենայարմար տեղ է բերդ շինելու համար։ Համաձայն էք, մելիք, տալ ինձ այդ տեղը։

— Բայց, ասաց մելիքը, — նա որպան ընդարձակ է...

— Երեք կողմերը ամրայնելու պէտք չունեն, իսկ չորրորդ կողմից մենք կը կառուցանենք պարիսպներ եւ աշաբակներ, որոնց բարձրութիւնից կարելի կը լինի սարսափեցնել բոլոր ստահակներին, որոնք կը յանդգնեն մօտենալ մեզ։

— Հաւ, ես համաձայն եմ։ Եգուցուայ օրից մենք կը սկսենք բերդի հիմնարկութիւնը։

— Ի հարկէ, եւ մինչեւ աշնան վերջը կարելի կը լինի տեղափոխուել այդ նոր քաղաքում։

— Բայց ինչ անուն տանք մենք այդ քաղաքին։

— Այսուղ տեսարանները այնքան գեղեցիկ են եւ բոլոր շըջակայքը այնքան պարզ տեսնվում են, կարծես

թէ, թափանցիկ ապակու միջեց երեւնալիս լինեն, —  
աւելի յարմար կը լինէր կոչել նոր բերդը Շուշա<sup>1:</sup>:

— Շուշա, շատ գեղեցիկ անուն է, կրկնեց մելիքը,  
նորհաւորում եմ ձեզ, որպէս Շուշայի տիրոջը:

Բոլորը յած իջան ձիաներից, եւ իւրաքանչիւրը վեր  
առնելով մի-մի քար, կիտեցին միմեանց վրայ եւ կազ-  
մեցին փոքրիկ բլակի: Փանահ-խանը կանգնելով նրա վրայ,  
հանդիսաւոր կերպով արտասանեց.

— Եւ թող առաքէ Ալսահը իր օրհնութիւնը նորա-  
կառոյց բերդի վրայ, եւ թող ծաղկի նա, որպէս Գիւ-  
լիստանի շքեղ վարդերը<sup>2</sup> եւ որպէս մարգարեի տան  
դրախտի ծառը: Եւ թող լինի նա մի ժամանակ ամբողջ  
Հարաբաղի մայրաքաղաքը եւ թող փառաւորուի նա հրա-  
շալի անցքերով: Եւ թող խոնարհուեն նորակառոյց բերդի  
զօրութեան առջեւ բոլոր շրջակայ իշխանութիւնները, եւ  
թշնամիները թող չքանան, որպէս մոխիր...

<sup>1</sup> Շուշա, թուրքերէն նշանակում է ապակի: Ծան. հեղ.:

Հեղինակը կարծում է, որ Շուշի բերդը իր անունը առել է շուշա  
բառից, դա սխալ ենթադրութիւն է: Պատմութիւնից յայսնի է, երբ  
Մելիք-Ծահնազար Բ-ը Փանահ-խանի հետ կառուցին Շուշի բերդը, այս-  
տեղ տեղափոխեցին այդ բերդին մերձակայ մի հայրանակ գիւղի բնակիշ-  
ներին: Այդ գիւղը մինչեւ այսօր էլ գոյութիւն ունի եւ կոչվում է Շոշի  
կամ Շոշ գիւղ: Եւ որովհետեւ բերդի սկզբնական բնակիշները եղան Շոշի  
գիւղացիները, այդ պատճառով էլ բերդը նրանց նախկին բնակութեան  
տեղի անունով կոչուեցաւ Շոշի կամ Շուշի: Տես մեր “Խամսայի Մելի-  
քութիւնները” գրքի XI գլ. 57 եր.: Ծան. թարդ.:

<sup>2</sup> Գիւլիս ատան պարսկերէն նշանակում է վարդանոց կամ վար-  
դարան. այսպէս կոչվում է Ղարաբաղի հինգ գաւառներից մէկը իր գեղեցիկ  
վարդերի պատճառով: Գիւլիստանը գտնվում է գանձակ գաւառի սահ-  
մանի մօտ, նրա այն մասը, որ մօտենում է կուր գետի ափերին, այն առ-  
տիճան տօթային է, որ նուռը, թուրզը աճում են եւ հասունանում են  
բոլորովին վայրենի դրութեան մէջ. լեռները, ձորերը ծածկուած են այդ  
պտուղների թփերով: Զարմանալի չէ, երբ կարդում ենք Աղուանից պատ-  
մութեան մէջ, որ այդ կողմերում մի ժամանակ մշակվում էր մինչեւ ան-  
գամ ձիթենի, որի համար հարկաւոր է բաւական տաք կլիմայ: Ծան. թարդ.:

Այդ խօսքերը վերջացնելուց յետոյ, նա իր աջը նախ  
տարաւ դէպի ձակատը, յետոյ նոյն ձեռքով շօշափեց  
գետինը, վեր առեց մի բուռն հող եւ ցրուեց կիտած  
քարերի վրայ: Նրա օրինակին հետեւեցին բոլորը:

Թէ ձանապարհորդութեան ամբողջ ընթացքում եւ  
թէ բերդի հիմնարկութեան ժամանակ, ջումշուդը պահ-  
պանում էր խորին լուռութիւն: Բոլորովին զբաղուած իր  
սրտի ցաւերով, համարեա մեքենաբար հետեւում էր նա  
Փանահ-խանին եւ իր հօրեղօրը, — մեքենաբար հե-  
տեւում էր նրանց օրինակին, եւ բերդի հիմնարկութեան  
գործողութիւնների ժամանակ, իսկ նրա մտածութիւնները  
սլացել էին խիստ հեռու, նրանք թափառում էին զա-  
նազան ենթադրութիւնների մռայլի եւ յուսահատութեան  
քառուի մէջ...

Երբ որ մելիքը իր խումբի հետ սկսեցին ցած իջնել  
սարից եւ ուղեւորուեցան դէպի Զանախչի, այդ միջոցին  
ջումշուդը, խորասուզուած դառն մտածութիւնների մէջ,  
իր ձին քշում էր այնքան դանդաղ կերպով, որ բաւա-  
կան տարածութեամբ նրանցից յետ մնաց: Յանկարծ նրա  
ձին խրտնելով, նետուեցաւ դէպի մի կողմ: Երիտասարդը  
վեր բարձրացրեց աչքերը, տեսաւ աստղագէտին, որ մօ-  
տենում էր իրան:

— Ողջոյն, մելիք ջումշուդ, ասաց նա. — Վաղուց  
է, շատ վաղուց է, որ ես չեմ տեսնուել ձեզ հետ,  
բայց միշտ ձեր վրայ էի մտածում:

— Ի՞նչպէս, այդ գու ես, ես քեզ բոլորովին կորած  
էի համալում: Ի՞նչու համար մինչեւ այժմ գու չեկար  
ստանալու այն պարգեւը, որ ես խոստացել էի քո կատա-  
րած ծառայութիւնների համար: Բայց, ախ, անօգնւտ,  
բոլորովին անօգնւտ ծառայութիւն...

— Մի ուրացէք իմ ծառայութիւնը, մելիք, ես  
բոլոր գիտեմ։ Զանազան կարեւոր պատճառներ ստիպում  
են ինձ դեռ եւս ծածկուած մնալ։ Ես չեմ կարող գնալ  
Զանախի, չեմ կարող յայտնուել ձեր հօրեղօր մօտ։  
Բայց ես գիտեմ, թէ որտեղ է ձեր ամուսինը...

— Դու գիտե՞ն, ով բարերար ոգի կամ մարդ, —  
չգիտեմ ինչպէս կոչեմ քեզ, — ասա, ասա, ո՞րտեղ  
կարող եմ գտնել նրան, ի՞նչ պատճառով նա թողեց ինձ։

— Նա ստիպուած էր թողնել ձեզ։ Նրան խիստ  
խորամանկ կերպով խաբեցին։ Մտածելով ազատել ձեզ  
գժբախտութիւնից, նա ինքը զոհ դարձաւ ձեր անգութ  
թշնամիների նենգութեանը։

— Ուրեմն նրան յափշտակեցին, ուրեմն նա իր յօ-  
ժարութեամբ չէ թողել ինձ։ Երկնային Ստեղծող, գոհու-  
թիւն եմ մատուցանում քեզ։ Աստղագէտ, դու վերա-  
դարձրիր իմ կեանքը։ Հիմայ ասա, այժմ ո՞րտեղ է նա։

— Թալիչ մելիքի իշխանութեան ներքոյ։ Նրա որ-  
դին, ստահակ Յուսէինը, որը առաջնորդում էր Զանախ-  
ին պաշարող զօրքերին, որպէս ձեզ յայտնի է, յաղ-  
թուեցաւ ձեզանից եւ փոքր էր մնում, որ ինքը պիտի  
կեանքից զրկուէր ձեր քաջասիրտ ամուսնի ձեռքով։ Նա  
հեռացաւ լի կատաղութեամբ, երդուելով վրէժինդիր  
լինել ձեզանից։ Բայց Փանահ-խանի գալուստը, որը ու-  
նեցաւ ծանրակշու նշանակութիւն եւ զօրացրեց ձեր հօ-  
րեղօր կողմը, մի եւ նոյն ժամանակ արգելեց Յուսէինին  
կատարելու իր գիտաւորութիւնը, այն է՝ յարձակուել  
ձեզ վրայ զինուած ուժերով։ Այդ ժամանակ նա դիմեց  
խորամանկութիւնների։ Մի քանի օր ծածուկ կերպով  
թափառելով Զանախի մերձակայքում, նրան յաջողուե-  
ցաւ մուրացկանի կերպարանքով մտնել ձեր ամրոցը։

Այստեղ նա տեղեկացաւ բոլորը, ինչ որ նրան պէտք էր  
իմացաւ ստոյգ պատճառը, որով դուք հրաժարուեցաք  
ամուսնանալ նրա քրոջ հետ, իմացաւ, որ իրան հարուա-  
ծող պատանին էր ձեր Սալիհան։ Նրա սիրոը բորբոքուած  
էր բարկութեամբ։ Նա վճռել էր, ինչ միջոցով եւ լի-  
նէր, անպատճառ յափշտակել ձեր ամուսնին<sup>1</sup>։ Երկար  
մտածում էր նա զանազան հնարների վրայ, վերջապէս  
գտաւ մէկը, որ յաջողեցրեց նրա գիտաւորութիւնը։  
Այստեղ աստղագէտը պատմեց այն անցքը, որ մեզ ար-  
դէն յայտնի է նախընթաց գլխից։

— Ես, շարունակեց նա, — չէի կարող արգելել  
նրան կամ խափանել նրա գիտաւորութեան կատարումը։  
Բայց աննկատելի կերպով հետեւում էի նրան, եւ իմա-  
ցայ, որ նրանք կամենում են ձեզ մշտապէս զրկել Սա-  
լիհայից, պահելով ձեր կնոջը որպէս գերի Զէյվայ բեր-  
գում, եւ չի պիտի ազատեն նրան, մինչեւ դուք չամուս-  
նանաք ձեր առաջին նշանածի հետ։ Այդ պահանջում է  
նրանց վերաւորուած հպարտութիւնը։ Ես իմացայ, որ  
Փանահ-խանը գիտաւորութիւն ունի շուտով կառուցա-  
նելու մի բերդ այդ լեռների վրայ, եւ ձեր հօրեղօր ու  
ձեզ հետ պիտի գնայ հետազօտելու բերդի տեղը։ Այդ  
առիթից օգուտ քաղելով, սպասում էի միջոց գտնել  
ձեզ հետ տեսնուելու։ Եթէ մենք այժմ չհանդիպէինք

<sup>1</sup> Տղամարդերի համար իր սսոխի կնոջը յափշտակելը կամ նրան  
բռնաբարելը համարվում է այն վրէժինդրութիւններից մէկը, որ մինչեւ  
այսօր բաւական սովորական է հայերի մէջ։ Վրէժինդիրը եթէ հնար չէ  
գտնում այդ անելու։ գողանում է իր հակառակորդի կնոջ վարտիքը եւ իր  
մօտ է պահում։ դա եւս համարվում է մեծ անպատճուութիւն։ Այն  
երկրներում, ուր օրէնքը պատճում է այդ տեսակ չարագործութիւնները,  
ի հարկէ, յիշեալ սովորաթիւնը մասամբ զապուած է, իսկ Պարսկաստա-  
նում եւ Թիւրքիայում խիստ յաճախ է պատահում։ Ծան. թարգ.։

միմեանց, ես ստիպուած կը լինէի գնալ Չանախչի, այնտեղ ձեզ որոնելու համար, չնայելով այն վտանգին, որ սպառնում է ինձ...

— Հա, երբ որ այդպէս է, գոչեց ջումշուդը, — ես գուրս կը կորզեմ նրան իմ թշնամու ձեռքից: Ես կամ մոխիր կը դարձնեմ նրանց Զէյվան, կամ ինքս կը ոչնչանամ...

— Մելք, չափաւորեցէք ձեր բարկութիւնը, նա ոչ միայն օգտաւէտ լինել կարող չէ, այլ մինչեւ անգամ կարող է վնասակար լինել ձեր Սալիհայի համար: Առժամանակ պէտք է համբերել, յետոյ գործել որպէս հարկն է:

— Բայց միթէ ես այժմ չեմ կարող...

— Կարող էք, բայց աւելի լաւ կը լինի, որ գործը թողնէք ինձ, որ ես աշխատեմ գաղտնի կերպով եւ զգուշութեամբ...

— Ոչ, ոչ, պատասխանեց ջումշուդը, — միթէ ես կարող եմ թոյլ տալ չարագործներին, որ անպատուեն իմ Սալիհային, երբէք, երբէք: Իմ սուրը մեր մէջ դատաւոր կը լինի: Զէյվան շրջապատուած չէ անմատչելի ժայռերով, ինչպէս մեր նոր կառուցուող Շուշին: Եկ ինձ հետ, ես քեզ համար ներողութիւն կը խընդում հօրեղբօրիցս...

— Ոչ, մելք, չեմ կարող:

— Ի՞նչու:

— Կան պատճառներ, որ դուք յետոյ կ'իմանաք: Իսկ եթէ դուք բոլորովին վճռել եք գնալ Զէյվայ...

— Կը գնամ, անպատճառ կը գնամ...

— Ցանկանում եմ ձեզ յաջողութիւն, մնաք բարեաւ, մելք, ես կ'աշխատեմ միւսանգամ եւս ձեզ առիթ-

տալ համոզուելու, որ ես ձեր ամենահաւատարիմ սարուկն եմ...

Բաժանուելով աստղագէտից, ջումշուդը արագութեամբ քշեց իր ձին եւ համարեա Չանախչի մօտ հասաւ իր հօրեղբօրը, որը սաստիկ անհանգիստ էր նրա բացակայութեան պատճառով: Երբ որ պատմեց նրան իր հանդիպելը աստղագէտի հետ, մելքը ասաց.

— Այդ անիրաւը կարող է պիտանի լինել շատ դէպքերում: Դու հիմայ ինչ ես կամենում անել, ջումշուդ:

— Գնալ Զէյվայի վրայ, հիմքից կործանել նրան, մոխիր դարձնել գաւածանների բնակարանները, կամ ազատել իմ Սալիհային, կամ թողնել այնտեղ իմ դիակը:

— Գրկիր ինձ, իմ սիրելի ջումշուդ, ասաց մելքը.

— Ես տեսնում եմ քո մէջ հերոսական յատկութիւններ, դրա համար պարծենում եմ քեզանով: Ափսոս, որ ես Շուստէմ<sup>1</sup> անուն չգրեցի քեզ, պարսից այդ մեծ հերոսի անունը: Բայց քո անունն էլ փառաւոր անուն է: այդ անունը կրում էր Պարսկաստանի հռչակաւոր իշխողներից մէկը<sup>2</sup>: Ե՞րբ պէտք է դուրս գալ...

<sup>1</sup> Ռուստէմ, պարսից առասպելաբանական Հերքուլէսի անունն է: Ծան. հեղ.:

<sup>2</sup> Ռուստէմ կամ որպէս հայերը արտասանում են Ռուստօմ պարսից նշանաւոր բանաստեղծ Ֆրիդովսու հերոսի անունն է, որին նա երգեց իր Շահ-նամէ կոչուած անմահ գրքի մէջ: Խորենացին կոչում է նրան Ռուստօմ Սազմիկ, որ պէտք է հասկանալ սագաստանցի Ռուստօմ, որովհետեւ հերոսը այնտեղացի էր: Մեր ծերունի պատմաբանը ծաղրում է պարսկական առասպելը Ռուստօմի վերաբերութեամբ, որի համար երգում էին, թէ հարիւր քսան փիղի ուժ է ունեցել, եւ նրանից գերադասում է մեր հոկայ Տորբին: Ծան. հեղ.:

<sup>2</sup> Ջումշուդ էր չորրորդ թագաւորը պարսից Փիշդադիան կոչուած առասպելաբանական առհմից: Ծան. հեղ.:

— Հղուց, լուսանալուն պէս . . .

— Իմ բարեկամ ՓանահՀ-խան, դու կը տաս քում շուդին մի մասը քո քաջ ջուանշիրցիներից :

Զումշուդ կամ ըստ պարսկական արտասանութեան ջամշիդ, իրաւ է, Փիշդադիամներից չըրբորդ թագաւորն էր: Փիշդադիանների դարեշրջանը պարսից պատմութեան միթական ժամանակներն է ներկայացնում Նրանից յետոյ սկսում են տիրել Քէյ ե ան կոչուած տոհմի ներկայացուացիները, որոնցից յետոյ սկսում է պարսից Արշակունին երի թագաւորութիւնը:

Զամշիդի խակական անունը ջամ էր, բայց որովհետեւ նրա դէմքը լսյի ճառագայթների նման փայլում էր, այդ պատճառով կոչուեցաւ Զամշիդի դ: Նրան համարում են Թէյմուրասի եղայրը կամ եղբօրդին: Թէյմուրասը ժառանգ չժողնելու պատճառով, պարսիկները ընարեցին լուսաւոր Զամշիդին: Պարսից պատմագրների կարծիքով, նա թագաւորեց եօթն հարիւր տարի, եւ այդ եօթն հարիւր տարուայ ընթացքում Պարսկաստանում տիրում էր Խաղաղութիւն, արդարութիւն եւ իրաւոնք: Ժողվուրդը ապրում էր Երջանկութեան եւ գոհութեան մէջ: Զամշիդի մասին պատմում են անթիւ առասպեններ. իր թէ նա մի կախարդական թասունէր, որը ջոով լորած միշտ դրած ունէր իր առջեւ, եւ ջօի յստակութեան մէջ տեսնում էր իր ամբողջ պետութիւնը, — տեսնում էր, թէ մարդիկներից որը բարի էր գործում, որը չար, լաւերին վարձատրում էր իսկ վատերին խրատում էր:

Զամշիդի համար ասում են, իր հպատակներից երգում էր առել, որ ամեննեւին մեղք չգործեն: Քանի որ ժողովուրդը պահպանում էր այդ ուխտը, նա ապրում էր կատարեալ բախտաւորութեան մէջ: Իսկ երբ որ մարդիկ սկսեցին չար գործել, այն ժամանակ Խաղաղանը (Որմղղը, պարսիկների Աստուածը) բարկացաւ նրանց վրայ, նրանց միջից վեր առեց բարի եւ լուսաւոր Զամշիդին եւ նրա փոխարէն թագաւոր դրեց չար Զոհաքին որը սկսեց երկաթի գաւազանով կառավարել ժողովուրդը եւ տանչել նրան:

Ինչ որ Ճշմարիտ է Զամշիդի պատմութեան մէջ, այն է, որ այդ “բարի” եւ “լուսաւոր” թագաւորի եօթն հարիւր տարուայ տիրապետութեան մէջ անձնաւորվում է պարսից քաղաքակրթութեան եւ կուլտուրայի թէ՛ սկզբնաւորութիւնը եւ թէ զարգանալը: Եւ պարսից պատմագրներից ոմանք նրան ընդունում են Սողոմոն իմաստունի տեղ, ասում են, թէ նա պարսիկներին վայրենի կեանքից վերածեց ընտանեկան կեանքի, ժողովուրդը զանազան դասակարգերի բաժանեց, սովորացրեց տուն շինել, սովորացրեց բամբակ ցանել, կտաւ գործել եւ հագուստ հագնել, մի խօսքով, ծաղկեց արհեստը եւ ճարտարութիւնը: Մինչեւ այսօր Պարսկաստանում մեացած մի պալատի հյուկապ աւերակները, որ կոչում են թախտ ջամշիդ (Զամշիդի գահ), համարվում են նրանից մնացած: Ծան. թարգ.:

— Հաղար հոգի իմ ամենալնտիր քաջերից, սիրելի ջումշուդ, ասաց ՓանահՀ-խանը: — Հաւատա, որ ես յարգել գիտեմ ամեն մի հերոսական գործողութիւն:

— Իսկ ես տալիս եմ հինգ հարիւր հոգի իմ վարանցիներից, պատասխանեց մելիքը: — Եւ թող օրհնէ Աստուած ջումշուդի ձեռնարկութիւնը, որովհետեւ արդարութիւնը բոլորովին նրա կողմն է:

## VI.

Ջումշուդը դուրս է գալիս Թալիշի մելիքի դէմ:

Նոր ծագող արեգակը արդէն ճանապարհի վրայ ողջունեց քաջ ջումշուդին իր զօրախմբի հետ, որը բաղկացած էր հազար հինուորներից: Ամենալաւ ցեղին պատկանող Ղարաբաղը նժոյգները<sup>1</sup>, որոնք ոչ առանց պատճառի հռչակուած են իրանց գեղեցկութեամբ եւ թեթեւաշարժութեամբ, թռչում էին նրանց տակին: Զինուորներից շատերը հագած ունէին թեթեւ զրահներ, ունանք կրում էին վերտեր, ունանք սաղաւարտներ, իսկ մացածները փափախներ: Համարեա բոլորի թրերը եւ խնացածները փոխախներ: Համարեա բոլորի թրերը եւ խնացածները Շամի<sup>2</sup> գործ էին: Նրանց ուսերից քարշ էին խնացած պարսկական երկայնափող հրացաններ, որոնց կօնը լուսաւոր ապրում էր կառավարել ժողովուրդը եւ տանչել նրան:

<sup>1</sup> Ղարաբաղի նժոյգները եւ այժմ համարվում են ամբողջ Անդրկովկասում որպէս ձիաների ամենալաւ ցեղ: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Շամի Սիրիան է: Ծան. հեղ.:

Շամ կոչվում է Սիրիայի Դամասկոս քաղաքը: Հեղինակը սիալվում է, կարծելով, թէ Ղարաբաղի հայոց մելիքների զօրքերի զէնքերը Շամի կամ պարսից գործ էին: Ղարաբաղի հայերը կղզիացած լինելով իրանց կեաների մէջ, եւ անդադար պատերազմական կեանք վարելով, կարիքը ստիպել էր նրանց Դաղստանի լեռնաբնակների նման զարգանալ զինագործութեան արհեստի մէջ: Ղարաբաղիք իրանք էին պատրաստում իրանց զէնքերը: Եւ այսօր մեր մէջ ամենալաւ զինագործները ղարաբաղցիներ են: Ծան. թարգ.:

դաղները շքեղ կերպով զարդարած էին սաղաֆով, ու-  
կեայ եւ արծաթեայ զրուակներով եւ զանազան օտարոտի  
նկարներով։ Ուրախ եւ զռարթ սլանում էր այդ աներ-  
կիւղ զօրախումբը մի յանդուգն ասպատակութեան հա-  
մար։ Նրանք գիտէին, որ կործանելով Զէյվան, կարելի է  
շահուել հարուստ աւարով։ Այդ զինուորները, ամեն  
ինչ, որ ստացվում է զինուած ձեռքով, համարում էին  
օրինաւոր կողոպուտ։

Քումշուղը, վառուած սաստիկ անհամբերութեամբ,  
հանգստութիւն չեր տալիս իր զօրախամբին։ Նրանք, որպէս  
զե կարձայնեն ուղին, դնում էին վերին Ղարաբաղլ ճա-  
նապարհով, լոռնային բարձրաւանդակների վրայով, ցած  
էին իջնում երկարատեւ զառիվայրներից, եւ դիմում էին  
դէպի հին կամուրջը, որ շինուած էր մըրկածուփ թար-  
թարի<sup>1</sup> վրայ։ Օրը հասած էր իր վախճանին, երբ նրանք  
իրանց ձիաները ջրում էին այդ աղմկալի գետի ալիքնե-  
րով, որը վազում է նեղ փափարների միջով։ Քումշուղը  
բորբոքուած էր այն ցանկութեամբ, որքան կարելի է, շու-  
տով կատարուի իր նպատակը, այդ պատճառով խիստ  
դժուարութեամբ համաձայնուեցաւ գիշերը անցկացնել

<sup>1</sup> Տէրտէր (Տերթը), ամենասրբնթաց լեռնային գետ է, որ գտնվում է Գանձակի եւ Ղարաբաղի սահմանի վրայ. որի անունը նշանակում է ՊՈՐ (տէրտէր): «Ծան. Հեղ»:

Հեղինակը սխալում է այդ գետի թէ անուան բացատրութեամբ եւ  
թէ աեղի վերաբերութեամբ։ Ի հարկէ։ Եթէ Թարթարը ուռուց ձեւով  
Տերտեր արտասանենք, դուրս կը գայ տէրտէր (քահանայ)։ Բայց թէ հայ  
եւ թէ մահմեդական ժողովրդի մէջ այդ գետը յայտնի է Թարթար անու-  
նով, որը մեր պատմական Տրտում գետն է։ Եւ Թարթարը չէ գտնվում  
Գանձակի եւ Ղարաբաղի սահմանի վրայ, որպէս ցոյց է տալիս հեղինակը,  
այլ հսում է Ղարաբաղի նահանգի մի մասի միջով եւ բաժանում է այդ  
նահանգի երկու գաւառները (Թալիշը եւ Ջրաբերդը) միմեանցից։ Ման·  
թարդ։

Թարթարի մերձակայքում։ Այստեղ հարաւային կողմից տաշը, որ տարածվում էր լեռների ստորոտում, ծածկուած էր դալար խոտերով։ Մի այսպիսի տեղ անհրաժեշտ էր յոգնած ձիաները հանգստացնելու համար, որ կարելի լինի դիշերը Զեյվայի վրայ յանկարծակի յարձակում գործել։

Բարձի փոխարէն իր փափախը դնելով քարի վրայ, եւ գլուխը խոնարհեցնելով նրա վրայ, ծածկուած թանձր եափունջիով, պառկած էր ջումչուղը թարթարի ափի մօտ։ Աղմուկը, որ առաջ էր գալս այդ լեռնային գետի հոսանքից, միայն այդ աղմուկը խանգարում էր խորին լոռութիւնը, որ թագաւորում էր նրա ափերի մօտ։ Երկինքը պարզ էր. միլիօնաւոր աստղեր փայլում էին նրա գլխի վրայ, թափելով իրանց դողդոջուն լոյար։ Աջ եւ ձախ կողմերից ձգվում էին լեռների հսկայական գագաթներ, որոնք շատ տեղերում դեռ ծածկուած էին մշտական ձիւնով։ Գիշերը ցուրտ էր եւ խոնաւ։ Զնայելով իր սաստիկ յոդնածութեանը, ջումչուղը դարձեալ չը կարողացաւ քնել։ Զանազան մտածութիւններ, մինը միւսից աւելի մռայլոտ, նկարվում էին նրա երեւակայութեան մէջ։ Նա ներկայացնում էր իր մտքում Սալեհային, որպէս մի գերի, կաշկանդուած շղթաներով, որը ծառայում էր իր թշնամիների յաղթանակի ուրախութիւնը աւելացնելու համար։ Նրան այսպէս էր թուում, իբր թէ տեսնում է իր սիրելին ենթարկուած ամեն տեսակ տանջանքների, տեսնում է, թէ որպէս Յուսէինը եւ նրա քոյրը հայհայանքներ էին թափում անպաշտպան զոհի վրայ . . . Նա վեր թուաւ պառկած տեղից, սառն քրտինքը պատեց նրա ճակատը։ Նա ձեռքը տարաւ դէպի թուուրը, կուում էր իր երեւակայութեան ստեղծած ցնորք-

ների հետ։ Յետոյ յուշի գալով, զայրանում էր գիշերի վրայ, որ այնքան երկար շարունակվում էր, հրաւէր էր կարդում վաղորդեան լոյսին, որը դեռ շատ հեռու էր, եւ կրկին ընկնում էր քարի վրայ, յուսահատ դրութեան մէջ բողքելով, թէ ինչու բնութիւնը նրան չէր հնապանդվում։

Քունը կարծ ժամանակով փակեց նրա աչքերը։ Բայց այդ կարձատեւ հանգստութեան րոպէներում հրէշաւոր ցնորքներ հալածում էին նրան։ Նրան երեւում էր, թէ ինքը լողում է արեան մէջ, եւ շղթաներով կապկապած, արգելուած է մի մթին ներքնատան մէջ։ Ինչ որ ձայն կոչում է նրան իր մօտ, արտասանում է նրա անունը։ Այդ արտասանութեան մէջ ձանաչում է նա իր նազելի Սալիհայի ձայնը։ Աչքերը բարձրացնում է, տեսնում է նրան տարածուած գետնի վրայ, շաղախուած արեան մէջ։ Աշխատում է վազել նրա մօտ, բայց ի զուր, շղթաները բռնում են նրան։ Նա ջանք է անում խորտակել իր կապանքները։ Վերջապէս նրանք կոտրատուեցան եւ նա զարթնեցաւ։

Արեւելքում արդէն նշմարվում էր առաւօտեան թոյլ, գողգոջուն լոյսը։ Բացուող արշալոյսի նշոյլ սաստիկ ուրախացրեց ջումշուգին։ Նա արագութեամբ վեր թռաւ իր բացօթեայ անկողնից, սկսեց զարթեցնել զինուորներին, որոնք սաստիկ յոգնածութեան պատճառով, գանվում էին խորին քնի մէջ։ Քաջասիրտ զարաբաղբները շուտով պատրաստուելով, ձանապարհ ընկան։ Նոր ծագող արեգակը իր ձառագայթները տարածեց նրանց վրայ այն ժամանակ, երբ նրանք արդէն գտնվում էին հովտի մէջ, լեռների միւս կողմում։ Նրանք կարող էին մինչեւ կէսօր հասնել Զէյվայի մօտ։ Բայց որովհետեւ վճռուած էր

գիշերային յարձակում գործել, այդ պատճառով նրանք մեղմացրին իրանց ձիաների արագ ընթացքը, գնում էին աւելի հանդարտ քայլերով։

Փոքր ինչ առաջ ջումշուգը հրաւէրք էր կարդում արեգակին, ցանկանում էր, որ նա շուտ ծագէ, իսկ այժմ դժգոհ էր, թէ ինչու նա այնպէս դանդաղ կերպով էր հորվուում երկնքի կապոյտ կամարի վրայով։ Եթէ նրանից կախուած լինէր, նա նոյն րոպէում կը խորասուգէր տուրնջեան պայծառ լուսատուին ովկիանոսի ջրերի մէջ, եւ նրա փոխարէն կը կանչէր մթին գիշերը։ Վերջապէս ցերեկուայ լուսատուն մօտեցաւ իր մուտքին։ Արեւմտեան կողմում երեկոյեան վերջալոյսը արիւնի գոյն ստացաւ։ Կարծես թէ, դա նախագուշակում էր այն արիւնոտ տեսարանը, որ շուտով պիտի հանդիանար։ Ջումշուգը ուրախութեամբ նայում էր, թէ որպէս գիշերը տիրում էր տիեզերքին եւ երկնային կամարը հետզհետէ ծածկվում էր մթին խաւարով։ Նա փափագում էր մթութեան, փափագում էր այն րոպէին, երբ կարող կը լինէր սուր եւ հուր մայնել Զէյվայ բերդի մէջ, կորզեով իր Սալիհային թալիշի մելքքի ձեռքից, եւ իր թշնամիների արիւնով շաղախելով նրանց կործանուած բնակարանների մոխիրը։

Վերջապէս երեկոյեան վերջալոյսը բոլորովին հանգաւ։ Հուսինը առժամանակ իր թոյլ լուսով դեռ լուսաւորում էր արեւմտաքը, վերջը նա եւս մայր մտաւ։ Ամաերը սկսեցին ծածկել երկնքի երեսը. աստղերը թագնուեցան. հասաւ այն րոպէն, որին վաղուց սպասում էր ջումշուգ։

## VII.

Գիշերային յարձակումն Զէյվայի վրայ — ջումշուղի գերուիլը:

Օգուտ քաղելով գիշերային խաւարից, ջումշուղի զինուորները, առանց շշուկ բարձրացնելու, մօտենում էին Զէյվային: Բերդի մէջ ոչ ոք յարձակում չէր սպասում: Բոլոր բնակիչները հանգիստ էին, եւ անհոգութիւնը մինչ այն աստիճան էր հասած, որ ոչինչ նախազգուշութիւններ գործ դրած չէին: Երբ որ բոլորովին մօտեցան բերդին, մումշուղը հրամայեց զինուորներին շոտավել: Նրանցից հինգ հարիւր հոգի թողնելով ձիաների մօտ, մնացածների հետ յարձակուեցաւ նա Զէյվայի վրայ, որ էր թալիշի մելիքի աթոռանիստ բերդը: Իր զինուորներին բաժանել էր նա չորս մասն, որոնց իւրաքանչիւրը բաղկացած էր 250 հոգուց: Յանկարծ բերդի բոլոր չորեքկողմից լսելի եղան մումշուղի զինուորների սոսկալի աղաղակները, որոնք բռնութեամբ ներս մղուեցան ամրոցի մէջ: Շատ տեղերում հրդեհի լցոր սկսեց առաջ ընթանալ հրեղէն գետի նման: Սարսափած բնակիչները վազվզում էին յետ ու առաջ, առանց հասկանալու, թէ ինչ է կատարվում իրանց հետ: Թէ վարանդացները եւ թէ ջուսնշիրցիները զանազանութիւն չէին գնում ոչ հասակի եւ ոչ սեռի: Ամեն հանգիպողները կոտորվում էին նրանց սրերի հարուածներից: Գնդակների ֆշչոցը, հրացանների որոտը, կործանուող շինութիւնների դղբդոցը, կնիկների հառա- չանքը, երեխանների լացը, տղամարդերի աղաղակը, մումշուղի զինուորների կատաղի գոռում-գոչումները, նրանց թրերի եւ խէնջարների շառաչեւնը, վերաւորների հեծու- թիւնը, մեռնողների խոխոոցը, արեան ձապաղիքը, որ

միախառնվում էին ամեն տեղ Ճարակող կրակի բոցերի հետ, — այդ բոլորը ներկայացնում էին այն գիշերուայ սարսափելի պատկերը:

Թալիշի մելիքը եւ նրա որդին, հէնց որ իմացան յարձակման առաջին նշանները, շտապեցին հաւաքել իրանց զօրքերը, թշնամուն ընդդիմադրելու համար: Բայց նրանք այն աստիճան շփոթուած էին, որ չգիտէին, թէ դէպի որ կողմը դիմեն: Մի տեղում նրանք հանգիպեցին վարանդացիներին. սկսուեցաւ կոիւը ամենայն կատաղութեամբ: Կոիւը կատարվում էր դիակների կոյտերի եւ կիսավառ խրճիթների աւերակների վրայ, իսկ նրանց ետեւից լսելի էին լինում խեղճ թալիշեցիների յուսահատ աղաղակները: Նրանք վազեցին դէպի այն կողմը: Յանկարծ մի այլ կողմում լսելի էին լինում ջուսնշիրցիների յաղթական աղաղակները եւ կրակը տարածվում էր Զէյվայի մէջ: մումշուղը, որ սկզբից առանձին պատուէր էր տուած իր զինուորներին, որ շմտնէին, ամրոցը առանց իր կրգագրութեան, վերջապէս հէնց նրա պարիսպների մօտ միացրեց իր բոլոր զինուորներին: Այդ միջոցին թալիշի մելիքը իր որդի Յուսէինի հետ թափառում էին կիսակործան Զէյվայի մէջ: Այստեղ կրկին նորոգուեցաւ կոիւը աւելի սաստկութեամբ: Թուի մէջ գերազանցութիւնը մումշուղի կողմն էր եւ նա յոյս ունէր կատարեալ յաղթութեան վրայ: Յանկարծ Զէյվայի հիւսիսային կողմից լսուեցան աղաղակներ եւ մի քանի ըսպէի մէջ մումշուղի զօրախումբը ամեն կողմից պաշարուեցաւ Խաչէնի մելիքի<sup>1</sup>

<sup>1</sup> Խաչէնը գտնվում է Զըաբերդ եւ Վարանդա գաւառների մէջ տեղում: Խաչէնի տիրապետող մելիքներն էին Հասան-Զալալեան իշխանների սերունդը: Տես «Խամայի Մելիքութիւնները», գլքի I գլ. 3-եր. եւ II գլ. 15-եր.: Ծան. թարգ.:

զօրքերով։ Այդ զօրքերը եկած էին մի քանի օր առաջ եւ զետեղուած էին Զէյվայ գետի միւս ափի վրայ, որպէս զի միանալով թալիշեցիների հետ, միահամուռ կերպով գործէին թշնամու դէմ։ Ճումշուղը, նկատելով սպառնացող վտանգը, մտածեց պատառելով անցնել թշնամիների միջով, բայց ի զուր։ Երկու կողմից եւս կոփեր ամենայն յամառութեամբ շարունակուեցաւ մինչեւ առաւօտ։ Այդ միջոցին ճումշուղի հինգ հարիւր զինուորները, որ թողուած էին ձիաների մօտ, տեսնելով այնքան երկարատեւ կոփեր, եւ տեղեկանալով, թէ որպիսի վտանգ է սպառնում ճումշուղին, վճռեցին թողնել միայն հարիւր հոգի ձիաների մօտ, իսկ մնացածները նետուեցան իրանց զօրապետին օգնելու։ Իրաւ է, որ նրանց գալուստը, զներով խաչնցիներին եւ թալիշեցիներին երկու կրակների մէջ, բաւական փոխեց պատերազմի կերպարանքը, բայց այդ երկար չտեւեց։ Որովհետեւ այդ միջոցին Զէյվայի սպառափած եւ փախստական բնակիչները, ժամանակ գտնելով խելքի գալու, նյնպէս զինուորուեցան եւ շտապեցին օգնելու իրանց մելքին, որը պաշտպանվում էր խաչնցիների օգնութեամբ միայն։ Ի զուր ճումշուղը գործ էր դնում բոլոր, ինչ հրաշքներ որ կարող է կատարել յուսահատ քաջութիւնը եւ անհրաժեշտութիւնը։ Նրա զօրքերը ջարդուեցան եւ արեգակի առաջին ճառագայթները ծագեցին նրա վրայ այն ժամանակ, երբ նա արդէն ենթարկուած էր ծանր գերութեան։

— Բարով, իմ փեսացու, ասաց թալիշի մելքը գաղանային ժպիտով, երբ շղթայներով կապկապած ճումշուղին բերեցին նրա մօտ։ — Դու քաջ պատերազմող ես, բայց ոչ բոլորովին յաջողակ։ Ի՞նչու համար չնորհ բերեցիր ինձ մօտ, երեւի, քո կնոջը տանելու համար։

Ի՞նչու չէ, ես կը կատարեմ քո փափազը, դու նրան կը տեսնես, նա բոլորովին ողջ եւ առողջ է։ Տես, ինչ սատանայ է, մտածեց ծածուկ մտնել իմ Զէյվայ բերդը, այրել նրան եւ իմ հպատակներից շատերին կոտորել։ Բայց ի՞նչու համար, — մի կնոջ պատճառով, որին ես վեր առի ինձ մօտ կրթելու համար եւ փայփայում եմ իմ հարազատ զաւակի պէս։ Հա, նա էլ շատ բարի պառուղ է, փոքր էր մնում, որ իմ սիրելի Յուսէինին պիտի ուղարկէր միւս աշխարհը։ Դու եւ նա լաւ զցյգ էք, ինչ ասել կ'ուզէ։ Պէտք է ձեզ միջոց տալ տեսնուելու միմեանց հետ։ Տեսնենք, կը հաւանե՞ն դու իմ հիւրասիրութիւնը։ Ես կ'աշխատեմ ամեն կերպ բաւականութիւն տալ իմ թանկազին հիւրին, որ նա ոչ մի բանի մէջ կարօտութիւն չունենար։ Ընդունում ես իմ առաջարկութիւնը, մելք ճումշուգ։

— Զարագործին միայն վայելու է հայհցանքներ կարդալ անզէն գերիի վրայ, պատասխանեց ճումշուղը։

— Ի՞նչ հարկ կայ այդքան խօսքերի, մէջ մտաւ յանդուգն Յուսէինը։ — Վաղուց պէտք էր գրան կախաղան բարձրացնել։ Շնորհեցէք այդ զուարձութիւնը մեր թալիշեցիներին։

— Պէտք չէ տաքանալ, որդի, շարունակեց թալիշի մելքը։ — Մի այդպիսի մահը դեռ շատ վաղ է։ Պէտք է մեր հիւրին նախ եւ առաջ ծանօթացնել երկարատեւ զուարձութիւնների հետ։ Մենք պարտաւոր ենք մեր շնորհակալութիւնը յայտնելու նրան մեզ մօտ այցելութիւն գործելու համար, եւ կը տանք նրան մի վայելու սենեակ։ — Բերեք զրան իմ ետեւից, ասաց նա, դառնալով դէպի պահապանները, որ շրջապատել էին ճումշուղին։

Նրանք մօտեցան մի աշտարակի, որի միջից լսելի էին լինում ծանր հառաջանքներ։ Ջումշուդի սիրտը կտրատվում էր, նրան թուում էր, որ լսում է իր նազելի Սալիշայի ձայնը։ Դուռը բացուեցաւ եւ ինչ սարսափելի տեսարան հանդիսացաւ նրա առջեւ։ Սալիհան, նրա սիրելի, անգին կենակիցը, կաշկանդուած երկաթեայ կապանքներով, ամրացրած պատի հետ, պատառոտած հագուստներով նատած էր քարի վրայ։ Լոյսի թոյլ շառաւիղը, որ հազիւ թափանցում էր այդ մթին զնդանի մէջ, թոյլ էր տալիս որոշել նրա դէմքի գծերը, որ այլանդակուած էին սրտի դառնութիւնից։ Ջումշուդը, տեսնելով այդ սոսկալի տեսարանը, քարացածի նման մնաց անշարժ։ Նա պատրաստ էր իր խէնջարը ցցել նրան այդ դրութեան մէջ պահող եղեռնագործի սրտի մէջ, բայց չէր կարող, որովհետեւ այժմ ինքն եւս մի անգէն գերի էր։ Նա գոչեց սրտաշարժ ձայնով եւ Սալիհան ճանաչեց նրան։

— Այդ իմ ջումշուդն է, աղաղակեց նա, — Աստուած իմ, ուրեմն ես աղատուած եմ։

— Հա՛, ի հաղկէ, վրաբերեց Թալիշի մելիքը, — դու դրանից յետոյ ամեն րոպէ նրան կը տեսնես. նա կը մնայ այստեղ քեզ մօտ. ես չեմ կամենում ձեզ բաժանել միմեանցից. դուք բոլորովին արժան էք միմեանց։

Նա հրամայեց ջումշուդին եւս շղթաներով ամրացնել բանտի հանդիպահայեաց պատի վրայ, իսկ ինքը հեռացաւ, ցանկանալով նրանց ամեն տեսակ բարեյաջողութիւններ։

Երկար, շատ երկար դժբախտները նայում էին միմեանց վրայ եւ խօսել չէին կարողանում։ Արտասուքը խեղդում էր նրանց։ Վերջապէս Սալիհան ասաց։

— Հաց մի՛ լինիր, սիրելի ջումշուդ, մենք թէեւ անրախտ ենք, բայց միասին ենք, այդ էլ բաւական է։ Ո՛քան ես տանջուեցայ առանց քեզ, — այդ միայն Աստուած գիտէ։ Դու կամենում էիր ազատել ինձ, եւ ինքդ դժբախտութեան մէջ ընկար։ Մոռանանք մեր դրութիւնը, արհամարհենք մեր թշնամիներին եւ միսիթարուենք միմեանցով։ Ես քեզ տեսնում եմ, եւ ես բախտաւոր եմ. տանջվում եմ քեզ հետ միասին, եւ չեմ զգում իմ տանջանքները։

— Տէր Աստուած, գոհութիւն եմ մատուցանում քեզ, բացականչեց ջումշուդը, — որ իմ դառնութիւնների հետ անգամ առաքում ես ինձ միսիթարութիւն։ Ես պարծենում եմ քեզանով, իմ անգին Սալիշա, ես ուրախանում եմ քո սիրով եւ ցաւում եմ միայն, որ չեմ կարող սեղմել քեզ իմ հրաբորքոք սրտի վրայ։ Այդպէս, թող ուրեմն չարագործները մտածեն, թէ դրանով բազմապատկում են մեր չարչարանքները, ստիպելով մեզ նայել սիրած եւ պաշտած առարկաների տանջանքների վրայ։ Նրանք սխալվում են։ Մեր սրտերը արհամարհում են մարմնի չարչարանքը եւ միշտ միացած կը լինեն միմեանց հետ։ Մենք ասլում ենք միմեանց հանդէպ, շնչում ենք մի եւ նոյն օդով, — այդ էլ բաւական է...»

Այդպէս անբախտները միսիթարում էին միմեանց։ Այդ միջոցին Թալիշի մելիքը, ցանկանալով, որ ջումշուդի վիճակը ծածկուած լինի անյայտութեան խաւարի մէջ, կանչել տուեց վարանդացի գերիներից մէկին, եւ յանձնելով նրան մի գլուխ, որը բոլորովին այլանդակուած էր թրերի հարուածներով։ ասաց։

— Դա ձեր հրամանատար ջումշուդի գլուխն է։ Վարանդայի մելիքի մօտ։ յանձնիր նրան այդ գլուխը եւ ասա։ թէ ահա այդպէս կ'ոչնչանան այն ամենքը, որոնք կը համարձակուեն յարձակում գործել իմ դէմ։ Այդ խօսքերով նա ճանապարհ դրեց գերեալին դէպի Զանախչի։

## VIII.

Աստղագէտը գնում է Զէյվայ։

Վարանդայի իշխանը, ստանալով թալիշի մելիքի ուղարկած բօթարեր ընծան, սաստիկ յուսահատութեան մէջ ընկաւ։ Նա մեծ սուգ կատարեց իր սիրելի եղօրորդու սպանման պատճառով, եւ ցանկանալով պահպանել նրա յիշատակը, ինդրեց Փանահ-խանից, որ թոյլ տայ բերելու Զանախչի ջումշուդի զաւակներին, եւ դաստիարակում էր նրանց որպէս իր սիրելի թոռնիկներին։

Պատերազմը նրա եւ Խամսայի միւս չորս մելիքների մէջ գեռ շարունակվում էր աւելի սաստկութեամբ եւ փոփոխակի բախսոով։ Բայց յաղթութիւնը երկու կողմից եւս տակաւին մի որ եւ իցէ վճռական վախճանի չէր հասած։ Վարանդայի իշխանին օգնում էր Փանահ-խանը, իսկ Խամսայի չորս մելիքները գործում էին միացեալ ուժերով Վարանդայի իշխանի դէմ։

Հայոց մելիքների այդ ներքին կոիւների ժամանակ, կարծես թէ, մի կախարդական ձեռքով կառուցվում էր Շուշին։ Արդէն Գանձակի Ճանապարհի կողմից կանգնած էին քարե քարձը պարիսպները, ամրացրած սպառնալից մարտկոցներով եւ աշուելի աշտարական կ'ուղարձում էր այդ պատճառ մատական մելիքները։ Բերդի մէջ շինուած էին ոչ այնքան մեծ ամրոցներ քառանկիւնի ձեւով, որոնց մէջ բնակութիւն հաստատեց Փանահ-խանը մելիքների ամբողջ նահանգին։ Միայն նրա որդի Իբրահիմ-խանի ժա-

իր կուսակիցների հետ։ Մինը միւսի ետեւից կառուցվում էին բազմաթիւ շինուածքներ, որոնց մէջ բնակեցնում էին ընտիր պատերազմող մարդիկներին, որոնց հաւաքել էին ամբողջ Ղարաբաղից։ Եւ 1752 թուականի աշնանը Շուշին բղորովին շինուած, ամրացրած եւ բնակիչներով լցուած էր։

Երբ որ Փանահ-խանը տեսաւ, որ արդէն հասաւ այն բաղձալի ժամանակը, որ կարող է յաջողութեամբ պաշտպանուել իր բերդի մէջ եւ մինչեւ անգամ գործել քացարձակ կերպով, նա ձգեց իր դիմակը եւ այնուհետեւ սկսեց վարուել իբրեւ ամբողջ Ղարաբաղի իշխան։ Մինը միւսի ետեւից զանազան թափառական ցեղերին խոնարհեցնում էր նա իր իշխանութեան ներքոյ։ Շուտով Խաչէնի եւ Գիւլիստանի<sup>1</sup> մելիքները հպատակուեցան նրան եւ նա իշխում էր այն բոլոր երկրների վրայ, որ սկսվում էին թարթար գետից եւ տարածվում էին մինչեւ Երևանս գետը<sup>2</sup>։ Մնում էին միայն երկու մելիքներ՝ Վարանդայի

<sup>1</sup> Այստեղ հեղինակը մի աշխարհագրական սխալ է անում, կարծեցվ, որ Գիւլիստանը եւ Թալիշը առանձին-առանձին գաւառներ են, մինչդեռ երկուսն էլ մի եւ նոյն գաւառն են, միայն զանազան անուններով։ Նա յայտնում է, որ շուտով Գիւլիստանի մելիքը խոնարհուեցաւ Փանահ-խանին։ Իսկ մի քանի տողերից յետոյ աւելացնում է։ “Մնում էին միայն երկու մելիքներ՝ Վարանդայի եւ Թալիշի մելիքը։ Բայց Թալիշի մելիքը մի եւ նոյն Գիւլիստանի մելիքն էր, որը գեռ խոնարհուած չէր, որին խանը աստղագէտի ձեռքով նամակ է գրում, հրաւիրում է հպատակել իրան, բայց սաստիկ վիրաւորական պատասխան է ընդունում, եւ այդ պատճառ է տալիս մի նոր կոռուի խանի ու մելիքի մէջ։ Ծան. թարդ։”

<sup>2</sup> Արաքս կամ Արազ. Նշանաւոր մեծ գետ է, որ բաժանում է առւաց այժման անդրկովկասեան նահանգները Ազերեյշանից (Ատրպատականից) Ծան. հեղ։

Փանահ-խանի տիրապետութիւնը երբէք չէ տարածուել Թարթար գետից մինչեւ Երասխ գետը, եւ նա իր կենդանութեան ժամանակ, թէեւ վարեց հայոց մելիքների հետ բազմամեայ պատերազմ, բայց վարողացաւ տիրել Ղարաբաղի ամբողջ նահանգին։ Միայն նրա որդի Իբրահիմ-խանի ժա-

եւ Թալիշի մելիքները։ Դրանցից առաջինին՝ Վարանդայի մելիքին նա խնայում էր իր քաղաքական զանազան նպատակների պատճառով, որովհետեւ նա շատ նպաստել էր խանի բարձրանալուն, եւ դեռ առաջուայ խաբուած դրութեան մէջ գտնուելով, իր ձեռքում եղած բոլոր միջոցներով անդադար գործում էր խանի իշխանութեան մեծանալու եւ ընդարձակուելու համար, համարելով նրան իր ճշմարիտ բարեկամը։ Խակ Թալիշի մելիքի երկրի հեռաւորութիւնը արգելք էր զնում Փանահ-խանին տիրապետելու նրան, եւ այդ պատճառով մտածում էր նա՝ դեռ առաջ իր իշխանութիւնը ամուր կերպով հաստատել Հարաբաղի վրայ, յետոյ դառնալ դէպի Թալիշի մելիքութիւնը։ Բայց այդ րոպէն արագութեամբ մօտենում էր։ Եւ Փանահ-խանը գիտաւորութիւն ունէր, Թալիշի մելիքին իր վերջին հարուածը տալուց յետոյ, դառնալ դէպի իր բարեկամ Վարանդայի իշխանը եւ պահանջել նրանից հպատակութիւն։

Մեր աստղագետը, որը առաջինը եղաւ եւ Փանահ-խանին ցոյց տուեց բոլոր այն հնարները, որոնցով նա կարող կը լինէր Հարաբաղին տիրելու, — այդ բանսարկուն այժմ վայելում էր խանի մօտ մեծ հաւատարմութիւն եւ շնորհ։ Խանը, հետեւելով իր ժամանակի սնահաւատութիւններին, հաւատում էր նրա գուշակութիւններին եւ աստղաբաշխական գիտութեանը։ Այդ էր պատճառը, որ աստղաբաշխը օր ըստ օրէ

մանակ, երբ զանազան հանդամանքների պատճառով հայոց մելիքների զօրութիւնը թուլացաւ, — այդ խանը փոքր ինչ ընդարձակեց իր իշխանութիւնը, այն եւս ոչ թարթար գետից մինչեւ Երասխ գետը։ Այդ կարելի է անունը մեր “Խամսայի Մելիքութիւնները” գրքի IX—XXIX գլուխներում։ Ծան. թարգ.։

աւելի եւ աւելի գրաւում էր Հարաբաղի խանի հաւատարմութիւնը։

Միանգամ խանը նստած էր իր նորակառոյց, փառաւոր կերպով զարդարած ապարանքում, Շուշի բերդի մէջ, եւ խօսում էր աստղագետի հետ։ Յանկարծանսպասելի կերպով յիշեց նա Ճումշուդին, ասելով.

— Գիտե՞ս, աստղագետ, որ ես ամենեւին չեմ հաւատում այն հանելուկին, որը հնարուած էր Ճումշուդի մահուան մասին։ Այդ Թալիշի մելիքը շատ խորամանկ է։ Իմ զինուորներից շատերը, որոնք վերադարձան նոյն կոռուց, հաստատում են, որ Ճումշուդը գերի բռնուեցաւ։ Ինձ շատ ափսոսելի է այդ երիտասարդի կորուստը։ Ես նրան սրտով յարգում էի։ Նա քաջ է եւ արի։ Փորձիր, աստղագետ, իմ կասկածանքը փարատելու, եւ աստղների ընթացքից տեղեկացիր, արդեօք իրաւ է, որ Ճումշուդը սպանուեցաւ կոռուի մէջ, թէ Թալիշի մելիքը պահում է նրան որպէս գերի եւ մեզ խարում է։

Հարցը խիստ գժուարին էր։ աստղագետը շատ լաւ իմանում էր, որ բաւական էր մի անյաջող գուշակութիւն անել, եւ դա պատճառ կը տար իրան բոլորովին զրկուելու խանի հաւատարմութիւնից։ Խակ Ճումշուդի մասին ստոյդ ոչինչ յայտնի չէր նրան։ Եթէ նա գիտենար, ո՞ր իրան այսպիսի հարց կ'առաջարկէին, այն ժամանակ առաջուց կ'աշխատէր գոնէ մօտաւորապէս ծանօթանալ այն հանգամանքների հետ, որոնց մասին պէտք էր փոքր ի շատէ տեղեկութիւն ունենալ։ Խակ այժմ հարկաւոր էր չափազանց նրբամտութիւն, նախագուշակութիւնների մէջ չսխալուելու համար, որոնք սաստիկ անորոշ էին։ Այդ պատճառով նա յոյս դրեց իր ամբողջ ճարպկու-

թեան եւ խորամանկութեան վրայ. ձեւացրեց իրան իրբ խորասուզուած մտածութիւնների մէջ, սկսեց երկարացնել իր հետազօտութիւնները ու համարումները, եւ վերջապէս ձայն տուեց.

— “Զումշուդի աստղը ծածկուած է թանձր մառախուղի մէջ . . . պէտք է կարծել, որ նա կենդանի է . . . Բայց այդ չէ կարելի հաստատապէս պնդել . . . Ամեն նշաններից երեւում է, որ նա պէտք է որպէս գերի պահուած լինի Թալիշի մելիքի մօտ, եթէ սպանուած չէ կոռուի մէջ . . . Այդ աստղը արիւնի գոյն ունի եւ խիստ խարուսիկ կերպով է փայլում, եւ նրա ընթացքը այնքան օտարութի է, որ գժուար է հասկանալ Զումշուդի աստղի ճշմարիտ գրութիւնը . . . Այս, ես հաւատացնում եմ, որ կարելի է, եթէ Զումշուդը սպանուած չէ կոռուի գաշտում, ուրեմն որպէս գերի գտնվում է Զէյվայի մէջ . . .

— Շատ լաւ, պատասխանեց Փանահ-խանը, — եթէ չկայ մի ստոյգ տեղեկութիւն Զումշուդի մահուան մասին, ուրեմն ամենից հաւանական կը լինի կարծել, որ նա գերի է Թալիշի մելիքի մօտ: Այդ պատճառով ես դիտաւորութիւն ունեմ պահանջել նրան: Կը տեսնեմ, թէ ինչպէս կ'ընդունէ մելիքը իմ հրամանը, որը կ'ուղարկեմ նրան քո ձեռքով, որովհետեւ գու կարող ես այդ բանը ուրիշից լաւ գիտենալ, թէ երբ պէտք է ընտրել մի բարեյաջող ըոսկէ, իմ նամակը նրան յանձնելու համար: Ես կամենում եմ, Զումշուդին վերադարձնելով, ուրախացնել նրա հօրեղքօրը, եւ իբրեւ հատուցում իր երախտագիտութեան, ստիպել նրան ճանաչելու իրան իմ հպատակ: Որովհետեւ ցանկալի չէ ինձ ուժով հարկադրել նրան, ինչպէս միւս մելիքներին: Ես չեմ կարող մոռանալ, որ նա նպաստեց իմ բարձրանալուն, թէեւ, ի հարկէ,

անգիտակցաբար, առանց ցանկութեան եւ կամքի, բայց այդ մի եւ նոյն է: Իսկ եթէ, չնայելով այդ նշանաւոր ծառայութեանը, որ ես պիտի կատարեմ նրա համար, նա կը սկսէ հակառակել ինձ, եւ չի ընդունի ինձ որպէս իր թագաւոր, — այն ժամանակ ես ստիպուած կը լինեմ մոռանալ մեր բոլոր բարեկամական յարաբերութիւնները, որոնք եղել են մեր մէջ եւ մինչեւ այսօր շարունակվում են, եւ կը հարկադրեմ նրան ընդունելու իմ կամքը: Բայց ես աւելի բարւոք եմ համարում գործ դնել նրա գէմ մեղմ միջոցներ. իսկ Զումշուդին վերադարձնելը, որին նա արգէն սպանուած է համարում, է ամենալաւ միջոցներից մէկը: Գնա, աստղագէտ, եւ պատրաստուիր էգուց ճանապարհ ընկնելու դէպի Զէյվայ:

Աստղագէտը խիստ յօժարութեամբ կը ցանկանար, որ մի ուրիշին յանձնուած լինէր այդ դեսպանութիւնը: Նա գիտէր, որ Թալիշի մելիքը ամենակամակոր եւ սաստիկ յամառ մարդերից մէկն էր ամբողջ աշխարհում: Մի այսպիսի մարդու հետ խօսելու համար նրան չեխն կարող օգնել ոչ մի համաստեղութիւն, ոչ մի նախագուշակութիւն եւ ոչ ամբողջ աստղաբանութիւնը: Բայց Ճար չկար: Նա պատրաստուեցաւ ճանապարհի համար, տանելով իր հետ Փանահ-խանից մի նամակ հետեւեալ բովանդակութեամբ.

“Շուշի բերդի տէր եւ ամբողջ Ղարաբաղի հրամանատար Փանահ-խանից իր հպատակ Թալիշի մելիքին.

“Ամենակարողի կամքով, Որի ձեռքումն են ամբողջ աշխարհի բոլոր թագաւորները եւ թագաւորութիւնները, ես կոչուած լինելով ստանձնելու ամբողջ Ղարաբաղի հրամանատարութեան իշխանութիւնը, ես ինձ առաջին պարտք եմ համարում հսկելու, որ իմ իշխանութեան

ներքոյ գանուած բոլոր երկրներում չլինէին ոչ մի նեղութիւն եւ ոչ անիրաւութիւններ: Իսկ դու, մելիք, կատարեցիր ամենամեծ անարդարութիւն, գերի վեր առնելով վարանդայի մելիքի եղբօր որդի ջումշուդին եւ նրա կնոջը Սալիհային: Դրանց դու պահում ես քեզ մօտ, առանց այդ մասին ինձ տեղեկութիւն տալու կամ ինձանից հրամաններ խնդրելու: Այդ պատճառով ես, որպէս քո թագաւորը<sup>1</sup>, հրամայում եմ՝ յիշեալ ջումշուդին եւ նրա կնոջը անյապաղ արձակելով, ուղարկել ինձ մօտ այդ նամակաբեր՝ աստղադէտներից իմաստնագոյն հասանի ձեռքով (որի հետ թող լինի խաղաղութիւն): Իսկ եթէ դու ունես որ եւ իցէ մեղադրանք այդ երիտասարդների դէմ, ինքդ անձամբ յայտնուիր ինձ մօտ եւ ներկայացրու քո գանգատները: Այն ժամանակ ես ողորմածաբար կը քննեմ գործը՝ եւ եթէ դու արդար լինես, քեզ բաւականութիւն կը տամ, իսկ եթէ ոչ, կը մերժեմ: Այսու ամենայնիւ, յոյս ունեցիր իմ գլխարտութեան վրայ, եւ այսուհետեւ մի համարձակուիր ինքնակամ կերպով կատարելու քո հաճութիւնները, որովհետեւ Հարաբաղը այժմ ունի իր բարձրագոյն հրամանատարը<sup>2</sup>:

## IX.

Աստղագէտի կրած վիրաւորանքը Զէյվայումն:

Զէյվայի ամրոցի սենեակներից մէկի մէջ, մտախոհ կերպով նստած էր Թալիշի մելիքը: Սենեակը զարդարած

<sup>1</sup> Փանահ - խանը երբէք թագաւոր լինելու ձգտումներ չեւ ունեցել եւ իրան թագաւորական տիտղոս չէ յատկացրել: Նա սկզբում մի հասարակ հովիլ էր, որ հանգամանքների շնորհիւ պարսից կառավարութիւնից խանութեան տիտղոս ստացաւ, յետոյ նոյն պարսից կառավարութիւնից իր անհաւատարմութեան համար սպանուեցաւ: Տես մեր “Խամայի Մելիքութիւնները” գրքի IX—XV գլուխները: Ծան. Թարգ.:

Էր պարսից Ճաշակով<sup>1</sup>. պատերի վրայ երեւում էին գոյն-գգոյն նկարներ, որոնք պատկերացնում էին ծաղկներ, պտուղներ, որպիսինները բնութեան մէջ գոյութիւն չունէին, պատկերացնում էին մարդիկներ, որոնց իւրաքանչչւրի գլուխը իրանի կէսի չափ կը լինէր: Բայց չնայելով այդ նկարների այլանդակութեանը, նրանք իսխատ հարուստ կերպով նախշած էին ոսկով: Հօր հանդէպ մի եւ նոյն դրութեան մէջ նստած էր նրա որդին՝ Յուսէինը: Այդ վերջինը ծխում էր պարսկական թամբաքուից պատրաստած ղէյլանը եւ տհաճութեամբ անդադար դուրս էր թողնում բերանից թամբաքուի թանձր ծուխը:

Վերջապէս մելիքը ընդհատեց տիրող լոռութիւնը, ասաց վրդովուած ձայնով.

— Ահա, ինչ ժամանակների հասանք... մի օտարական, մի հասարակ ջուանշիրցի, որը Նադիր-շահի մօտ ծառայում էր նրա համար միայն, որ իր բօղազը պատռէ պոռալով, թէ խանը այս հրամայեց, այն հրամայեց եւ այլն<sup>2</sup>, — այժմ իր լայն կոկորդի շնորհիւ եւ մեր Վարանդայի մելիքի յիմարութեան պատճառով (որը ինձ հետ կոռւելու համար կանչեց նրան օգնելու) — այժմ մի

<sup>1</sup> Պարսից նկարչութիւնը առհասարակ յայտնի է իր ոսկով եւ վառ գոյններով, բայց կերպարանքները բնաւ հաւասարաշափութիւն (պրոպորցիոնալիտետ) չունեն: Ծան. Հեղ.:

Երեւի հեղինակը տեսել է վերջին ժամանակների հայոց մելիքների ամրոցները եւ նրանց համեմատ է նկարագրում Թալիշի մելիքի պալատը: Այդ հոյակապ պալատը մինչև այսօր գոյութիւն ունի, գտնվում է Հին-Թալիշ բերդի մօտ, Հոռիկի վանքի հանդէպ: Նրա մի մասը պահպանել է եր ամբողջութիւնը: Նրա մէջ բնաւ չէ երեւում պարսկական ճաշակ, այլ շնուած է հայկական մի առանձին ճարտարապետութեան ոճով: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Փանահ - խանը մի ժամանակ մունետիկի (Չառչիկ) պաշտօն էր կատարում՝ Նադիր-Շահի մօտ: Տես մեր “Խամայի Մելիքութիւնները” գրքի IX գլ. 45 եր., Ծան. թարգ.:

այսպիսի բախտախնդիրը, որպէս մի ինքնակալ իշխան, սկսել է հրամաններ կարգալ Ղարաբաղի վրայ... Ամօթմեզ: Խսամայի բոլոր մելիքները, բացի ինձնանից միայն, հպատակում են նրան, որպէս մի թագաւորի: Ի՞նչ ես մտածում դու մի այսպիսի ամօթալի խայտառակութեան վրայ, սիրելի Յուսէին:

— Ես մտածում եմ, պատասխանեց բորբոքուած երիտասարդը, — որ, եթէ ինձնանից կախուած լինէր, ես բոլոր այդ մելիքներին, որոնք խոնարհվում են մի աննշան օտարականի առջեւ, կարգով կախ կը տայի մի ծառի վրայից: Միթէ նրանք մոռացել են, որ մելիքները Հայաստանի վաղեմի թագաւորող տան շառաւիղն են:

— Ով է տուել նրանց այդքան խելք, որ մտաբերեն իրանց անցեալը: Նրանք այժմ սողում են մի որ եւ իցէ ջուանշիրցու առջեւ, որը իր խորամանկութեամբ խաբելով մեր վարանդացուն<sup>1</sup>, բարձրացաւ այն անմատչելի ժայռի վրայ, այնտեղ բերդ հիմնեց, եւ այնտեղից, ինչպէս որ կամենում է, մեր քթին է խփում<sup>2</sup>...

<sup>1</sup> Թալիչի մելիքը, «վարանդացի» ասելով, ակնարկում է Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարեանին, որը օգնեց Փանահ-խանին հիմնելու Շուշի բերդը: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Շուշի բերդի կառուցումը մեծ հարուած տուեց հայոց մելիքներին եւ գրա հակառակ, ամրացրեց Փանահ-խանի զօրութիւնը: Թէև որքան անառիկ էր այդ սոսկալի բերդը, բաւական է յիշել այն, որ 1795 թուին պարսկաց Աղա-Մամադ-շահը իր ահագին զօրութեամբ երկար ժամանակ մնաց նրա պարիսպների մօտ եւ չկարողացաւ տիրել: (Տես «Խսամայի Մելիքութիւնները» XXIX գլ. 141—143 եր.:) Դարձեալ 1826 թուին, պարսկաց թագաժառանդ Աբաս-Միրզան 80.000 զորքով պաշարեց այդ բերդը եւ չկարողացաւ գրաւել, թէեւ բերդը պաշտպանուելու համար ունէր խիստ չնշին թուով զինուորներ: Տես մեր «Խսամայի Մելիքութիւնները», գրքի XLI գլ. 254—257 եւ հետեւեալ երեսները: Ծան. թարգ.:

— Այս, եւ մենք ամենքս ողբան յիմար էինք, որ չմտածեցինք արգելել այդ անմատչելի բերդի կառուցումը, որը նրան նպաստում է Ղարաբաղին տիրելու<sup>3</sup>:

— Այդ բոլորի պատճառը մեր ներքին երկպառակութիւններն են: Եթէ մենք միշտ միմեանց հետ կապուած լինէինք, ինչպէս մեր նախնիքը հին ժամանակներում կամ Շահ-Աբասի օրերում, այն ժամանակ այդ ջուանշիրցին մտածել անգամ չէր համարձակուի՝ լինել Ղարաբաղի իշխողը: Բայց մենք բոլորս, Խսամայի հինգ փոքրիկ իշխանութիւններս, — որոնք հայոց հոչակաւոր թագաւորութեան վերջին մնացորդն են, — սկսեցինք անդադար միմեանց հետ վիճել, միմեանց հետ կռուել, եւ ամեն մի յիմար բանի վրայ, ամեն մի չնչին հարցի պատճառով սկսեցինք միմեանց հետ պատերազմել: Եւ ի՞նչ եղաւ մեր ներքին կուների արդիւնքը, — այն, որ շահեցինք մեզ վրայ մի օտար հրամայու...

Այդ միջոցին ներս մտաւ մի նօքար, յայտնեց, թէ Փանահ-խանի կողմից եկել է մի դեսպան, կամենում է ներկայանալ:

— Լսում ես, Յուսէին, ասաց Թալիշի իշխանը, — այդ գեսպանութիւնը լաւ բան չէ նախագուշակում: Ես պատրաստ եմ մարջ բռնել<sup>2</sup>, որ Փանահ-խանը պահանջում է, որ մենք Ճանաչնք նրան որպէս մեր թագաւոր:

<sup>1</sup> Քանի որ Խսամայի մելիքները միաբան էին, քանի որ նրանց մէջ տիրում էր սէր եւ սէրտ դանակցութիւն, Փանահ-խանը չամարձակուեցաւ Ղարաբաղում իր համար բերդ հիմնել: Թէեւ նա փորձ փորձեց հիմնել Բայաթ եւ Ասկարանի բերդերը, բայց հայոց Մելիքները միանալով, երկուսն էլ ոչնչացրին: (Տես «Խսամայի մելիքութիւնները» գրքի IX գլ. 48 եւ 49 եր.:) Իսկ Շուշի բերդի կառուցանելը արգելել չկարողացան, որով հետեւ այդ ձեռնարկութեան մէջ խանի հետ միացած էր իրանցից մէկը — Մելիք-Շահնազարեանը: Ծան. թարգ.:

<sup>2</sup> Մարջ բռնել, նշ. գրազ գալ, որի դержատ: Ծան. թարգ.:

— Աւելի հեշտ է, որ արեգակը մայր մտնի կէս գիշերին, իսկ լուսինը կէսօրին, քանի թէ մենք այս աստիւ ձան կը ստորացնէինք մեղ, ասաց Յուսէինը տհաճութեամբ:

— Բայց միթէ նա թոյլ կը տայ իրան մի այդպիսի լըբութիւն. դա արդէն չափը անցնում է եւ մինչեւ անգամ աներեւակայելի է:

— Հիմայ կը տեսնես, ասաց մելիքը եւ հրամայեց ներս թողնել դեսպանին:

— Թող Աստուած օրհնէ, գեղազարդէ եւ երկարացնէ թալիշի մեծազօր իշխանի օրերը, եւ թող սփռէ նրա վրայ բախտաւորութեան պարգեւները, եւ թող բազմացնէ նրա փառքի եւ բարօրութեան շնորհները: Աղերսում եմ ներողամիտ գտնուել դէպի մեծն Փանահ-խանի ստրուկը, որը յանդգնում է ներկայացնել ձեզ իր տիրոջ նամակը: Այդ խօսքերով մօտեցաւ աստղագէտը եւ տուեց մելիքին Ղարաբաղի նոր տիրապետողի թուղթը:

Մելիքը ոչինչ չպատասխանեց աստղագէտի ձառախօսութեանը, լուսթեամբ ընդունեց նամակը, որը ծրարած էր մետաքսեայ թանկագին կերպասի մէջ: Նամակի ընթերցանութեան միջոցին մելիքի դէմքի վրայ կարելի էր նկատել բարկութիւն, կատաղութիւն եւ զզուանք: Բայց մտածելով, որ Փանահ-խանի իշխանութիւնը արդէն բաւական հաստատուած է, եւ թէ միայն թալիշի մելիքութիւնը չէ կարող ընդդիմանալ ամբողջ Ղարաբաղին նա չափաւորեց իր վըդովմունքը, պատասխանելով աստղագէտին:

— Դու կարող ես ասել Փանահ-խանին, որ ես հաճութեամբ կը կատարէի նրա ցանկութիւնը (եւ ոչ թէ հրամանը), բայց չեմ կարող, որովհետեւ նա ինքը գիտէ, որ ջումշուղը սպանուած է կոռուի մէջ: Իսկ թէ որտեղ

է գտնվում Սալիհան, ես չդիտեմ: Ուրեմն ինձանից կախուած չէ նրան բաւականութիւն տալը...

— Ի՞նչ բան է, ընդմիջեց Յուսէինը տաքացած կերպով. — Նա համարձակվում է պահանջել, որ մենք տանք ջումշուղին ու Սալիհային եւ ի՞նչ իրաւունքով: Եւ ի՞նչ մի աղա է դարձել մեր գլխին այդ Փանահ-խանը...

— Յուսէին... ասաց մելիքը, խորհրդաւոր կերպով նայելով նրա վրայ:

— Ես չեմ կարող լինել ստրուկ մի օտարականի, շարունակեց դիւրաբորք երիտասարդը, — ցցց տուեցէք, ի՞նչ է գրել նա:

— Եթէ դու քեզ հանգիստ կը պահես, ես կը տամ քեզ նամակը...

— Ես այսպէս էլ հանգիստ եմ, հայրիկ:

Նա վեր առեց նամակը, սկսեց կարդալ: Ամեն մի տողեց յետոյ բարկութիւնը աւելի եւ աւելի սկսվում էր նկարուել երիտասարդ մելիքի դէմքի վրայ: Վերջը զայրացած կերպով տրորեց նամակը իր ձեռքի մէջ, եւ կատաղութիւնից խեղդուող ձայնով ասաց աստղագէտին.

— Թշուառական, դու խմանում ես այստեղ ի՞նչ է գրած:

— Ոչ, մելիք:

— Ծշմարիտ ես ասում, երդուիր...

— Երդվում եմ իմ նախնեաց ստուելներով, երդվում եմ իմ մօրուքով, որ չունեմ ամենափոքր տեղեկութիւն անգամ, թէ ի՞նչ է գրած այդ նամակի մէջ:

— Լաւ: Վեր առ, կուլ տուր այդ ցնորաբան նամակը եւ ասա քո Փանահ-խանին, որ նա այդ աշխարհի խեղագարներից ամենամեծ խեղագարն է, եւ մինչեւ անգամ աւելի մեծ, քան թէ խենթութեան հայրը:

- Այդ ի՞նչ ես անում, Յուսէին, մտածի՞ր...
- Մի՛թէ, հայրիկ, դուք թոյլ էք տալիս մի որ  
եւ իցէ օտարականին հայհոյել մեզ։ Ոչ, քանի գեռ  
կենդանի եմ ես, թոյլ չեմ տայ մինչ այդ աստիճան...
- Դէ, մելիք... ասաց աստղագէտը։
- Լուռ կաց, եւ կատարի՛ր, ինչ որ քեզ հրա-  
մայում եմ, աղաղակեց Յուսէինը, եւ տեսնելով որ աստ-  
ղագէտը ուշանում է, խլեց նրա օձիքից, սեղմեց պատի  
վրայ, եւ մի ձեռքով բռնելով խէնջարը, միւսով Փանահ-  
խանի նամակը, որոտաց կատաղութեամբ։
- Ընտրի՛ր, որը կամենում ես. կամ պիտի կուլ  
տաս այդ ժպիրհ նամակը եւ պիտի ասես իմ կողմից  
Փանահ-խանին, որ նա ամենամեծ խելագարն է, կամ  
այս րոպէիս քեզ կուղարկեմ միւս աշխարհը... Այդ  
խօսքերը ասելով, նա կոխեց նամակը աստղագէտի կոկորդի  
մէջ, որը խեղդուելով աղաղակում էր խնայել իրան։
- Լաւ, առաջ տարաւ Յուսէինը, այդ անպիտան  
նամակը այնքան լի է յիմարութիւններով, որ միանգամից  
ամբողջութեամբ նրան կուլ տալը անկարելի է։
- Նա պատառուեց նամակը, եւ մի քանի կտորներ  
դարձնելով, ասաց.
- Դէ, հիմայ կուլ տուր, թէ չէ, կը սպանուես...
- Աստղագէտը, երկիւղեց գողդողարով, հնաղանդուե-  
ցաւ։ Յուսէինը չեռացաւ նրանից, մինչեւ խեղճ գես-  
պանը կուլ չտուեց թղթի վերջին պատառը<sup>1</sup>։
- Հիմայ զնա՞, ասաց Յուսէինը ժպտալով, — եւ  
պատասխանը տա՞ր քո Փանահ-խանին։

<sup>1</sup> Պատմական անցք է։ Ծան. հեղ.։

Այդ պատմական անցքի մանրամասները տես մեր «Խամսայի Մելի-  
քութիւնները», գլուխ XII գլ. 64 եր.։ Ծան. թարգ.։

Մելիքը ցաւելով տեսնում էր, որ որդու վըդով-  
մունքը դարձրեց պատերազմը իր եւ Փանահ-խանի մէջ  
անխուսափելի։ Բայց ի՞նչ պէտք էր արած, նա չէր կարող  
իրան ստորացնել թշնամու գեսպանի մօտ. մի այդպիսի  
վարմունք կը հրաւիրէր հօր վրայ որդու զգուանքը, մի  
որդու, որը այնքան թանկագին էր հօր համար։

Աստղագէտը հեռացաւ սասափիկ վշտացած իր կրած  
վերաւորանքի համար։ Վրէժինդրութեան դառնութիւնը  
բորբոքվում էր նրա սրտում։ Հէնց նցն օրուայ գիշերային  
պահուն, նա վստահացաւ մուրացկանի հագուստով մտնել  
Զէյվայ, եւ կարողացաւ խօսակցութեան մէջ գրաւել  
թալիշի մելիքի նօքարներին, եւ նրանցից տեղեկացաւ ոչ  
միայն ջումջուդի ու Սալիհայի բանտարկութեան մասին,  
այլ եւ այն տեղի մասին, ուր նրանք կալանաւորուած էին։  
Նա անցաւ այն աշտարակի մօտից, որտեղ բանտարկուած  
էին նրանք. աչքերով չափեց բարձրութիւնը, քննեց պա-  
րիսպների ամրութիւնը, եւ ցաւելով համոզուեցաւ, որ  
մի մարդու ջանքը բաւական չէր լինելու նրանց ազատելու  
համար։ Բայց կամենալով միիթարել նրանց, նա բարձր  
ձայնով ասաց. «Շուտով կը հասնի ձեր ազատութեան  
րոպէն։ յօս դրեցէք աստղագէտ հասանի խօսքի վրայ։»  
Այդ խօսքերը առողջարար բալասանի ազգեցութիւն ունե-  
ցան անբախտ գերիների սրտերի վրայ։ Այդ ասելուց յե-  
տոյ աստղագէտը սկսեց ամենայն արագութեամբ վերա-  
դառնալ գէպի Շուշի։

## X.

Զէյվայի գրաւումը — Յուսէինի մահը։

Փանահ-խանը, տեղեկութիւն ստանալով այն վե-  
րաւորանքի մասին, որով անպատուել էին նրա գեսպա-

նին, վճռեց շուտով խոնարհեցնել Թաղիշի մելքի հպարտութիւնը: Դիրանով կամենում էր նա եւ ուրիշներին օրինակ ցոյց տալ, թէ անկարելի է վշտացնել Ղարաբաղի նոր իշխողին եւ անպատիժ մնալ: Նա հրամայեց իր իշխանութեան ներքոյ գտնուող ցեղերին եւ մելիքներին, որ զէնքի կոչեն բաւականաշափ զինուորներ: Վարանդայի իշխանը սաստիկ ուրախացաւ, երբ իմացաւ, որ նրա սիրելի եղօրորդին կենդանի է: Նա հաւատացած էր, որ Փանահ-խանի պատերազմելու զինաւոր նպատակն այն էր, որ ազատէ ջումշուղին գերութիւնից: Եւ այդ պատճառով, նա առաջինը եղաւ, որ իր զօրքերով յայտնուեցաւ Շուշի բերդում: Եւ այդպէս, գումարուելով աւելի քան տասն հազար հոգի, Փանահ-խանը արշաւեց դէպի Զէյվայ:

Թշնամին խիստ զօրաւոր էր: Այսուամենայնիւ, Թաղիշի մելքը, որքան իրանից կախուած էր, գործ էր զնում բոլոր հնարները, որպէս զի յաջողութեամբ կարողանայ ընդդիմադրել թշնամուն: Թէ եւ նա յաղթութեան վրայ մեծ յոյս չունէր, որովհետեւ երկու կողմերի ուժերի չափազանց անհաւասարութիւնը արդէն նախագուշակում էր նրա պարտութիւնը: Նա, որքան կարելի էր, ամրացրեց իր բերդը Զէյվայի մէջ, բայց փոքր ինչ առաջ ջումշուդի ձեռքով աւերակ դարձած քաղաքը կրկին նորոգելու ժամանակ չունեցաւ: Բնակիչների մի մասը ամրացաւ բերդի մէջ, իսկ մնացած բոլորը, որոնք զէնք կրելու վարժ էին, պէտք է դուրս գային կուռի դաշը: Իր չորս հազար հոգուց բազկացած զօրքից հազարը նա թողեց ամրոցը պահպաննելու համար, իր որդի Յուսէինի առաջնորդութեամբ: Իսկ ինքը մնացած երեք հազարով դուրս եկաւ թշնամու հանդէպ, որը թուով եռապատիկ աւելի էր: Երկու կողմերի զօրքերն եւս հանդիպեցին միմեանց Թարթար գետի

ափերի մօտ: Սկսուեց արիւնահեղ կուիւը: Երկար երկու կողմերն եւս պատերազմում էին միանման կատաղութեամբ: Փրփրագէզ Թարթարի սրբնթաց ջրերը ներկուեցան արիւնով. եւ երկրի ամեն մի քայլը նշանաւոր դարձաւ քաջութեան եւ արիւթեան հրաշալի անցքերով: Վերջապէս գիշերային խաւարը բաժանեց պատերազմողներին:

Աւելի մեծ էր կորուստը Փանահ-խանի զօրքերի մէջ. բայց դա այնքան զգալի չէր, որքան թաղիշեցի զօրքերի կորուստը: Շուշիի խանի զօրքերից գեռ մնացել էին վեց հազար հոգի, որ կարող էին շարունակել կոփւը, բայց մելքի զօրքերից մնացել էին միայն ութ հարիւր հոգի: Զանազանութիւնը սարսափելի էր:

Մելքը, օգուտ քաղելով գիշերային խաւարից, թուեց իր բռնած գիրքը եւ շտապով յետ քաշուեցաւ դէպի Զէյվայ: Նա պարզ տեսնում էր, որ եթէ սկսելու լինի երկրորդ ճակատամարտը, իզուր կը կորցնէ իր զօրքերի մնացորդը: Իսկ եթէ նրանց միացնելու լինի Յուսէինի զօրախմբի հետ եւ պատսպարուի ամրոցի պարիսպների մէջ, այն ժամանակ աւելի հեշտ կարող կը լինի պաշտպանուել Փանահ-խանի յարձակումների դէմ:

Ղարաբաղի նոր խանը միւս օրուայ առաւօտեան պահուն նկատեց իր թշնամիների տեղի տալը, եւ առանց ժամանակ կորցնելու, մօտեցաւ Զէյվայի ամրոցին, եւ ամեն կողմից խիստ անձուկ կերպով պաշարեց նրան:

Սկզբում պաշարուածները իրանց ամրոցի պարիսպների բարձրութիւնից ծիծաղում էին Փանահ-խանի զօրութեան վրայ, որը միայն իր լուսութեամբն էր պատասխանում նրանց յարձակումներին, եւ վճռել էր սովով ստիպել նրանց անձնատուր լինելու: Շուտով մարդկու-

թեան այդ անողում պատուհասը տարածուեցաւ թալի-  
շեցիների մէջ։ Նրանք զգացին իրանց դրութեան բոլոր  
զարհուրանքը եւ սկսեցին ստիպել մելքին, որ անձնա-  
տուր լինի։ Յուսէինը լսելով ժողովրդի տրտունջը, եւ  
հասկանալով, թէ որպիսի դժբախտութիւն էր սպառնում  
իրանց, ցանկացաւ գնալ Փանահ-խանի մօտ, հաշտու-  
թեան պայմանների վրայ խօսելու համար։

— Ես եմ եղել այդ պատերազմի պատճառը, ասաց  
աներկիւղ երիտասարդը, — նյոնպէս ես պէտք է աշխա-  
տեմ վերջ տալու նրան։

Ամրոցի պարիսպների վրայից թոյլտուութիւն ինդրե-  
ցին Փանահ-խանից, թէ ուղարկվում է նրա մօտ մի  
պատուիրակ խօսակցելու համար։ Մելքը դառնացած  
սրտով իրաւունք տուեց Յուսէինին գնալ թշնամու բա-  
նակը։ Մի առանձին նախազգացութիւն, կարծես, ազդում  
էր հօրը, թէ այլ եւս չի տեսնի սիրելի որդուն։

Յուսէինը ներկայացաւ Ղարաբաղի իշխողի առաջ մի  
այնպիսի յանդուդն վստահութեամբ, որը ցոյց էր տալիս,  
որ նա արդէն կանխապէս վճռել էր կատարելու մի նշա-  
նաւոր դիտաւորութիւն։ Հպարտ կերպով զլուս տալով,  
ասաց նա։

— Փանահ-խան, ի՞նչ իրաւունքով դու եկել ես  
վրդովեցնել հանգստութիւնը մի իշխանի, որը երբէք վի-  
րաւորած չէ քեզ, որին դու, դեռ ես չձանաչած, ինքդ  
վիրաւորեցիր, պահանջելով նրանից հպատակութիւն։  
Անյայտ չէ նյոնպէս, թէ ես ի՞նչ իրաւունքով վիրաւո-  
րեցի քո դեսպանին, որովհետեւ չկարողացայ համբերել  
քո անարդարութեանը։ Խօսի՛ր, այժմ ի՞նչ հատուցում  
ես պահանջում դու։ Ես կանգնած եմ քո առջեւ, բայց  
հանգիստ թող իմ հօրը եւ ձեռնամուխ մի լինիր նրա

գործերի մէջ։ Մեր նախնիքը արդէն մի քանի դարեր մե-  
լիքներ էին եւ այդ կողմերի տիրապետողներն էին, ուրեմն  
դու պատճառներ չունես տարածելու քո պահանջները  
մեր երկրի վրայ։ Դու կարող ես լինել մեր դաշնակիցը,  
իսկ մեր հրամանատարը՝ — երբէք։

— Յուսէին, պատասխանեց Փանահ-խանը, — յար-  
գելով քո հաստատամութիւնը եւ քո քաջութիւնը,  
ես ներում եմ քո վարմունքը իմ դեսպանի վերաբերու-  
թեամբ, ներում եմ քո յանդուզն խօսքերին։ Բայց իմա-  
ցիր, որ Խամնայի միւս մելքները, որոնք իրանց արժա-  
նաւորութիւններով ձեզանից պակաս չեն, վաղուց արդէն  
ընդունել են իմ հպատակութիւնը։ Այժմ Ղարաբաղը  
ունի իմ անձնաւորութեան մէջ մի տէր, որը աշխատում  
է ոչչացնել բոլոր երկապառակութիւնները, որը ցանկանում  
է իր իշխանութեան ներքոյ գտնուող ժողովրդին տալ  
բարօրութիւն։ Հպատակեցէք եւ դուք։ Զեր իշխողը ցոյց  
կը տայ ձեզ իր մեծահոգութիւնը։

— Մի որ եւ իցէ օտարական մեծահոգութիւն պիտի  
ցոյց տայ այն ամենահին տոհմերին, որ եղել են այդ  
երկրների տիրապետողները։ Դա արդէն խիստ ծիծաղելի  
է, Փանահ-խան։ Միթէ դու չես հասկանում, թէ ինչ  
ես խօսում։

— Յուսէին, պատասխանեց Փանահ-խանը, — դու  
պահանջեցիր խօսակցել ինձ հետ գործի վրայ։ Ի՞նչ պէտք  
է ի զուր խօսքեր վատնել։ Ես գիտեմ արհամարհել վի-  
րաւորանքները . . .

— Իմ առաջարկութիւնը յայտնեցի հենց մեր խօ-  
սակցութեան սկզբից։ Ես մեղաւոր չեմ, որ դու չհասկա-  
ցար։ Բայց դու, որպէս ես տեսնում եմ, դիտմամբ չես  
ցանկանում հասկանալ ինձ։ Եւ ձգտում ես դառնալ իշ-

խող նրանց, որոնք ամենեւին չեն ցանկանում քեզ հնագանդուել:

— Ես կը հարկադրեմ նրանց: Կը տեսնենք, կարմղեն արդեօք դիմանալ նրանք դեռ եւս երկար ժամանակ առանց մնունդի: Իսկ ես վճռել եմ ամենեւին չհռանալ այստեղից մինչեւ դուք չհնազանդուէք ինձ:

— Ուրեմն դու ոչինչի տեղ ես դնում սովի մահով կորցնել մի քանի հազար զոհեր, նրա համար միայն, որ նրանք չեն համաձայնվում ընդունել քեզ այնպէս, ինչ որ դու երբէք չես եղել, այսինքն՝ իրանց վրայ — իշխող:

— Դու կը լինի քո վերջին խօսքը: Ես չեմ կամենում երկար լսել քեզ: Գնա՞ ես կարող եմ հնարդանել, որ ստիպեմ քեզ եւ բոլոր թալիշեցիներին հպատակելու ինձ:

— Ի՞նձ, գոչեց Յուսէինը լի վրդովմունքով: — Կրկնի՞ր այդ խօսքը:

— Այո, քեզ, դրանում ինչ մի զարմանալիքան կայ:

Այդ խօսքերի միջոցին Յուսէինը մերկացրեց իր խէնջարը, եւ կայծակի արագութեամբ յարձակուելով Փանահ-խանի վրայ, աղաղակեց. — Մեռիր, չարագործ...

Փանահ-խանը, որպէս սառնասիրտ մարդ ամեն դէպքերում, կանխապէս նկատելով աներկիւղ երիտասարդի յանդուգն դիտաւորութիւնը, խոյս տուեց նրա հարուածից եւ ազատուեցաւ: Յետոյ հրամայեց նա իր թիկնասահներին բռնել Յուսէինին: Բայց նա, չկամենալով կենդանի մնալ եւ ականատես լինել իր փառքի եւ հայրենական ազատութեան ոչնչանալուն, ինքն իր խէնջարը ցցեց իր կուրծքի մէջ եւ ընկաւ Փանահ-խանի մօտ: Խանը ապշած մնաց, տեսնելով այդ հերոսական վարմունքը:

— Հիմայ բոլորը քեզ է պատկանում, Փանահ-խան, եւ տացէ Աստուած, որ զարարաղցիք մի ժամանակ չզջային իրանց սև ալների համար... Արտասանելով այդ խօսքերը, նա աւանդեց հոգին:

Երբ որ նրա մահուան բօթը տարածուեցաւ Զէյվայի մէջ, հէնց նոյն բոպէում բացուեցան ամրոցի դռները Փանահ-խանի առջեւ:

## XI.

Փանահ-խանը դառնում է ղարաբաղի խան:

Թալիշի մելիքը հանդիպեց Փանահ-խանին խոնարհութեամբ, եւ ընդունելով իր վրայ նրա բարձր իշխանութիւնը, մի եւ նոյն ժամանակ մնաց հաստատ թէ իր մելիքութեան աստիճանի մէջ եւ թէ իր երկրի տիրապետութեան մէջ, որպէս էր առաջ: Զկամենալով, որ յաղթողը տեսնէ, թէ որպիսի բանտում կամ որպիսի տաժանական դրութեան մէջ տանջվում էին ջումշուդը եւ Սալիշան, մելիքը շնորհեց նրանց ազատութիւն նախ քան ամրոցի դռների բացուիլը Փանահ-խանի առջեւ: Անբախտ երիտասարդները խկոյն հրձուանկով միմեանց գիրկը նետուեցան եւ նոյն բոպէի քաղցրութեան մէջ մոռացան բոլոր նեղութիւնները, որ կը ել էին: Նրանք ներեցին իրանց թշնամիներին, եւ մտնելով մի նոր եւ աւելի երջանիկ կեանքի մէջ, աբդէն երկրի վրայ զգում էին երկնային ամենաբարձր երանութիւն:

Երբ որ բացուեցան ամրոցի դռները, նրանք ընկան, իրանց հօրեղեօր գիրկը, որը նրանց տեսնելով, ուրախութեան սաստկութիւնից չկարողացաւ զսպել իր արտասուքը: Բայց որպիսի դառն զգացմունք միացաւ նրա բերկութեան զգացմունքի հետ, երբ տեսաւ նրան կրած

տանջանքների հետքերը, որոնց տպաւորութիւնը խիստ որոշ գծերով նկարուած էր երկու մանկահասակ ամռա-սինների գէմքի վրայ։ Փանահ-խանը վախենարով, մի գուցէ Թալիշի մելքի բարբարոսական վարմունքը իր եր-կու պատուաւոր գերիների վերաբերութեամբ կրկին նորո-գէր նրա եւ Վարանդայի մելքի մէջ արդէն դադարած երկպառակութիւնը, — ամեն միջոցներով աշխատում էր, որ հանգստացնէ Վարանդայի մելքին, մոռանալ տա-լով նրան հին անախորժութիւնների յիշատակները։

— Մոռանանք, մելք, բոլոր անցեալը, ասում էր նա, — եւ գոհ լինելով ներկայից, դադարեցնենք այն երկպառակութիւնները, որոնք այնքան երկար ժամանակ խռովութեան մէջ էին պահել Ղարաբաղը։ Զեր եղօ-րորդին, որ ձեր գիրկը վերադառնալով այժմ վայելում է ձեր սէրը, փառքի արժանի կերպով համբերեց բոլոր փորձանքներին, որոնց ճակատագիրը կամեցել էր առաքել նրան։ Բայց աւելի եւս զարմանում եմ ես նրա մանկա-հասակ ամռամի վրայ։ Այդ Սալիհան մի կենդանի օրի-նակ է հաստատամութեան, տոկունութեան եւ արիու-թեան, որի նմանը շատ դժուար է գտնել։ Ես կ'աշխա-տեմ, որ դրանից յետոյ այդ երկու սիրարժան երիտա-սարդները այլ եւս դառնութիւններ չկրէին։

Մելքը շնորհակալութիւն յայտնեց Փանահ-խանին, որը շուտով վերադարձաւ Շուշի բերդը, հրաւիրելով այնտեղ Վարանդայի իշխանին եւ ջումշուդին իր կնոջ հետ։

Շքեղ ինջոքներով զուարձանում էին նրանք Ղա-րաբաղի իշխողի նոր տան մէջ, որ կանգնած էր սեպացած ժայռի եղբի վրայ, իսկ նրա ստորոտը քերելով, եւ ահա-գին քարերին զարկուելով, արագութեամբ վագում էր

լեռնային գետը։ Բայց նրա որոտալից ձայնը միայն թոյլ կերպով համառում էր Փանահ-խանի հիւրերի ականջին, որովհետեւ գտնվում էին ահագին բարձրութեան վրայ։

Մի օր Փանահ-խանը, կամենալով իմանալ Վարան-դայի իշխանի կարծիքը գործերի նոր դրութեան վերաբե-րութեամբ, ասաց։

— Խոստովանուեցէք, մելք, որ սկսեալ այն ժա-մանակից, քանի որ ես տիրում եմ Շուշի բերդին, Ղա-րաբաղը հանգստացաւ անդադար խռովութիւններից։ Տես-նում էր, թէ որքան օգուտներ են բովանդակվում միա-պետութեան մէջ։

— Միապետութեան մէջ։ Ուրեմն դուք ցանկա-նում էք լինել Ղարաբաղի ընդհանուր կառավարիչ։

— Անկասկած, միթէ դուք չէք տեսնում, մելք, որ այդ արդէն կատարուած իրողութիւն է։ Եւ դուք ձեր կողմից նոյնպէս կարող էք պարծենալ մի այսպիսի անցքի համար, որովհետեւ, խակապէս դուք եղաք իմ բարձրա-նալու գլխաւոր պատճառը եւ հասցրիք ինձ Ղարաբաղի խանի աստիճանի։ Եւ ես հաւատացած եմ, մելք, որ դուք, յարգելով Ղարաբաղի խաղաղութիւնը, չէք հրա-ժարուի Ճանաչել ինձ այդ կոչման մէջ։

— Դուք, երեւի, կատակ էք անում, Փանահ-խան, միթէ դուք մոռացել էք, որ խոստացաք կառուցանել Շուշի բերդը մեր երկուսի ապահովութեան համար։

— Այս, ես յիշում եմ այդ։ Բայց հանգամանք-ները փոխուեցան, մելք։ Այն ժամանակ ես մտածում էի միայն նրա վրայ, թէ ինչպէս պէտք է ապահովացնել ինձ եւ ձեզ թշնամիների յանկարծակի յարձակումներից, իսկ այժմ ներկայացաւ խիստ ընդարձակ ասպարեզ, այն է հնազանդացնել եւ խաղաղացնել ամբողջ Ղարաբաղը։

Ես ճանաչում եմ, մելիք, ձեր խոհեմութիւնը, եւ հաւատացած եմ, որ դուք չեք ցանկանայ նորոգել այդ գեղեցիկ երկրների գժբախտութիւնը, որոնք հազիւ թէ դեռ նոր սկսել են շունչ առնել եօթնամեայ ծանր պատերազմներից<sup>1:</sup>

— Հսեցէք, Փանահ-խան, ինձ երեւում է, որ դուք պահանջում եք, որ ես ճանաչեմ ինձ ձեր հպատակ:

— Ո՞չ, մելիք, դուք սիսալ էք հասկանում: Ես կամենում եմ, որ դուք միայն առ երես ցոյց տաք ուրիշների առջեւ, թէ հնազանդվում էք իմ հրամաններին, որովհետեւ, այն ժամանակ միւսները ձեզանից օրինակ կառնեն: Բացի դրանից, ես կ'ասեմ ձեզ, մելիք, ով որ չի ցանկանայ հնազանդուել ինձ, ես վճռել եմ ուժով ստիպել, — հէնց իրանց սեպհական շահերի համար . . .

— Հասկանում եմ. . . դուք կը դարձնէք եւ իմ դէմ ձեր զէնքը, երբ որ ես ձեզ լսելու չլինեմ:

— Ո՞չ, մելիք, ես դիտեմ, որ դուք ձեզ չեք հասցնի մինչ այդ աստիճան ծայրայեղութեան:

— Իսկ եթէ կը հասցնեմ: Բայց էլ ի՞նչ խօսել կ'ուզէ: Չեր նպատակն այն է, որ լինէք Ղարաբաղի լիազօր խանը, եւ մեզ, այդ երկրի վաղեմի տիրապետողներիս, ստիպէք, որ պար գանք ձեր դուդուկի համեմատ . . .: Հիմայ մեզ պէտք է հնազանդուել ձեր կամքին, որովհետեւ մենք ինքներս պատճառ դարձանք մեր անկմանը, բայց կարելի է մի ժամանակ . . .

<sup>1</sup> Եթն ամեայ պատերազմ: Հայոց մելիքները Փանահ-խանի հետ խսկապէս 16 տարի կռիւներ են ունեցել, այսինքն 1747 թուից մինչև 1763 թուականը, միայն երբեմն հաշտուել են, երբեմն կարճ ժամանակով զինադադար է եղել: Ծան. թարգ.:

Փանահ-խանը, կամենալով ուրիշ ուղղութիւն տալ իրանց խօսակցութեանը, որ արդէն սկսել էր թշնամական ձեւ ստանալ, հարցրեց:

— Դուք հաւատո՞ւմ էք աստղաբաշխութեան, մելիք:

— Հաւատում եմ. ինչպէս կարելի է չհաւատալ:

— Դուք այլ եւս բարկացած չեք այն աստղագէտի վրայ, որը առաջ ծառայում էր ձեզ մօտ, իսկ այժմ ծառայում է ինձ մօտ:

— Ոչ, բարկացած չեմ. նա մեզ համար շատ օգտակար է եղել:

— Ուրեմն մենք կը կանչենք նրան եւ կը հրամայենք, որ գուշակութիւններ անէ Ղարաբաղի ապագայ վիճակի մասին:

— Մեծ ուրախութեամբ:

Փանահ-խանը հրամայեց իր նօքարներին, որ կանչեն աստղագէտին: Նա ներս մտաւ, ողջունելով արեւելեան չափազանց պերճախօսութեամբ: Հսելով Փանահ-խանի հրամանը, նա մի առանձին ջանքով սկսեց կատարել իր աստղաբաշխական գործողութիւնները: Նրա դէմքի վրայ այնքան կենդանի կերպով արտայայտվում էին նրան տիրող բոլոր զգացումները, որ մելիքը անհամերութեամբ եւ մի եւ նոյն ժամանակ մի առանձին սարսափով սպասում էր աստղաբաշխի մարգարեական ձայնին: Փանահ-խանը խորին զուարձութեամբ նկատում էր մելիքի պատի մի այսպիսի տրամադրութիւնը, որի հետ դեռ եւս չեր կամենում թշնամանալ, եւ սպասում էր աստղագէտի պատասխանին:

Այդ վերջինը, նստած տեղից կանգնելով, եւ աչքերը դէպի երկինք դարձնելով, խօսեց հանդիսաւոր կերպով.

— Ղարաբաղի հրամանատարի աստղը գտնվում է իր լիակատար ծագման մէջ . . . Նա փայլում է պայծառ կերպով եւ նրա բարերար ազդեցութեան ներքոյ բախտաւորութիւն է վայելում ամբողջ երկիրը, սկսեալ նրասխից մինչեւ Գանձակի սահմանը . . . Նրա ապագայ սերունդը տիրապետում է այդ երկիրն, եւ վայ նրանց, որոնք կը յանդգնին չճնազանդուել նրա իշխանութեանը եւ չեն ընդունի նրա ապագայ ժառանգներին . . . Ի՞նչ եմ տեսնում ես . . . ինչ որ խելագարներ ապրատամբվում են երկնքի սիրելի դէմ . . . գնում են, հպարտացած իրանց ոչնչութեամբ . . . բայց երկար կը տեւէ նրանց յաղթանակը, այդ խարուսիկ յաղթանակը . . . Անմատչելի Շուշի վրայ հաւաքուեցան սպառնալից, մթին ամպեր . . . Որոտման սարսափելի հարուածը աշագին բոմբիւններով դղբեց լեռների հիմքը . . . Կայծակը գալարուեցաւ ստահանների շուրջը եւ նրանք շառաչմամբ զլորուեցան անյատակ անդունդի մէջ . . . : Պայծառ ձանանչներով փայլում է պսակը Ղարաբաղի հրամանատարի զինի վրայ . . . բոլոր հակառակորդները ոչնչանում են նրա առջեւ . . .

Ղարանդայի իշխանը մտածութիւնների մէջ ընկաւ . . . մի քանի րոպէ տիրեց լուութիւնը: Վերջը ասաց նա.

— Ես չեմ կամենում հակառակել Ճակատագրի կամքի դէմ: Ընդունում եմ Ղարաբաղի հրամանատարին իբրեւ իմ հրամանատար, եւ թող չքանան երկառակութիւնները, որոնք ալեկոծում էին Ղարաբաղը պնդան ժամանակ . . .

— Իսկ ես իմ կողմից խոստանում եմ, ասաց Փանահ-խանը, — միշտ համարել Ղարանդայի իշ-

խանին իմ բարեկամ, իսկ նրա թշնամիներին — իմ թշնամիներ:

Երկու բարեկամներն եւս գրկախառնուեցան: — Փառք լինի Ալիխն, ասաց աստղագէտը խորին ըերկութեամբ: — Վերջին մելքը եւս հնազանդուեցաւ: Եւ Ղարաբաղը, այժմ ունենալով իր ինքնակալ խանին, խաղաղութիւնը նրա մէջ հաստատուեցաւ աւելի ամուր հիմքերի վրայ: Իմ հոգիս լի է ցնծութեամբ, որ իմ կարողութեան չափով նպաստեցի երկու նշանաւոր անցքերի կատարմանը. նախ, անմատչելի Շուշի կառուցմանը, յետոյ խանութեան իշխանութեան հիմնուելուն ամբողջ Ղարաբաղի վրայ . . .



## ՎԵՐՋԱԲԱՆ

Քումշուղը եւ Սալիհան բնակուեցան Զանախչի ամրոցի մէջ։ Նրանց հրձուանքին եւ ուրախութեանը չափ չկար, երբ առաջին անգամ գրկեցին իրանց զաւակներին։ Բայց երկար չփայելեցին նրանց ամուսնական երանաւետ սիրոյ եւ բարեկամութեան երջանկութիւնը։ Սաստիկ ժամանակառ, որ դրացի պարսկական երկներից ներա մտաւ Ղարաբաղ, մի քանի օրուայ մէջ գերեզման տարաւ նազելի Սալիհային եւ նրա երկու զաւակներին։ Քումշուղը չկարողացաւ տանել այդ երրակի կորստեան տրտմութիւնը եւ միացաւ իր սիրելների հետ միւս աւելի լաւ աշխարհում։ Աստղագետը, հրապուրուելով պարսից Շահի խոստմունքներից, աշխատում էր խուզութիւն յարուցանել Ղարաբաղի մէջ եւ տապալել խանին, դրա համար էլ մահուան դատապարտուեցաւ։

Փանահ-խանը իր բարեկամութեամբ երկար չփայփայեց Ղարանդայի մելքին, այլ շուտով սկսեց վարուել նրա հետ գոռող հրամանատարի ձեւով, որը եւ առիթուեց շատ անախորժութիւնների երկուսի մէջ։ Փանահ-խանի որդին եւ ժառանգը, հրբահիմ-խանը, աւելի բռնակալութեամբ սկսեց կառավարել Ղարաբաղը, չը համբերելով ամենափոքր հակառակութեան։ Բայց երբ սկսուեց ժԹ-րդ դարը, երբ Ռուսաստանը տարածեց

տիրապետութիւնը Անդրկովկասում, այդ ժամանակ հրբահիմ-խանը սկզբում ընդունեց իր վրայ Ռուսաստանի բարձր գերիշխանութիւնը, բայց շուտով կրկին խռովութիւններ բարձրացնելով, զրկուեցաւ կեանքից նոյն կռուի մէջ, որ տեղի ունեցաւ այդ գէպքի առիթով։<sup>1</sup> Հրբահիմ-խանին յաջորդ նշանակուեցաւ ռուսաց կառավարութիւնից նրա որդի Մէհտի-Ղուլի-խանը, որը յետոյ հօր նման նոյնպէս դաւաճանեց ռուսներին եւ հեռացաւ, գնաց Պարսկաստան։<sup>2</sup> Այն ժամանակից Ղարաբաղը գարձաւ ռուսաց նահանգ եւ կառավարվում է զինուորական առանձին կօմենդանտի (բերդապահի) ձեռքով։ Շուշի բերդը եւ այժմ համարվում է Ղարաբաղի խանութեան գլխաւոր տեղը։ Բացի կօմենդանտից, այդ բերդում յատկապէս նշանակուած է մի գեներալ, որ կրում է այդպիսի տիտղոս զինուորական-նահանգային գլխաւոր մուսուլմանների գաւառների (Յօհան-օքրյանով պատմութեամբ 1826 թուին, երբ 1500 զինուորներ 42-րդ

<sup>1</sup> Փանահ-խանի որդի Իրբահիմ-խանը ընդունեց ռուսաց հպատակութիւնը։ Բայց երբ 1806 թուին պարսից թագաժառանդ Աբա-Միրզան զօրքերի ահագին բազմութեամբ անցաւ Երասխ գետը եւ մօտեցաւ Շուշի բերդին, այդ ժամանակ Իրբահիմ-խանը, չնայելով, որ ռուսներին հաւատարիմ մնալու երդում էր տուել, գաղանի կերպով թողեց բերդը, գիմեց գէպի պարսից բանակը։ Մէլիք-Շահնազարեան Մէլիք-Զումշուդը (Զումշուդի վեպի հերոսը) այդ իմանալով, իմացում տուեց բերդապահ գնդապետ Լիսանեւիչին, եւ երկուսը միասին հետամուտ լինելով փախստականին, կէս ձանապարհի վրայ բռնեցին Ղարաբաղի բռնակալին եւ սպանեցին։ Տես մեր “Խամայի Մէլիքութիւնները” գրքի XL գլ. 206-208 եր.. Ծան. թարգ.։

<sup>2</sup> Իրբահիմ-խանի որդի Մէհտի-Ղուլի-խանը իր հօր նման նոյնպէս դաւաճանեց ռուսներին, 1822 թուին փախաւ Պարսկաստան, եւ

եգերեան գունդից, քաջ պօլիկոմիկ (այժմ գեներալ-մայօր) հ. Ա. Ռէուտի հրամանատարութեան ներքոյ, փակուելով յիշեալ բերդում, ընդդիմացան 48-օրուայ պաշարման, պարսից բոլոր զօրքերի դէմ, որ բաղկացած էր 80.000 հոգուց, որոնց անձամբ առաջնորդում էր ինքը՝ պարսից գահի թագաժառանդ Աբաս-Միրզան, որի բոլոր ջանքերը այդ բերդը գրաւելու համար ի զուր անցան։<sup>1</sup>

<sup>1</sup> Առաջնորդելով պարսից թագաժառանդ Աբաս-Միրզային, 1826 թուին զօրքերի ահագին բազմութեամբ յարձակում գործեցին Ղարաբաղի վրայ. Ղարաբաղը այդ ժամանակ ռուսների ձեռքումն էր: Աբաս-Միրզան պաշարեց Շուշի բերդը եւ իր զօրքերի մնացած մասը ռւզարկեց դէպի Գանձակի գաւառը: Նրանք գրաւեցին Գանձակ բերդը եւ անցան մինչեւ Շամբօրի գետը: Այդ ժամանակ ռուսաց զօրքերով վրահասաւ հայազգի իշխան գեներալ Մադաֆօվը, եւ Շամբօր գետի մօտ կատարած փառաւոր յաղթութիւնից յետոյ, պարսիկներին յետ մղեց եւ հալածեց նրանց մինչեւ Երասիսի միւս կողմը: Շուշի բերդը գնդապետ Ռէուտի եւ հայերի ջանքերով դիմացաւ 48 օրուայ պաշարման: Հայերի անձնազոհութիւնը այդ պաշարման միջոցում ամենայն գովասանքի արժանի պէտք է համարել: Տես մեր “Խամսայի Մելիքութիւններ”, գլուխ 256—266 երեսները: Ծան. թարգ.:

“ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱԴԻ,”

ՎԱԽԱՆ Բ-Թ Դ Ե Խ ՎԵՐՋԻՆ ՄԱՍԻ:



59 215